

2816.

3 K 26

U-77

92[ԼԵՆԻՆ]
U-75

Վ. Լ. ԹՈՐԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

1870—1924

ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՑԶՐԱՑ

1931

ՅԵՐԵՎԱՆ

02 AUG 2013

097 26/138

3K26

U-77

ՀԼ. ՍՈՐԻՆ

14 NOV 2009

08 JUN 2005

Վ. Ի. ԼԵՆԻՆ

1870—1924

ՀԱՄԱՌՈՑ ԿՆՆՍՈՑՐՈՒԹՅՈՒՆ

503

(6439)



ՊԵՏԱԿԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

22892-59

ԳԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
 ՀՐԱՏԱՐԱԿ. № 1881
 ԳԼԱՎԼԻՏ 6453 (Բ)
 ՊԱՏՎԵՐ 3149
 ՏԻՐԱԺ 4000

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս համառոտ կենսագրութիւնը սկզբում տպւել է
 Լենինի ինստիտուտի հրատարակութեամբ լույս տես-
 նող՝ Լենինի «Ընտիր յերկերի» առաջին հատորում:
 Առանձին հրատարակութեան մեջ չեղտված են կենսա-
 գրութեան մի քանի կտորները և բացի դրանից՝ մտցված
 են մի շարք լրացումներ, վերջինք վերաբերվում են հատ-
 կապես 1917 թ. շրջանին: Համառոտ բրոշյուրի մեջ
 Լենինի կյանքի և գործունեության բոլոր կողմերը
 տալը, հասկանալի չէ, անիրագործելի խնդիր է: Ըն-
 թերցողների լայն շրջանի համար գրված այս բրոշյու-
 րի նպատակն է՝ միայն սկզբնական գաղափար տալ
 Վլադիմիր Իլյիչի կենսագրության հիմնական փաստե-
 րի մասին: Դրանից ավելին անելու հավակնութիւն
 բրոշյուրը, իհարկէ, չունի:

1930 թ. դեկտեմբերի 15-ին

ՈՒԼՅԱՆՈՎՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ. ՍԻՄԲԻՐՍԿ.
ԿԱԶԱՆ. ՍԱՄԱՐԱ.

Վլադիմիր Իլյիչ Լենինը—հեղափոխական պրոլետարիտաի մեծագույն հանճարը, Մարքսի և Ենգելսի գործը շարունակողը, բայլչեվիկների կուսակցութեան և Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադիրն ու առաջնորդը, հանճարեղ քաղաքագետ, տեսաբանը, տնտեսագետ և փիլիսոփա, ականավոր գրող և հոեւոր—ծընվել է 1870 թ. ապրիլի 22 (10)—ին Վոլգայի Սիմբիրսկ քաղաքում, ժողովրդական դպրոցների տեսուչ Իլիա Նիկայանիչ Ուլյանովի ընտանիքում: Լենինը—Վլադիմիր Իլյիչի դրական կեղծանունն է, վոր առաջին անգամ նա գործ է ածել 1902 թ. սկզբին «Ի՞նչ անել» գրքում: Այդ անունով էլ, վոր դարձել է բոլոր շահագործվողների ու ճնշվածների պայքարի սիմվոլը, Վ. Ի. Ուլյանովը անցավ պատմութեան մեջ:

Լենինի հայրը (ծն. 1831 թ.), վոր ծագում է Աստրախան քաղաքի բնակիչներից, Կաղանի համալսարանն ավարտելուց հետո յերկար ժամանակ մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ է յեղել Պենզայի և Նիժնի-Նովգորոդի միջնակարգ դպրոցներում, հետագայում, 1869 թ. ստացել է Սիմբիրսկի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսչի պաշտոնը, իսկ ամէլի ուշ, 1874 թ. նշանակվում է նույն դպրոցների տեսուչ: Նա մի աչքի ընկնող գործիչ է ժողովրդական լուսավորութեան տարեւելում, ամբողջովին նվիրված իր գործին, և վորպես մանկավարժ ու կաղմակերպիչ՝ մեծ համբավ էր ստացել Վոլգայի շրջանում: Նա մեռել է 1886 թ., յերկր Վլադիմիր Իլյիչը դեռ սովորում էր գիմնազիայում:

Լենինի մայրը—Մարիա Ալեքսանդրովնա Բլանկը (ծն. 1835 թ.), բժշկի աղջիկ էր. և վորովհետեւ հոր միջոցները թույլ չեն տալիս իր աղջկանը լիակատար կրթություն տալու, ուստի նա ամբողջովին նվիրվում է ընտանիքին և զավակներին դաստիարակությանը: Նրա բոլոր վորդիկներն ու աղջիկները, բացառությամբ վաղ մեռած (1891) Ոյլգայի, հեղափոխականներ դուրս չեկան. Ալեքսանդր Իլիչ—նարողովեկեց, Վլադիմիր Իլիչ, Աննա Իլիչնա և Մարիա Իլիչնա—բայլչեկիկներ: Լենինը, վոր Մարիա Ալեքսանդրովնայից ժառանգել էր արտակարգ կամքի ուժ և հաստատ ընավորություն, անսահման նվիրվածությամբ ու քնքույշ հոգատարությամբ էր վերաբերվում իր մորը, վոր շատ վշտեր էր կրել կյանքում: Մարիա Ալեքսանդրովնան մեռել է 1916 թ., խոր ծերության հասակում:

1887 թ., յերբ Վլադիմիր Իլիչը քիչ հետո պիտի ավարտեր Սիմցիրսկի գիմնազիան, Ուլանովների ընտանիքին ծանր դժբախտություն պատահեց: Լենինի մեծ յեղբայր Ալեքսանդրը, հաղիվ 21 տարեկան մի չափազանց ուժեղ յեղբոր, մի խումբ ընկեր—նաբողափոյեցների հետ միասին ձերբակալվեց Պետերբուրգում Ալեքսանդր III-ի վրա մահափորձ նախադատարան տելիս և մահադատութի յենթարկվեց 1887 թ. մայիսի 20 (8)-ին: Իր սիրելի յեղբոր կորուստը խորը տպավորություն դործեց Վլադիմիր Իլիչի վրա և, անկասկած, վորոշակի դեր խաղաց նրա կյանքի ուղին վորոշելու գործում, նպատելով Լենինի ինքնորոշմանը՝ վորպես հեղափոխական:

1887 ամառն ավարտելով Սիմցիրսկի գիմնազիան, վորտեղ նա ընդհանուր ուշադրության էր արժանացել

իր փայլուն ընդունակութուններով (գիմնազիան վլադիմիր Իլիչն ավարտեց վոսկե չքանչանով), Լենինը նույն տարին էլ ընդունվեց Կազանի համալսարանի իւրաքանչեւ ֆակուլտետը: Սակայն համալսարանում Վլադիմիր Իլիչը յերկար չմնաց. համալսարան մտնելուց քիչ հետո Լենինը յեռանդուն մասնակցություն ունեցավ ուսանողական խլրտումների մեջ (1887 թ. դեկտեմբերի 16-ին), ձերբակալվեց, հեռացվեց համալսարանից և մի քանի որից հետո Կազանից արտաքսվեց (40 վերստ հեռու գտնվող Կոկուշկինո գյուղը, վորտեղ գտնվում էր վոստրիկանության գաղտնի հսկողության տակ: Այստեղ Վլադիմիր Իլիչն ապրեց 1888 թ. ձմեռն ու ամառը, շատ կարդալով և ինքնակրթությամբ զբաղվելով: Լենինը թույլտվություն ստացավ Կազան վերադառնալու, ուր տեղափոխվեց նաև Ուլանովների ամբողջ ընտանիքը. սակայն Վլադիմիր Իլիչն դարձյալ համալսարան չընդունվեց: Նմանապես վոստրիկանության ղեկարտամենտը Լենինին թույլ չտվեց արտասահման գնալ՝ ուսումն ավարտելու համար: Կազանում, վորտեղ Լենինն ապրեց մինչեւ 1889 թ. գարունը, նա սկսում է ուսումնասիրել Մարքսի «Կապիտալը» և մտնում է անըզալ մարքսիստական խմբակներից մեկի մեջ: 1889 թ. գարնանը Վլադիմիր Իլիչն անցնում է Սամարայի նահ. Ալակայեվկա գյուղը, վորտեղ Մ. Ա. Ուլյանովնան մի փոքրիկ ագարակ էր գնել: Այդ ժամանակից՝ մինչեւ 1893 թ. աշունը Լենինը սովորարար ձմեռն ապրում էր Սամարայում, իսկ ամառանց էր կացնում Ալակաեվկայում: Յերկար միջնորդություններից հետո Վլադիմիր Իլիչը վերջապես թույլտվություն է ստանում եքստերն կարգով քննություն տալու Պետերբուրգի համալսարանին աւընթեր: Պետեր-

բնութիւնը զնալով, Լենինը փայլուն քննութիւնն է տալիս 1891 թ. դարնանն ու աշխարհը: 1891 թ. հունվարին նա Պամարայում ստանում է յերդւլյալ համադրամատարի ոգնականի կոչում, սակայն իրավաբանական պրակտիկայով Վլադիմիր Իլյիչը համարյա չէր զբաղվում, յերբեմն միայն, դատարանի կողմից նշանակվելով, հանդես եր գալիս դատավարութիւններին:

Սամարայում գտնված միջոցին Լենինը շարունակում էր պատրաստվել հեղափոխութեան գործունէյնութեան, ուժեղ թափով ուսումնասիրելով Մարքսի և Ենգելսի գործերը, վորոնցից շատերն այն ժամանակ դեռ թարգմանված չէին ռուսերէն, ինչպէս նաև Պլեխանովի և Կաուցկու աշխատութիւնները: Նա ուսումնասիրում է նաև նարոչնիկական գրականութիւն, կաշմում է կարդացած գրքերի կոնսպեկտները, գրում է մի շարք ռեֆերատներ, վորոնց ծանոթացնում է տեղական մարքսիստներին, վրձարանում է դանազան յեռանդի նարոչնիկներին հետ և նամակապրութիւն է ունենում այլ քաղաքների մարքսիստների հետ (Ն. Ե. Ֆեդոսև, Պ. Պ. Մաշկով): 1891 մեծ սովի ժամանակ, վոր բռնել էր մի շարք նահանգներ, Վլադիմիր Իլյիչը գուրս է գալիս լիբերալ ինտելիգենցիայի փորձերի դեմ, վորոնց նպատակն էր՝ սովյալներին ոգնելու անհրաժեշտութեան գրոշի տակ առաջաւոր յերիտասարդութեան ու չաղրութիւնը շեղել ինքնակալական ընթիմի դեմ հեղափոխական պայքար մղելու անհրաժեշտութեանից: Սամարայում գտնվելու վերջին շրջանում Լենինը Ա. Պ. Սկլյասինկոյի և Ի. Ն. Լալայանցի հետ միասին կազմում են մարքսիստական խմբակ, վորն այն ժամանակ մի գաղափարական կենտրոն էր, վորին հարում էր Սամարայում

յերիտասարդութեան՝ նարոչնիկութեանից մարքսիզմին անցնող լավագուշն մասը:

«ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԶՍԱԳՐՄԱՆ ՊԱՅԲԱՐԻ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ».

1893 աշնանը Լենինը հեղափոխական աշխատանք կատարելու համար գնաց Պետերբուրգ—ցարական Ռուսաստանի մայրաքաղաքն ու խոչորագուշն արդիւնաբերական այդ կենտրոնը: Այստեղ նա գալիս է արդեն, վորպէս լիովին կազմակերպված մարքսիստ, ամբողջացված աշխարհայացքով, հրաշալի կերպով տիրապետելով մարքսիստական մեթոդին և ունենալով հսկայական երուրեցիկ: Մտնելով «Ժերերի» (Գ. Կրասին, Գ. Կրժիժանովսկի, Ս. Ռադչենկո և այլն) մարքսիստական խմբակի մեջ, վորը կապեր ուներ բանվորներին հետ և պրոպագանդ էր մղում բանվորական խմբակներում, Վլադիմիր Իլյիչը կարճ ժամանակից հետո դառնում է խմբակի լիդերը: Առանձին տպավորութիւն է թողնում խմբակի անդամների վրա չուկաների մասին կարդացած նրա գեկուցումը (1893 թ.), վորտեղ Լենինը խմբակի անդամների ուշադրութիւնը սրում, դարձնում է այն հանգամանքի վրա, թէ անհրաժեշտ է տնտեսագիտական թեորիայի զանազան հարցերի վերացական, գուտ «ակադեմիական» քննութիւնից անցնել ռուսական տնտեսական իրականութեան կոնկրետ ուսումնասիրութեանը և այդ ուսումնասիրութիւնը զուգորդել հեղափոխական կռիւի գործնական խնդիրներին հետ: Լենինի այդ ռեֆերատը դառնում է «բեկման մոմենտ» խմբակի պատմութեան մեջ:

1891-1892 թ. թ. սովի հողի վրա առաջ յեկած հաւա-

րակական աշխուժացան հետեւանքով մարքսիզմը դառնում է ուսումնական հասարակական կյանքում նկատելի յերեւոյթ: Նարոդնիկական գաղափարախոսությունը, վոր մինչեւ այդ ժամանակ համարյա մենակ իշխում եր առաջավոր յերիտասարդության մտքերի վրա, սկսում է իր ազդեցությունը կորցնել՝ մարքսիստները ճշման տակ: 1893 թ. վերջին նարոդնիկների ղեկավար Ն. Միխայլովսկին զրական կամպանիա յե սկսում ուսում մարքսիստների դեմ: Ի սրատախտն Միխայլովսկու այդ լեւույթին Լենինը 1894 թ. դարնան ու աշնանը գրում է իր նշանավոր «Ինչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք պատերազմում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատությունը, վորի մեծ վորջնչացնող քննադատության է յենթարկում նարոդնիկության այնպիսի սյուների փիլիսոփայական, քաղաքական և տնտեսական հայացքները, ինչպես էյին Միխայլովսկին, Կրիլենկոն, Յուժակովը: «Ժողովրդի բարեկամները» («բարեկամները» յերեք մասից մեր ժամանակները հասել են միայն յերկուսը՝ առաջին և յերրորդ մասերը), վորոնք հրատարակվել են անլիզալ, հեկտոգրաֆով, հսկայական չափով ողնեցին ուսումնական սոցիալ-դեմոկրատներին նարոդնիկության դեմ պայքարելու գործում:

«Ժողովրդի բարեկամներ»-ի մեջ Լենինը, վոր այն ժամանակ դեռ 24 տարեկան յերիտասարդ եր, տվեց մի շարք տակտիկական գաղափարներ, վորոնք հետո զարգացրած ձևով բայլչեփիկների գործնեյության հիմքը կազմեցին 1905 թ. հեղափոխության շրջանում և հետագա տարիներում: Բրուչյուրը վերջանում էր հետեւյալ մարդարեյական բառով, վորոնք ընդգծում էյին պրոլետարիատի գերիշխանության իդեան—«Բանվորների

դասակարգի վրա յեւ սոցյալ-դեմոկրատները դարձնում են իրենց ամբողջ ուշադրությունը և իրենց ամբողջ գործունեյությունը: Յերր նրա առաջավոր ներկայացուցիչները յուրացնեն զխտական սոցիալիզմի գաղափարը, յերբ այդ գաղափարները լայն կերպով տարածվեն և բանվորների մեջ ստեղծվեն ամուր կազմակերպություններ, վորոնք բանվորների այժմյան ջլատված տնտեսական պայքարը վերածեն զիտակցական դասակարգային կռիւի, — այն ժամանակ ուսում բանվորը, բոլոր դեմոկրատական տարրերի գլուխ կանգնելով, կտապալի միահեծանությունը և ուսում պրոլետարիատին (բայլչեյերկրների պրոլետարիատի հետ միասին) բաց քաղաքական կռիւի ուղիղ ճանապարհով կտանի դեպի հաղթական կոմունիստական հեղափոխություն»: Այդ բրուչյուրի մեջ էլ Լենինը բանվոր դասակարգի առաջ դնում է «սոցիալիստական բանվորական կուսակցություն կազմակերպելու» մերձավոր խնդիրը:

Յերբ 1894 թ. աշնանը լուս տեսավ նարոդնիկների դեմ ուղղված՝ Ստրուվեյի հայտնի գիրքը («Քննադատական զիտոյություններ Ռուսաստանի տնտեսական զարգացման հարցի առթիւ»), վորի հեղինակը այդ տարիներում հանդես եր յեկել վորպես մարքսիստ և մեծ ազդեցություն եր վայելում յերիտասարդության շրջանում, Լենինը հենց այդ ժամանակ մի գաղտնի գիտկուսիտն ժողովում, վորին մասնակցում էր և Ստրուվեն, մատնանչեց Ստրուվեյի շեղումները հեղափոխական մարքսիզմից մի շարք հարցերում և նրա տեսակետը բնորոշեց, վորպես «մարքսիզմի արտացոյում բուրժուական զրականության մեջ»: Այդ միեւնույն ժամանակ Լենինը չեր հրաժարվում Ստրուվեյին ոգտադործելուց, վորպես դանակից բնդհանուր թշնամու—նարոդնիկա-

եան դադափարախոսութեան դեմ պայքարելու համար: «Աշխատանքի ազատագրում» արտասահմանյան խմբակի պարագլուխ Պլեխանովի և լեզալ մարքսիստների լիգեր Ստրուվեյի հետ միասին և Վլադիմիր Իլյինը մասնակցեց մարքսիստական «Նյութեր Ռուսաստանի տրեստեսական դարգացման հարցի առթիվ» ժողովածուին: Ժողովածուի «մեխը» Լենինի՝ Կ. Տուլին կեղծանունով գրած հոդվածն էր—«Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը և նրա քննադատությունը պ. Ստրուվեյի դրքում»: Այդ մեծ հոդվածում Լենինը քայլ առ քայլ մերկացնում էր Ստրուվեյի «մարքսիզմի» անբավարարությունը՝ ցույց տալով վոր նա մարքսիզմով քողարկում է իր բուրժուական լիբերալիզմը. միաժամանակ Լենինը տալիս էր նարոդնիկական դադափարախոսութեան պատշաճ գնահատականը, բնորոշելով նարոդնիկներին՝ վորպես մանր արտադրողների շահերի նեկայացուցիչներ և մատնանշելով նարոդնիկության յերկակի բնույթը, վորքե՝ մեջ ունեցիտն և ուտոպիական «սոցիալիզմի» կողքին կա և՛ դրական բուրժուական—դեմոկրատական բովանդակություն: Գրաքննությունն այրեց այդ ժողովածուն, վոր ապիկց 1895 թ. մայիսին, սակայն մի քանի տասնյակ որինակ կարողացան փրկվել և տարածվել:

Չսահմանափակվելով նարոդնիկության և լեզալ մարքսիզմի դեմ դրական պայքար մղելով, Լենինը պրոպագանդ է մղում բանվորական խմբակներում, կարգալով և բացատրելով բանվորների համար Մարքսի «Կապիտալը»: 1894 թ. յերկրորդ կեսում Լենինը «Ծերերի» խմբակի առաջ հարց է դնում, վոր անհրաժեշտ է փակ խմբակներում մղվող պրոպագանդայից անցնել բանվորական մասսաների մեջ պրոպագանդ անելուն՝ տրես-

տեսական կարիքների հողի վրա, այդ նպատակով հրատարակելով բանվորներին ուղղված ագիտացիոն թերթիկներ: 1895 թ. հենց սկզբին, յերբ խոսվություններ ծագեցին Սեմյաննիկովի դործարանում, Լենինը մի թերթիկ էր գրում, ուղղված այդ դործարանի բանվորներին: Այդ «Ծերերի» խմբակի լույս ընծայած առաջին թերթիկն էր. այդպիսով խմբակը Լենինի նախաձեռնութեամբ և նրա ղեկավարութեամբ անցնում է աշխատանքի նոր ձևերի: Փետրվարին խմբակը դարձյալ թերթիկներ է լույս ընծայում, ուղղած նախահանգըստի և Սեմյաննիկովի դործարանի բանվորներին, վորտեղ կրկնվել էյին խոսվությունները: Վորպես նոր դործելակերպի յեռանդուն կողմնակից, Լենինը միաժամանակ հանդես է գալիս այն սոցիալ-դեմոկրատների դեռ նոր ծագող, կազմակերպվող «եկոնոմիզմի» ներկայացուցիչների դեմ, վորոնք անհրաժեշտ էյին համարում բանվորական շարժումը սահմանափակել բացառապես տրեստեսական պայքարով, և սնդում է, բանվոր դասակարգի պայքարի անհրաժեշտութեանը նաև զուտ քաղաքական խնդիրների համար:

1895 թ. գարնանը, Լենինը հիվանդանում է թոքերի բորբոքումով: Առողջանալուց հետո նա մայիսի 8-ին (այլրիկ 26-ին) գնում է արտասահման «Աշխատանքի ազատագրում» խմբակի հետ կապեր հաստատելու և անլեզալ դրականութեան առաքումն Ռուսաստան ապահովելու համար: Արտասահմանում գտնված ժամանակ Լենինը յեղավ Շվեյցարիայում, հետո Փարիզում, և Բեռլինում, վորտեղ աշխատում էր գրադարանում: Պլեխանովի և Ակսելրոդի հետ տեսակցելիս Լենինը մի վորոշում անցկացրեց խմբակի կողմից «Ռաբոտնիկ» պարբերական ժողովածու հրատարակելու մասին Ռուս-

ստատների բանվորական շարժումն սպասարկելու համար: Չորս ամիս անընդմեջ մնալուց հետո Լենինը վերադարձավ սեպտեմբերի 19 (7)-ին Պետերբուրգ, նախապես՝ տեղական սոցիալ-դեմոկրատներին հետ կապ հաստատելու համար լինելով Վիենայում, Մոսկվայում և Արեխովո-Ջուլեպոլյում: 1895 թ. աշնանը «ծեղերի կազմակերպութունը, վոր հետագայում ընդունեց «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի պետությունը» անունը, Լենինի ղեկավարութամբ, վոր միության հիմնադիրն էր հանդիսանում, վերջնականապես կանգնում է մասսայական ազդեցության ուժով վրա: Առանձնապես մեծ նշանակություն ունեցավ Տոբոլսոնի գործարանում նոյեմբերի 18-19-ին (6-7) տեղի ունեցած գործադուլը, վորն սկսվեց միության լույս ընծայած թերթիկը գործարանում յերեվալուց հետո: Այդ գործադուլը սերտ կապված է Լենինի անվան հետ, վորն անմիջապես ղեկավարում էր գործադուլի պատրաստությունը, հարցուփորձ էր անում Տոբոլսոնի գործարանի բանվորներին գործարանում տիրող դրության մասին և այլն: Նա յե դրել նույնպես և Տոբոլսոնի բանվորներին ուղղած պրոկլամացիաներից մեկը: Այդ ժամանակ էլ հենց, 1895 թ. աշնանը Լենինը գրեց բանվորների շրջանում մեծ փողովրդականություն ձևավորող իր բրոշյուրը — «Գործարաններում բանվորներից դանձիտղ տուգանքների վերաբերյալ որենքի բացատրությունը»:

Գործադուլային շարժումը գլխավորող միությունը վորի մեջ էլին մտնում Գ. Կրժիժանովսկին, Ն. Կրուպսկայան (Նադեժդա Կոնստանտինովնայի) հետ Լենինը ծանոթացել էր 1894 թ. սկզբին) և ուրիշները, ծավալվում, հարստանում էր նոր ուժերով, նոր կապեր էր հաստատում: Ուժերի համակենտրոնացում կատարե-

լու նպատակով Լենինի ջանքերով Պետերբուրգյան միությունը միացավ ինտելիգենտ ուժերով հարուստ, սակայն մասնաների մեջ անմիջապես հաշտտող՝ Լ. Մարտովի խմբակի հետ: Ծարժումը ծավալվելու շնորհիվ Լենինը հնարավորություն է ստանում հարց դնելու «Рабочее Дело» անկեղալ թերթ լուս ընծայելու մասին: Արդեն պատրաստ էր թերթի առաջին համարը վոր յերեք քառուղով կազմված էր Լենինի հոդվածներից և ընդգծում էր պայքարի անհրաժեշտությունը բանվոր դասակարգի համար հանուն քաղաքական աշատության յերբ 1895 թ. դեկտեմբերի 20-ի (8-ի) լույս 21-ի (9-ի) գիշերը միության գործիչների մեծ մասը վորոնց թվում և Լենինը ձերբակալվում են և բանտարկվում: Բանտում վլադիմիր Իլյիչը մնաց 2 տարի և 2 ամիս: 1896 թ. ոգոստոսին ձերբակալվում և նաև Ն. Կրուպսկայան:

Բանտում յեղած ժամանակ Լենինը շարունակում է կապ պահպանել ազատ մնացած ընկերների հետ և միության համար գրում է թերթիկներ («Յարական կառավարությունը») և բրոշյուրներ («Գործադուլների մասին» բրոշյուրը վոջնչացել է տպարանի խուզարկու թյան ժամանակ): Բանվորական շարժման զարգացման հետեվանով Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատները շրջանում միտք ծագեց կուսակցական համագումար հրավիրել կուսակցության հիմնադրումը ձևակերպելու համար. այդ համագումարի համար (վոր չգումարվեց) Լենինը գրեց ծրագրի նախագիծ և նրա բացատրագիրը: Իր բանտարկությունը Լենինն ոգտագործում է նմանապես իր գլխությունն էլ ավելի լրացնելու համար և գլխավորապես աշխատում է «Развитие капитализма в России» մեծ աշխատության վրա: 1897 թ. փետրվարի 10-ին Նիկալայ Ի-ը հաստատեց վոս-

10-ին Նիկալայ 11-ը հաստատեց վոստրիկանությունը դեպարտամենտի կարգադրությունը միություն բանտարկված անդամներին յերեք տարով արևելյան Սիբիր աքսորելու մասին, և Լենինը դեպք աքսորավայրը — Յենիսեյի նահանգի Մինուսինի գավառի Շուշենսկոյե դուրը: Ուղեվորվելուց առաջ Վլադիմիր Իլյինը և միություն անդամները մի քանի որով բանտից արձակվեցին ճանապարհի սլատրաստություն տեսնելու համար: Լենինն ոգավեց այդ «արձակուրդից» Միություն ազատ մնացած անդամների հետ տեսակցելու համար և նրանց հետ դումարած խորհրդակցությունը դուրս յեկավ Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատների մի մասի մեջ նկատվող եկոնոմիզմի դեմ:

Կտրված Ռուսաստանից, մասսաների մեջ անմիջական աշխատանք կատարելու հնարավորությունից, Լենինը աքսորավայրից սերտ կապ է պահպանում ռուս սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան «Աշխատանքի ազատագրում» խմբակի հետ, ուշադրություն դարձնելով ռուսական և արեւմտա-յեւրոպական մարքսիստական մտքի և բանվորական շարժման զարգացմանը:

Ռեվոլյուցիոնիստները հենց առաջին յեւրոյթները, վորոնք սկսել էին վերաքննության յենթարկել Մարքսին փիլիսոփայության, քաղաքատնտեսության և հողային հորցում, խիստ հակահարվածի էին հանդիպում Լենինի կողմից, վոր մասամբ ընկերներին ուղղած նամակներում, իսկ գլխավորապես լեզալ ամսագրերում «Новое слово», «Начало», «жизнь», «Мир Божий», «Научное Обозрение») պաշտպանում և մարքսիզմը նրան «ուղղելու» բոլոր փորձերից: Փիլիսոփայության ասպարիզում Լենինը սահմանադատվում

և ռեվոլյուցիոնիստներից, վորոնք փորձում էին դիալեկտիկական մատերիալիզմը փոխարինել նեոկանտիզմով, և լիովին համաձայնվում է Պլեխանովի փիլիսոփայական հոգվածների հետ, վորոնք ուղղված էին ռեվոլյուցիոնիստների դեմ: Առհասարակ այդ շրջանում Լենինը ուժեղ թափով գրադվում է փիլիսոփայության, ուսումնասիրում է Գոյյարիին, Հելվեցիուսին, Կանտին և այլն: «Կապիտալիզմ և դուրդատնտեսություն» մեծ հոգվածում նա իր պաշտպանության տակ և առնում Կաուցկու ագրարային հարցի վերաբերյալ մարքսիստական աշխատությունը ընդդեմ Բուլգակովի հարձակումների, վորը փորձում էր ապացուցել, թե կապիտալիզմի դարգացման որևէքները կիրառելի չեն գյուղատնտեսության նկատմամբ և մարքսիզմի մեթոդները չի կարելի դործադրել այդ ասպարիզում: Լենինը մասնակցեց նաև շուկաների տնտեսության մասին ծագած դրական դիսկուսիային, պաշտպանելով Մարքսի հայացքներն այդ բնագավառում և ցույց տալով մարքսիզմի դուր տնտեսական թեորիայի հեղափոխական բնույթը, վոր ժխտում է յին ռեվոլյուցիոնիստները: Բեռնշտեյնի տխրահուշակ դիրքը, ռեվոլյուցիոնիզմի նրա ավետարանը Լենինի կողմից խիստ թշնամական վերաբերմունքի հանդիպեց:

Աքսորում յեղած ժամանակ Լենինը 1899 թ. ամառը տնինա քննադատության է յենթարկում «Բրեդո»-ն, եկոնոմիզմի ամենավաղ փաստաթղթերից մեկը: «Բրեդոյի» դեմ Լենինի գրած և աքսորված սոցիալ-դեմոկրատների խմբակի կողմից պաշտպանություն դտած «բողոքը» զգալի չափով նպաստեց այն հեղափոխական մարքսիստների դիրքերի ամրացմանը, վորոնք Պլեխանովի դիսավորությունից հետո էին թույլ չտա-

22892-59



լով, վոր ոպորտունիզմը թափանցի ոռւս սոցիալ-դեմո-
կրատիայի շարքերը: Տարվա վերջին Լենինը՝ ժամանա-
կին լույս չտեսած մի հոգւմածով հանդես յեկավ ծայ-
րահեղ եկոնոմիստների որդան «Ռաբոչայա Միսը»-ի
դեմ, բնորոշելով նրա ուղղութիւնը, վորպես «հետըն-
թաց», վորպես մի քայլ հետ տանող այն դերձերից,
վորին արդեն հասել է ոռւսական սոցիալ-դեմոկրա-
տիան: Լենինի՝ Սիբիրում գտնված ժամանակին է վերա-
բերում նաև նրա «Ռուս սոցիալ-դեմոկրատիայի խըն-
դերները» բրոշյուրը (1897 թ.), վորով ընդգծված է
պրոլետարիատի ղեկավար դերը բուրժուական դեմո-
կրատական հեղափոխութեան մեջ: Բրոշյուրը շատ հա-
մակրական վերաբերմունքի արժանացավ «Աշխատանքի
ապաստարում» խմբակի կողմից: Բանվոր դասակարգի
ղեկարավութեամբ տեղի ունենալիք բուրժուական-հե-
ղափոխութեան նախապատրաստումը Լենինի
քաղաքական ու հրապարակաստական գործու-
նեցութեան հիմնական բովանդակութեանն էր կազմում
1895-1905 թվականներին:

Պայքար մղելով ռեվոլյուցիոնիզմի և ոռւս սոցիալ-դե-
մոկրատիայի ոպորտունիստական թևի դեմ և մշակե-
լով դրական ձևով կուսակցութեան խնդիրները (բացի
վերը հիշատակված բրոշյուրից, այստեղ պետք է նկա-
տի ունենալ նաև 1899 թ. Սիբիրում Լենինի գրած «Մեր
կուսակցութեան ծրագրի նախագիծը»), Լենինը շարու-
նակում է պայքարել նարոդնիկութեան դեմ (1897 թ.
դրված «Տնտեսական ոռմանտիզմի բնութագրութեան
առթիւ» մեծ հոգւածը), ցույց տալով նարոդնիկական
սոցիալիզմի մանր-բուրժուական և ռեակցիոն բնույթը
և բնորոշելով այն՝ վորպես՝ «համայնվորսական ոռ-
մանտիզմի մի տարբեր տեսակը»: Ընդգծելով «Կապիտա-
լիզմի նարոդնիկական ընդադատութեան և ռեակցիոն

բնույթը», Լենինը միախառնակ մի շարք հոգւածնե-
րում ցույց է տալիս նարոդնիկութեան հեղափոխական
դեմոկրատական կողմերը, վորչափով նա արտացոլում
այնպիսիանութեան և ճորտատիրութեան մնացորդների
դեմ պայքարող մանր արտադրողների շահերը:

1899 թ. լույս տեսավ դեռ բանտում սկսված և Սի-
բիրում ավարտված՝ Լենինի մեծ աշխատութիւնը-
«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում»: Այդ
լուրջ, հիմնական աշխատութիւնը, վոր հիմնված էր
հսկայական թվով վիճակագրական տվյալների խորը
ուսումնասիրութեան վրա և գիտական հետազոտու-
թեան մի նմուշ էր, տալիս էր նախահեղափոխական
չրջանի «Ռուսաստանի հասարակական-տնտեսական
կազմի և հտեապես դասակարգային կառուցվածքի
վերլուծութիւնը»: Այդ գիրքը, վոր հսկայական նշա-
նակութիւն ունեցավ մարքսիստական տնտեսական
մտքի զարգացման համար, վերջնականապես խորտա-
կեց ոռւսական դյուլում տեղի ունենալիք տնտեսական
հարաբերութիւնների զարգացման ուղիների վերա-
բերյալ նարոդնիկական պատկերացումը, անվերա-
դարձ կերպով ապացուցելով, վոր զարգացման այդ
ուղին կապիտալիստական է: Պրոլետարիատի ու գյու-
ղացիութեան տեսակարար կշիռը յերկրի եկոնոմիկայի
մեջ նախորոշում էր գալիք հեղափոխութեան բուրժուա-
կան դեմոկրատական բնույթը և բանվոր դասակարգի
ղեկավար դերի անխուսափելիութիւնը նրա մեջ:

Բացի մի շարք ամսագրային հոգւածներից և մեծ
աշխատութիւններից, Լենինը Սիբիրում գրել է պրո-
պագանդիստական նպատակով, բանվորների համար

«Նոր գործարանային որենք» բրոշյուրը, վորը 1899 թ. հրատարակվեց արտասահմանում:

Այն ժամանակ, յերբ Լենինը գտնվում էր Սիբիրում, տեղի ունեցավ կուսակցութեան առաջին համագումարը (1898 թ.), վորը վորոշեց հրատարակել «Ռաբոչայա դադետան», վորպես կուսակցութեան կենտրոնական որդան (այդ վորոշումը չիրագործվեց): Յենթադրվում էր, վոր Լենինը այդ թերթի խմբագիրը պետք է լինի: Նրա համար Լենինը 1899 թ. մի շարք հոգեվածներ է գրել, վորոնք լույս տեսան 1925 թվին:

1898 թ. գարնանը Շուշենսկոյե գյուղը յեկավ ըսկրզրում Ուֆա քաղաքով, իսկ հետո Շուշենսկոյե տեղափոխված Ն. Կրուպսկայան, վորն այդտեղ ամուսնացավ Լենինի հետ: Այդ ժամանակից սկսած մինչև Լենինի մահը Ն. Կրուպսկայան նրա մերձավոր ողջնականը և հավատարիմ ընկերը մնաց:

Աքսորում գտնվելու վերջին շրջանում Լենինը լուրջ կերպով մշակում է այն միտքը, վոր անհրաժեշտ է արտասահմանում, վոստիկանական վոտնձդություններից հեռու, հրատարակել անլեզու թերթ—ապագա «Ռուկրան», վորպես հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծելու նախնական պայման: Վորոշ գաղափարական հիմքի շուրջը տեղական ցերեկյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին համախմբելու միջոցով այգալիսի կուսակցություն ստեղծելը Լենինը համարում էր առաջիկա մոտիկ ժամանակաշրջանի կարեւորագույն խնդիրը: Իր պլանն իրագործելու համար Լենինն առաջարկեց Լ. Մարտովին (Տուրուխանի շրջան) և Ա. Պոտրեսովին (Վյատկա) «յեռլակ միություն»: Այդ նոր գրական-քաղաքական

ձեռնարկությունը Լենինը ծրագրում էր իրագործել «Աշխատանքի ազատագրում» խմբակի հետ միասին:

Աքսորը վերջանալուց հետո 1900 թ. վետրվարի 11-ին (հունվարի 29-ին) Լենինը վերադարձավ Ռուսաստանից «Ռուկրայի» հրատարակութեան նախապատրաստական աշխատանքներն ավարտելու համար (քանակություններ Ռուսաստանում մնացած ընկերների հետ՝ լրագրին ոգնելու, թղթակցություններ ուղարկելու մասին, դրամական միջոցների հայթայթում), ժամանակավորապես հաստատվեց Պսկովում, վոր հեռու Պետերբուրգից, ուր մտնելն արդելված էր նրան: Այստեղ, այսպես կոչված պսկովյան խորհրդակցությանը, վորին ներկա էին նաև իրենց աջակցությունը խոստացած լեզալ մարքսիստների ներկայացուցիչները, վորոնք զգալի կապեր ունեյին բուրժուական ինտելիգենցիայի շրջանում, վերջնականապես վորոշվեց թերթ հրատարակելու հարցը, և ընդունվեց Լենինի կողմից առաջարկված նրա ծրագիրը: Ռուսաստանում գտնված միջոցին, մինչև արտասահման գնալը, Վլադիմիր Իլյիչն այցելեց Պետերբուրգ (անլեզու կերպով), Մոսկվա, Նիժնի-Նովգորոդ, Ուֆա, վորտեղ գտնվում էր իր քաղաքի ժամանակը լրացրած Ն. Կրուպսկայան,—տեղական սոցիալ-դեմոկրատների հետ կապ հաստատելու համար: Մեկ անգամ էլ Պետերբուրգ այցելած ժամանակ 1900 թ. մայիսի վերջին Լենինը ձերբակալվեց Մարտովի հետ միասին և ազատվեց տասնոր կալանավորված մնալուց հետո:

1900 թ. հուլիսի 29-ին (19-ին) Լենինը, ավարտելով «Ռուկրայի» նախապատրաստման բոլոր գործերը և հարազատների հետ տեսնվելուց հետո մեկնեց արտասահ-

ման, Գեղամանիա և Շվեյցարիա՝ «Իսկրան» հրատարակելու համար: Սկսվեց Լենինի վտարանդեություն տալին շրջանը, վոր տեկց մոտ 51/2 տարի:

«ԻՍԿՐԱՅԻ» ՇՐՋԱՆԸ:

Ժնեվում (Շվեյցարիա) «Աշխատանքի ազատագրում» խմբակի հետ յերկար բանակցելուց հետո, վորը, քիչ էր մնում, խզումով վերջանար, Լենինին և նրան ուղեկցող Պոտրեսովին հաջողվեց, վերջապես, համաձայնություն գտալ Պլեխանովի հետ, և Լենինը Մյունխենում հաստատվելով՝ հնարավորություն ստացավ անցնելու «Իսկրա» թերթի և «Զարյա» տեսական որդանի հրատարակությունը: Խմբագրական կազմի մեջ էլին՝ Լենինը, Մարտովը, Պոտրեսովը, Պլեխանովը, Ակսել-րոդը և Զատուլիչը: Սկզբում, մինչև Ն. Կրուպսկայայի ու Մարտովի գալը (նրանք յերկուսն էլ յեկան միայն հաջորդ տարվա դարնանը), Լենինը բացառիկ զգվար պաշտաններում էր հրատարակում թերթը (վորը տեղվում էր Լեյպցիգում, գերմանական սոցիալ-դեմոկրատական տպարանում, գաղտնի): Վերջիվերջո բոլոր զգվարությունները հաղթահարվեցին, և 1900 թ. գեկտեմբերին լույս տեսավ «Իսկրայի» առաջին համարը: «Իր ուղղությամբ լիովին «բայլեմիկյան» այդ թերթը (Լենին) բացառիկ դեր խաղաց մեր կուսակցության պատմության մեջ:

Լենինի վրդով տոգորված «Իսկրան», վորը նրա հակառակորդները իրավացի կերպով անվանում էին «լենինյան «Իսկրա», ստեղծեց մեր կուսակցությունը, մշակելով նրա ծրագիրը, գործելակերպը և կազմակերպությունը: «Իսկրայի» հետ միաժամանակ Լենինը հիմ-

նեց նաև «Իսկրայական կազմակերպություն», վորի անդամները—«Իսկրայի» հայտնի «գործակալները», մշտական հրահանգվելով Լենինի կողմից, Ռուսաստանում յեռանդուն պայքար էլին մղում եկոնովիզմը հաղթահարելու, կոմիտեները իսկրայական հիմունքներով վերակազմելու, «Իսկրան» ղեկավար որդան ճանաչելու և II համագումար հրավիրելու համար, վորը պետք է ստեղծեր պրոլետարիատի իսկապես հեղափոխական կուսակցություն, վորպես կազմակերպված ամբողջություն:

Լենինը «Իսկրան» վարում էր քաղաքական մտքի բոլոր բուրժուական (լիբերալներ, «ստրուվիզմ») և մանրբուրժուական (նարոդնիկություն, եսեոներ) հոսանքների և ուղղությունների, սոցիալ-դեմոկրատիայի ներսում ոպորտունիզմի բոլոր արտահայտությունների (եկոնովիզմի) դեմ անհաշտ պայքար մղելու վրդով: 1901 թ. վերջին եկոնովիստները, վորոնց դեմ Լենինն «Իսկրայի» եջերից յեռանդուն հարձակում էր կատարում, հաշտություն և իսկրովեցների հետ միանալու տրամադրություն ցույց տվին: Համոզվելով, վոր եկոնովիստներն անընդունակ են հեղափոխական մարքսիզմի տեսակետի վրա կանգնելու, Լենինը, չնայած իսկրովեցների մի մասի (վորոնց թվում Պլեխանովի և Մարտովի) տատանումներին, պնդում էր, վոր պետք է բոլորովին խզել կազմակերպչական կապերը եկոնովիստների հետ: 1902 թ. դարնանը լույս տեսավ կուսակցության պատմության մեջ դարաչրջան կազմող՝ Լենինի «Ինչ անել» գիրքը: Այդ գիրքը, վոր Լենինի իսկրայական շրջանի ամենացայտուն և ամենափայլուն գործն էր և «Իսկրայական գործելակերպի ու իսկրայական կազմակերպական քաղաքականության ամփոփումն էր»,

եկոնոմիզմին այնպիսի հարված հասցրեց, վորից նա այլևս վոտքի կանգնել չկարողացավ: Գիրքը հսկայական տպավորութուն գործեց բոլոր ուսւս «պրակտիկներին» վրա և վճռական դեր խաղաց իսկրայականության ամրացման և նրա կողմից ուսւս սոցիալ դեմոկրատական կազմակերպությունները նվաճելու գործում:

Բացի եկոնոմիստների դեմ պայքարելուց, Լենինն անխնայ մերկացնում էր նաև նոր ծնունդ առնող լիբերալիզմը հանձինս Ստրուվեյի և նրա խմբագրած «Ասվարաժենիյի» (վոր հոդ էր պատրաստում հետադայում, 1905 թ. կադետական կուսակցություն կազմելու համար), ցույց էր տալիս լիբերալների «պայքարի» վախկոտ ու կիսատ բնույթն ընդդէմ ինքնակալության, ներանց անընդունակությունը՝ լուրջ և հետևողական կերպով գուտ դեմոկրատական պահանջներ անելու, նրանց յերկյուղը հեղափոխությունից և նրանց թշնամությունը դեպի բանվոր դասակարգի հեղափոխական շարժումը: Առանձնապէս կարեւոր նշանակություն ունեւ Ստրուվեյի դեմ ուղղված՝ Լենինի հոդվածը—«Ձեմստվոյի հալածիչները և լիբերալիզմի Հաննիրալները» (1901 թ.):

Լենինը մի շարք հոդվածներում բազմակողմանի քննադատության յենթարկեց՝ հանձինս եսեռական կուսակցության վերածնվող նարոդնիկությունը, ցույց տալով եսեռների տեսական եկլէկտիզմը, սպացուցելով, վոր նրանք չեն հասկանում բանվոր դասակարգի ինքնութւյնը դերը, մթադնում են պրոլետարիատի և գյուղացիության դասակարգային զանազանությունը, սխալ կերպով՝ վորպէս բոլորովին միատեսակ հասարակական ուժեր են գնահատում պրոլետարիատին, գյուղացիությունը և ինտելիգենցիային, բոլորին եւ հավասարա-

պէս ընդունակ համարելով սոցիալիզմի համար պայքարելու: Մերկացնելով «եսեռական «սոցիալիզացիայի» ըստ ելության մանրրոշմական բնույթը և ցույց տալով պայքարի տեռորիստական, մասսայական, շարժումից կտրված մեթոդների անպետքությունը, Լենինը եսեռական ծրագիրն ու գործելակերպը բնորոշում էր՝ վորպէս հեղափոխական ավանտյուրիզմ և «վոլչար սոցիալիզմ», եսեռներին համարելով բուրժուական դեմոկրատիայի ձախ թէւը: Լենինը գործոն մասնակցություն է ունեցել նաև «Իսկրայի» միջոցով կուսակցության ծրագրի մշակման գործում—1902 թ. հունվար մարտ ամիսներին: Ծրագրի սկզբնական նախագիծը, վոր գրել էր Պլեխանովը, չէր բավարարում Լենինին, վորը պահանջում էր, վորպէսզի ծրագիրը «ուղղակի պատերազմ հայտարարի» ուսական կապիտալիզմին, և ցույց էր տալիս Պլեխանովի մի շարք ձեակերպումների վերացականությունն ու անձաությունը, վորի հետևանքով բավարար պարզորոշությամբ չէր ընդգծվում ծրագրի հեղափոխական-պրոլետարական բնույթը: Ուստի Լենինը հանգես յեկավ իր սեփական նախագծերով: Այդ հոդի վրա «Իսկրայի» խմբագրության մեջ չափազանց սուր պայքար ծագեց Լենինի և Պլեխանովի միջև, վորը քիչ էր մնում՝ պառակտումով վերջանար: «Իսկրայի» խմբագրությունը հիմք ընդունեց Պլեխանովի նախագիծը, նրա մեջ մի քանի եյական ուղղումներ մտցնելով Լենինի նախագծից, հատկապէս մի կէտ՝ խոշոր արտադրողի կողմից մանր արտադրողի դուրս մղելու մասին և մի հատուկ կէտ՝ պրոլետարիատի դիկտատուրայի մասին: Այդ ուղղումների չնորհիւ ծրագրի պլեխանովյան նախագիծը բավական լավացավ, սակայն այնուամենայնիւ, վոչ այն չափով, ինչպէս Լենինն էր

պնդում: Ծրագրի հողային մասը, վոր պահանջում եր գյուղացիական կոմիտեներ ստեղծել և «կառնները» գյուղացիներին վերադարձնել, գրել և **Լենինը**:

Ծրագրերը «Իսկրայի» կողմից ընդունվելուց հետո **Լենինը**, վոր շարունակ հսկայական ուշադրութիւն եր դարձնում գյուղացիական հարցին (կարեւոր նշանակութիւն ունի նրա «Բանտորական կուսակցութիւնը և գյուղացիութիւնը» հոգւածը «Իսկրայի» 3-րդ №-ում) և սոցիալ-դեմոկրատները կողմից այդ հարցին ցույց տրվող վերաբերմունքին (անհրաժեշտ և նշել **Լենինի** «Գյուղական չքավորութիւնը» մեծ ժողովրդականութիւն վայելող բրոշյուրը, 1903 թ.), մի մեծ հոգւած գրեց—«Ռուս սոցիալ-դեմոկրատիայի հողային ծրագիրը», վորի մեջ լայն կերպով բացատրում ու լուսաբանում եր խմբագրութեան կողմից դեռ նոր ընդունված՝ հողային ծրագրերը և արտահայտվում եր հոգուտ հողի ազգայնացման: Այդ հոգւածի առթիւ խմբագրութեան ներսում նոր կոնֆլիկտ ծագեց, վորը նույնպէս, քիչ եր մնում, խզում առաջ բերեր **Լենինի** և Պլեխանովի միջև: Պլեխանովն ընդհանրապէս չափազանց ղեգոհ եր, վոր ինքը, ինչպէս ցույց տվեց ծրագրի վերաբերյալ դիտկութիւն, **Լենինի** համար գերապուշտ և անառարկելի ինտանցիա չի հանդիսանում, ուստի և Պլեխանովն առանձնապէս խիստ և բծախնդիր ձևով գրեց իր քննադատական դիտողութիւններն այդ հոգւածի առթիւ, վորը միայն չորս ամսվա քննադատութիւնից և գրագրութիւնից հետո վերջապէս տալեց «Չարյայում»: Պլեխանովի և խմբագրութեան միջև անդամների պրնդումով **Լենինն** ստիպված յեղավ հոգւածից դուրս ձգելու ազգայնացման վերաբերյալ չափազանց կարեւոր կառոր: Համագումարից քիչ առաջ **Լենինը** հանդես յե-

կավ ի պաշտպանութիւն «Իսկրայի» հողային ծրագրի ընդդէմ մենչելիկների ապագա ագրարային տեսարան Պ. Մալովի հարձակումների: «Իսկրայի» շրջանում **Լենինը** գրել և նաև (1901 թ.) ունիզիոնիստ Բուզակովի, Գերցի, Չերնովի և ուրիշների դեմ ուղղված մի հոգւածաչաք «Չարյայի» համար «Հողային հարցը և «Մարքսի քննադատները» վերնագրով:

1902 թ. խմբագրութեան մեջ կուսակցական ծրագրի մշակման հարցի, **Լենինի** կողմից գրված հողային ծրագրի վերաբերյալ հարցի առթիւ ծագած սուր ատարածայնութիւնները իսկ ավելի առաջ, 1901 թ. Սարովեյի դեմ **Լենինի** գրած հոգւածի չուրջը ծագած տարածայնութիւնները (խմբագրութեան մի մասը կողմնակից եր ավելի մեղմ գծի՝ ընդդէմ լիբերալների) և մի շարք այլ հարցերի առթիւ առաջացած տարածայնութիւնները դժվարացնում ելին **Լենինի** համար՝ «Իսկրայում» հետեւողական-հեղափոխական գիծ վարելը: Տարածայնութիւնների ժամանակ խմբագրութիւնը կամ յերկու համառար մասի յեր բաժանվում (Պլեխանով, Ակսելրոդ, Չասուլիչ մի կողմից, **Լենին**, Մարտով, Պոտրեսով՝ մյուս կողմից), կամ «յերիտասարդներից» վորեւ մեկը տատանվելով՝ անցնում եր «Ալխատանքի պղատագրում» խմբակի մեջ: Ուստի **Լենինը** մի միտք հղացավ, վոր նա հետագայում ուզում եր իրադործել III համագումարում, այն և՛ այնպէս վերակազմել խմբագրութիւնը, վոր նրա կողմը ավելի կայուն բնույթ ունենա և ապահովի խիստ հեղափոխական քաղաքականութեան կիրառումը:

«Իսկրայի» շրջանում **Լենինի** դիտավոր հողին եր տեղծել մի ամուր, մարտունակ կուսակցութիւն իսկուսական ծրագրերի, տակտիկական և կազմակերպական

գաղափարները ամուր Կիմքի վրա: Կաղմակերպական հարցերին, կուսակցական կազմակերպութիւնների կառուցման մեթոդներին Լենինը միշտ մեծ ուշադրութիւն և դարձնում: Այդ տեսակետից, բացի «Ի՞նչ անել» բրոշյուրից, մեծ դեր խաղաց նրա՝ «Նամակ ընկերոջս մեր կազմակերպական խնդիրների մասին» բրոշյուրը: Այն սուր պայքարում, վորը մղվում էր, որինակ Պետերբուրգում, իսկրովցիների կողմից սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնները նվաճելու համար, Լենինը ղեկավար մասնակցութիւն ուներ, նամակագրութիւն վարելով «Իսկրայի» գործակալների հետ և նրանց մի շարք գործնական ցուցումներ և խորհուրդներ տալով: Լենինի ղեկավարութեամբ 1902 թ. վերջին ստեղծվեց կազմակերպչական կոմիտե, վորն իր վրա վերցրեց Վ համագումարի նախապատրաստման ամբողջ գործնական աշխատանքը: Յերբ համագումարի նախապատրաստման ընթացքում առանձնապէս ակներև դարձան Բունդի ազդայնական և անջատողական տրամադրութիւնները, վորը Փորմալ կերպով էր մտնում ՌՄԳ-ի մեջ և համակցութիւն ուներ Փեդերատիվ կապերով կապված լինելու կուսակցութեան հետ, Լենինը հանդես յեկավ «Իսկրայում» մի շարք հոդվածներով Բունդի բռնած դիրքի առթիվ, մատնանշելով, վոր Բունդին կարելի չէ թույլ տալ միայն ամպոնումիւ մի ընդհանուր կուսակցութեան սահմաններում: Անհրաժեշտ է նշել նաև 1903 թ. Լենինի գրած «Ազդային հարցը մեր ծրագրում» հոդվածը, վոր նվիրված էր ծրագրի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ կէտի բացատրութեանը:

«Իսկրայի» հիմնադրման որից մինչև 1902 թ. գարունը Լենինը խմբագրութեան մի մասի հետ ապրում էր

Մյունխենում: Յերբ պարզվեց, վոր խմբագրութեան հետեւում են, Լենինը տեղափոխվեց Լոնդոն, ուր հասավ ապրիլի 14-ին (1-ին): Ամառը մի առ ժամանակ նա ապրում էր Ֆրանսիայի հարավային ափին ինք մոր և Ա. Ի. Յելիգարովա քրոջ հետ: Տարվա վերջին դնում էր Շվեյցարիա ուՖերատներ կարգալու համար: 1903 թ. փետրվարի վերջին՝ մարտի սկզբին Լենինը մոտ յերկու շաբաթ յեղավ Փարիզում, վորտեղ դասախոսութիւններ էր կարդում հոգային հարցի մասին Հասարակական Գիտութիւնների Ռուսական բարձրագույն դպրոցում և հանդես էր դալիս նույն թեմայի վերաբերյալ ուՖերատով: 1903 թ. ապրիլի յերկրորդ կիսում Լենինը Լոնդոնից տեղափոխվեց Ժնև, ուր փոխադրվեց նաև «Իսկրայի» հրատարակութիւնը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՎ ՊԱՌԱՀՏՈՒՄԸ

1903 թ. հուլիսի 30-ից մինչև ոգոստոս 23-ը տեղի ուներ կուս. II համագումարը, վորը բացվեց Բրյուսելում և իր աշխատանքները հետո տեղափոխեց Լոնդոն: Այդ համագումարի գումարման խեան ամբողջովին պատկանում է Լենինին, վորն սպասում էր, վոր համագումարը պետք է իսկական կուսակցութիւն ստեղծի իսկրայական սկզբունքներով և պետք է ամպրտի այն համառ պայքարը կուսակցութեան համար, վոր մի քանի տարի շարունակ մղել էր «Իսկրան»: Համագումարի նախապատրաստման հիմնական աշխատանքը նույնպէս Լենինն էր ղեկավարում:

Համագումարը, վորի աշխատանքներին Լենինը ամենալիռանդուն մասնակցութիւնն ունեցավ (ղեկուցումներ ու ճառեր Բունդի՝ կուսակցութեան մեջ ունենալիք տեղի մասին, կուսակցութեան կանոնադրութեան

մասին, կուսակցութեան ծրագրի մասին, հոգային ծրագրի մասին, կանոնադրութեան 1-§-ի վերաբերյալ նըշանավոր զիսկուսիտան), ցույց տվեց իսկրայական սկզբունքների լիակատար հաղթանակը: Այն ուղղորտունիտական հոսանքներն ու արամադրութունները, վորոնց դեմ իր ժամանակ պայքարել էին Լենինն ու լենինյան «Իսկրան» (եկոնոմիզմ, բուհդյան նացիոնալիզմ և այլն) համադումարում վոչ մի ընդունելութուն չգտան: Սակայն, հաղթահարելով հեղափոխական մարքսիզմն բոլոր նախկին հակառակորդներին և իսկրայական սկզբունքներով կուսակցութեան ստեղծելով, իրենք իսկրովեցները սկզբում «բաժանվեցին» «պինդերի» և «մեզմերի» կանոնադրութեան 1-ի §-ի հարցի առթիվ, իսկ համադումարի վերջում ամբողջովին պառակտվեցին մեծամասնութեան և փոքրամասնութեան՝ կուսակցական կենտրոնները կազմի վերաբերյալ հարցի առթիվ: Իսկրովեցները հետևից պառակտվեց նաև համադումարը: Կանոնադրութեան 1-ի §-ի քննութեան ժամանակ Մարտովը, չորհիվ համադումարի հակաիսկրայական տարրերի աջակցութեան, անցկացրեց իր ձեվակերպումը, վորը կուսակցութեան անդամի համար բախարար էր համարում կուսակցական կազմակերպութուններից վորչեմե մեկի վերահսկողութեան և ղեկավարութեան տակ կատարած աշխատանքը: Լենինի ձեակերպումը, վորն ավելի խտապումն պահանջներ էր առաջադրում կուսակցութեան անդամին և կուսակցութեան անդամի պարտականութունն էր համարում կուսակցական կազմակերպութուններից մեկում անձամբ մասնակցելը համադումարի մեծամասնութեան կողմից մերժվեց: Համադումարի վերջում ուժերի փոխհարաբերութունը փոփոխեց, վորովհետև հակաիսկրայականները (եկոնոմիստները և բուհիստները) հետացան համադումարից,

դրանով էլ հենց մարտովեցներին թողնելով փոքրամասնութեան մեջ: Այդ պատճառով էլ Լենինը հնարավորութուն տալով անցկացնելու ԿՈՒ խմբագրութեան և ԿԿ ախպիսի ցուցակներ, վորոնց անձնական կազմը հաստատուկոս ստահովում էր հետագայում նա՝ ԿՈՒ (Կենտ. Բրգան) իղեկողիական կալունութունը և ԿԿ ամուր դործնական ղեկավարութունը նրա նկատմամբ: ԿԿ մեջ ընտրվեցին 3 բայլչեվիկ (մենչեվիկները հրաժարվեցին մտնելուց), ԿՈՒ անդամ ընտրվեցին Լենինը և Պլեխանովը, վորը համադումարում մեծամասնութեան կողմնակից էր: Մարտովը նույնպես ընտրվեց, սակայն հրաժարվեց մտնելուց: Պոտրեսովը, Ակսելրոդը և Զախովիչը բոլորովին չընտրվեցին: Այդպիսով ԿԿ և ԿՈՒ իրենց կազմով բայլչեվիկյան էին հետևապես, բայլչեվիկյան պետք է լիներ նաև գերագույն կուսակցական հիմնարկը—կուսակցութեան խորհուրդը, վոր կազմված էր Պլեխանովից (նախագահ) և ԿԿ ու ԿՈՒ յերկույական ներկայացուցիչներեց:

Մենչեվիկները, ստեղծելով իրենց գաղտնի Փրակցիոն կազմակերպութունը, համադումարից հետո ավելի յեռանդով կրկնապատկված ուժով շարունակեցին կուսակցութեան կենտրոնական հիմնարկները դեմ դեռ համադումարում սկսած իրենց պայքարը: Այդ շրջանում Լենինի աշխատանքը ընթանում էր չափազանց ծանր պայմաններում: Մենչեվիկյան ուղղութիւնային հետ՝ կուսակցութեան համար ընդունելի վորեւե համաձայնութեան գալու բոլոր փորձերն իրուր անցան, չալով վորեւե արդյունք: Համադումարում պարտութուն կրելով, մենչեվիկները նպատակ դրին իրեց ձեռքը գցել կուսակցութեան կենտրոնական հիմնարկները: Պլեխանովը մի առ ժամանակ կալուն էր և Լենինի հետ միասին խմբագրեց «Իսկրայի» վեց համար, սակայն հոկտեմբերի

վերջին, արտասահմանյան Լիգայի համադրումը վերջանալուց հետո, Պլեխանովը դավաճանեց մեծամասնությանը և անցավ մենչևիկներին կողմը: Կուսակցության համադրումարում Լենինը ներկա չէր վորպես՝ արտասահմանում ապրող ուս սոցիալ-դեմոկրատների Լիգայի պատգամավոր. Լիգայում մեծամասնությունը պատկանում էր մենչևիկներին. վորովհետև կուսակցության համադրումարն ավարտվել էր, Լենինը պետք է, վորպես Լիգայի պատգամավոր, նրա առաջ հանդես գար հաշվետվությամբ. մենչևիկներն այդ առթից ոչ-ավելցին վորպեսզի Լենինից վրեժ լուծեն համադրումարում կրած պարտության համար: Լենինի ղեկուցումից հետո համադրումարի մենչևիկյան մեծամասնությունը պնդումով ղեկուցումով հանդես յեկավ Մարտովը, լիգայական մեծամասնությունը (Ակսելրոդ, Պոտրեսովը, Տրոցկին, Ջասուլիչ և ուրիշները) բուռն ծափահարությունը, բացականչություններով ընդունեց և պաշտպանեց նրա հոսը, վոր արտասանեց զրգոված—հիստերիկ տոնով և լիքն էր զրպարտիչ հարձակումներով ու մութ ակնարկներով Լենինի՝ իբր բարոյապես անթույլատրելի ընթացքի մասին համադրումարում: Վորպես բողոք մենչևիկներին այդ անվայել արարքի դեմ, Լենինը հրաժարվեց իր ղեկուցման առթիվ վերջին, յեզրափակման խոսքից և մնացած բայլչեվիկների հետ մի առժամանակ հեռացավ Լիգայի նիստից: Պլեխանովի հետ միասին Լենինը պնդում էր, վոր պետք է ցրել Լիգան, քանի վոր նա հրաժարվում է փոխել Լիգայի կանոնադրության՝ իր ընդունած այն կետերը, վորոնք հակառակ էն համակուսակցական կանոնադրությանը: Այդ վորոշմանը, վոր ձևականորեն ընդունվեց Կի անունից, Լիգան հրաժարվեց յենթարկվել:

Լիգայում տեղի ունեցած դեպքերը վճռական ազդեցություն ունեցան Պլեխանովի հետագա ընթացքի վրա, հենց նույն օրը, յերբ համադրումարը վերջացավ (հոկտեմբերի 31-ին), Պլեխանովը մենչևիկներին ճշուժից վախեցած՝ հայտնեց Լենինին, վոր անհրաժեշտ է կոպտացիայի կարգով «Խսկրայի» խմբագրական կազմի մեջ ընդունել նախկին խմբագիրներին, սպառնալով հակառակ դեպքում հրաժարվել: Պլեխանովի դավաճանությունը մի ծանր հարված էր Լենինի համար, վորի վրա շատ ծանր էր ազդում իր խիստ ստեղծած կուսակցության պառակտումը: Լենինը չէր կարող հաշտվել Պլեխանովի վորոշման հետ: Հնարավոր չհամարելով մենակ իր վրա վերցնել «Խսկրայի» խմբագրումը և միաժամանակ չկամենալով արգելք լինել Պլեխանովին, վորը փորձում էր մենչևիկներին հետ համաձայնություն գալ և այդպիսով խաղաղությունը վերականգնել կուսակցության մեջ, Լենինը նոյեմբերի 1-ին դուրս յեկավ «Խսկրայի» խմբագրությունից, ուր Պլեխանովը կոպտացիայի կարգով ընդունեց հետո Մարտովին, Ակսելրոդին, Պոտրեսովին և Ջասուլիչին: «Խսկրան» անցավ մենչևիկներին ձեռքը, վորոնք հետո մեծամասնություն ստացան կուսակցության խորհրդում: Բայլչեվիկների ձեռքին մնաց միայն Կի, վորի կազմի մեջ մտավ կոպտացիայի կարգով Լենինը (նոյեմբերի յերկրորդ կիսում) և նշանակվեց Կի արտասահմանյան ներկայացուցիչը:

Այժմ Լենինի խնդիրն էր պաշտպանել Կի մենչևիկներին վստահություններից: Սակայն Կի միաբանություն չկար և Կի բոլոր անդամները համերաշխ, համաձայն չեյին Լենինի հետ: Լենինին կոպտացիոն կարգով ընդունելուց հետո շուտով արդեն Կի յերևան լե-

կան հաշտվողական տրամադրութեաններ: Այսպես, ԿԿ, հակառակ Լենինի կարծիքի, արտահայտվում է հոգուտ մի շարք կազմակերպչական զիջումների և խախտումների: Կուսակցութեան խորհրդի նիստում, վոր տեղի ունեցավ 1904 թ. հունվարի 28-30-ին, Լենինը խորհուրդին առաջարկեց վորոշել բալլետիկների և մենշևիկիկների միջեւ տեղի ունեցած ներկուսակցական գաղափարական պայքարի սահմանները, վորպիսի գաղափարով են կուսակցութեան նորմալ կյանքը կազմալուծող՝ պայքարի ձևերը (բոյկոտ, հրատարակել ԿԿ ղեկավարութեամբ աշխատութեւն): Այդ բանաձեռնի փոխարեն մենշևիկներն անցկացրին ուրիշ բանաձեռն, վորը պնդում էր կոոպտացիայի կարգով ԿԿ ընդունել վորոշումաւորութեան կողմնակիցներին, քանի վոր ԿԿ, վորպես թե, ներկայացնում է կուսակցութեան միայն մի մասին: Դրան ի պատասխան Լենինը առաջարկեց մի բանաձեռն, վորը պահանջում էր հրաժիրել կուսակցութեան [1] համապատասխան: Բանաձեռնը մերժվեց:

Համադրելով, վոր հնարավոր չի նորմալ ճանապարհով հաղթահարել կուսակցութեան ձգնաժամը, Լենինն անհրաժեշտ է համարում գիտել [1] համապատասխան և սկսում է ագիտացիա անել համապատասխան հրաժիրելու ոգտին: Հաշտվողական տրամադրութեամբ համակրած ԿԿ չպաշտպանեց Լենինին, ձայների մեծամասնութեամբ համապատասխան հրաժիրելու դեմ արտահայտվեց և նույնիսկ իր վորոշմամբ պարտաւոր հայտնեց Լենինին: Այդ պատճառով Լենինը վորոշ ժամանակով հարկադրված յեղավ դուրս գալ կուսակցութեան խորհրդի կազմից, ուր նա մտել էր վորպես Կենտրոնական Կոմիտեյի ներկայացուցիչ:

1904 թ. մայիսին ժնեուս դուրս յեկավ Լենինի մի մեծ բրոշյուրը—«Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ», վոր նվիրված էր կուսակցութեան ձգնաժամին: Յերբ այդ բրոշյուրի տպագրութեանը վերջանում էր, ԿԿ անդամ, հաշտվողական Նասիով-Գլեբովն անհաջող փորձ արեց դադարեցնելու բրոշյուրի տպագրութեանն ու տարածումը: Այդ գրքում Լենինը տալիս էր պառակտման սպառնիչ վերլուծութեանը, մանրամասնորեն հետեւելով ու պաշտպանելով նրա բոլոր հոտայներն ու հրատարակութեանները և կուսակցութեան մեծամասնութեան ու վորքամասնութեան բաժանվելը բնութագրելով, վորպես կուսակցութեան հեղափոխական ու ոպորտունիստական թեւերի պայքար: Մենշևիկների և նոր «Իսկրայի» բռնած դիրքը Լենինը բնորոշում էր՝ «վորպես ոպորտունիզմ կազմակերպական հարցերում»:

«Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» բրոշյուրը Լենինի միակ խոշոր աշխատութեանն էր պատակտման համարյա մի ամբողջ տարվա ընթացքում: Մի քանի ամսվա ընթացքում, 1904 թ. մայիսից մինչև նոյեմբեր, Լենինը համարյա վորոշինչ չի դրում, սահմանափակվելով միայն Մ. Ոլյմինսկու, Վ. Վարովսկու, Ա. Բազդանովի և ուրիշների դրած մի քանի բրոշյուրների խմբագրութեամբ, վորովհետեւ բալլետիկներն այդ ժամանակ սեփական տպագրի որդան չունեին և Լենինը այդ շրջանում բարոյական չափազանց ծանր դրութեան մեջ էր գտնվում, նա համարյա դրական վոր մի աշխատանք չի կատարում: Մինչդեռ մենշևիկներն իրենց տրամադրութեան տակ ունենալով «Իսկրան», յուրաքանչյուր համարում առանց քաջվելու հարձակվում էին բալլետիկների և անձամբ Լենինի վրա: «Իսկրայի»

հջերում բայլչեիկները դեմ դուրս յեկան նույնիսկ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի այնպիսի հեղինակութուններ, ինչպես, Կ. Կաուցկին և Ռ. Լյուքսեմբուրգը:

Չնայած հաշտվողական ԿԿ հակադեցուծությանը՝ Լենինը շարունակում է ագիտացիա մղել III համագումար հրավիրելու ոգովին: Հուլիսին ԿԿ յերեք անգամները (հաշտվողական Կրասնիս, Նասիով-Գլեբովը և Գայլակերինը) նորից արտահայտվում են III համագումարը հրավիրելու դեմ, հակառակ մի շարք տեղական կազմակերպությունների պահանջին, և վորոշում են կոոպտացիայի կարգով ԿԿ կազմի մեջ ընդունել դարձյալ յերեք հաշտվողականների. միաժամանակ ԿԿ այդ յերեք անդամը վորոշեցին հեռացնել Լենինին ԿԿ գործերն արտասահմանում վարելու պարտականություններից և առաջարկեցին նրան իր աշխատությունները տպագրել միայն ԿԿ համաձայնությունով: Լենինը հրաժարվեց ԿԿ այդ յերեք՝ արագորեն փոքրամասնություն կողմը հակված անդամների «Հուլիսյան ղեկավարացիայի» որինականությունը ճանաչելուց և շարունակեց պայքարել հոգուտ III համագումարը հրավիրելու, վճարար կանգնելով բայլչեիկների կազմակերպման ձևավորման ուղու վրա: Ոգոստոսին Լենինը ղեկավարում է Շվեյցարիայում տեղի ունեցող 22 ականավոր բայլչեիկների ժողովը, վորը մի կոչով դիմում է կուսակցությանը, պահանջելով III համագումարը հրավիրել: Ռուսաստանում այնուամենայնիվ տեղի յեն ունենում մեծամասնություն մի շարք կոնֆերենցիաներ, վորոնք ղեկտեմբերին ստեղծում են մեծամասնության Կոմիտեների Բյուրո— համագումարի հրավիրման նախապատրաստության գործնական կենտրոն: ՄԿԲ կազմը հիմնականում նշել եր Լենինը:

Հսկայական նշանակություն տալով բայլչեիկների ինքնուրույն յեղութներին միջադեպին ասպարեղում, Լենինը կազմակերպում է բայլչեիկների կողմից II Խնտեհացիոնալի Ամստերդամյան կոնգրեսին յերկու պատգամավոր ուղարկելու գործը և մասնակցում և կոնգրեսին ներկայացվելիք զեկուցման կազմելուն և խմբագրմանը:

Տարվա վերջին Լենինը վճռական հարված է հասցնում հաշտվողական ԿԿ, վոր դադարնի կերպով իր կողմի մեջ եր ընդունել կոոպտացիայի կարգով յերեք մենչեիկներին, — լույս ընծայելով հետևյալ բրոշյուրը՝ «Հայտարարություն և փաստաթղթեր կենտրոնական հիմնարկներին և կուսակցության պառակտման մասին», վորի մեջ մեղադրում է ԿԿ յերեք անդամին՝ կուսակցությունը սխառեմատիկաբար խաբելու մեջ: Այդ ժամանակ ել Լենինը ձեռնարկում է մեծամասնության որդան «Վալերյո» թերթի հրատարակությունը:

Դեռ մինչև «Վալերյո» թերթի հիմնումը բայլչեիկների ու մենչեիկներին միջև կազմակերպական տարաձայնությունները մեծացել, դարձել էյին տակտիկական ու քաղաքական տարաձայնություններ: «Ջեմստվոյական կամպանիան և «Խսկրայի» պլանը» բրոշյուրի մեջ Լենինը մի շարք հոգվածներով անխնա քննադատություն է յենթարկում մենչեիկներին ուղարուռնիստական գործեկակերպը, վորոնք ժողովրդական ապստամբություն գլուխ անցած պրոլետարիատի ուշադրությունը չեղում են ինքնակալության դեմ ուղղակի գրոհելուց և պայքարի բարձր տիպեր են համարում բանվորական հոստորների յեղութները լիբերալ բուրժուազիայի զեմստվոյական և այլ ժողովներում: Հավասարապես Լենինը ձաղկում եր մենչեիկներին, վորոնք տրամադիր

եյին լեբեռալներին զեկամար դեր հատկացնելու չարժ-
ման մեջ և մթափնելու, քողարկելու բուրժուական լե-
բեռալիզմի հակահեղափոխական և հակալրջկտարա-
կան բնույթը: Հետագայում, 1905 թ. ամբողջ հեղա-
փոխութեան ընթացքում Լենինը սխտեմատիկ կերպով,
քայլ առ քայլ հետեւում ե մենչեիկները բոլոր թեքում-
ներին ու շեղումներին հեղափոխական մարքսիզմի տա-
րիկական լոզունգների աստիճանով:

1905—1907 թ. թ. ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ Պետերբուրգում ծայր առան հունվարի 22-ի
(9-ի) դեպքերը, վոր Լենինը բնորոշեց վորպես «հեղա-
փոխութեան սկիզբը Ռուսաստանում», նա խելույն և լեթ
որակարգի մեջ դրեց զինված ապստամբութեան գաղա-
փարական—քաղաքական կազմակերպական և տեխնիկա-
կան նախապատրաստութեան և պրոլետարիատի կողմից
այն ղեկավարելու հարցը: Զինված ապստամբութեան
հաջողութեան համար Լենինն անպայման նպատակա-
հարմար և անհրաժեշտ ե համարում «մարտական հա-
մաձայնութիւն կնքել դեմոկրատիայի հեղափոխական
տարրերի հետ, պահպանելով բանվորական կուսակցու-
թեան գաղափարական ու կազմակերպական լիակատար
ինքնուրույնութիւնը: Մեծ նշանակութիւն աւելոյժ
բանվոր դասակարգի մեջ ռազմական տակտիկայի և
ռազմական տեխնիկայի դիտելիքներ տարածելուն, Լե-
նինը «Վպերյոդ» թերթում տպագրում ե Փարիզի կո-
մունայի գեներալ Կլոդեբերեյի հուշիկները փողոցային
կռիւմներին տակտիկայի մասին— նորեց և կարգում
Մարքսի և Ենգելսի հուշածները ռազմական հարցերի
մասին. միջոցներ ե ձեռք առնում զենք գնելու և Ռու-
սաստան ուղարկելու՝ մարտական ջոկատների համար—

անուշադրութեան չի մատնում և վոչ մի մանր հարց,
վորը կապված եր ապստամբութեան նախապատրաստ-
ման և իրագործման հետ— կիպ՝ մինչեւ բոմբեր պատ-
րաստելը:

Ռուսաստանում սկսված հեղափոխութիւնը բնու-
րոշելով վորպես բուրժուական—դեմոկրատական հե-
ղափոխութիւն, Լենինը բանվոր դասակարգի խնդիրն ե
համարում ինքնակալութեան տապալումը զինված ա-
պստամբութեան միջոցով, Սահմանադիր Ժողովի դու-
մարումը և դեմոկրատական հանրապետութեան նվա-
ճումը: Վորպես կենտրոնական լոզունգ, Լենինն ասա-
ջադրեց պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափո-
խական—դեմոկրատական դիկտատուրայի գաղափարը,
հիմնավորելով այդ լոզունգը և պրոլետարիատի ներ-
կայացուցիչներին մասնակցութիւնը ժամանակավոր հե-
ղափոխական կառավարութեան կազմում՝ մի շարք փայ-
լուն հուշածների մեջ («Սոցիալ—դեմոկրատիան և Ժո-
մանակավոր հեղափոխական կառավարութիւնը»,
«Պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական
դեմոկրատական դիկտատուրան», «Ժամանակավոր հե-
ղափոխական կառավարութեան մասին»): Բացի գրա-
նից, Լենինն ընդգծում ե նաեւ այն, վոր հեղափոխական
խնդիրները հաջողութեամբ իրագործելու համար ան-
հրաժեշտ ե հեղափոխական բանակ ստեղծել, և թվում
ե այն վեց հիմնական խնդիրները, վորոնք պետք ե հե-
ղափոխական կառավարութեան ծրագիրը կազմեն.
Համաժողովրդական Սահմանադիր Ժողովի գումարում,
Ժողովրդի ղինում, քաղաքական ազատութիւն, լիակա-
տար ազատութիւն ձնչված և անիրաւահամասար Ժողո-
վուրդներին, ութամյա բանտրական օր և գյուղացիա-
կան կոմիտեներ: Մերկացնելով բուրժուազիայի ոտո-

լաքարշությունն ու վախկոտութիւնը, նրա պատրաստակամութիւնը՝ հեղափոխութեանը դաւաճանելու և ինքնակալութեան հետ դործարքներ կնքելու, Լենինը միաժամանակ պաշտպանում է այն տեսակետը, վոր պրոլետարիատը պետք է ամենայեանհղուն կերպով պաշտպանի գյուղացիական շարժումը՝ կիսլ՝ մինչև վ կարելու ծառիրական հողերի գրավումը: Հեղափոխութիւնը կարող է հաղթանակել միայն այն դեպքում, յերբ դեկալար դերը պատկանի պրոլետարիատին, վոր պետք է անցնի ժողովրդական մասսաների և ամենից առաջ՝ դեմոկրատիայի, հանրապետութեան, միւնիցիպալ-ծրագիրն իրադործելու համար պայքարող գյուղացիութեան գլուխ: Յեւ Լենինը սաստիկ ծաղրում է մենչեւիկներին, վորոնք վախենում են բանվոր դասակարգի գերել-խանութիւնից և պրոլետարիատին վախեցնում են իշխանութիւնը նվաճելու հեռանկարով:

Բայշեւիկներին կողմից 1905 թ. հեղափոխութեան ժամանակ կիրարկելիք հիմնական տակտիկական հրահանգներն ու լողունները հաստատուեցին III-րդ համագումարի բանաձեւերում, իսկ հետո բացառիկ խորութեամբ, լրջութեամբ լուսարանուեցին Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի յերկու տակտիկական դեմոկրատական հեղափոխութեան մեջ» բրոշյուրում, վոր նա գրեց համագումարից հետո անմիջապէս: Միաժամանակ այդ բրոշյուրում Լենինը խիստ քննադատութեան յենթարկեց մենչեւիկներին տակտիկական սլատֆորմը, վորոնք սոցիալ-դեմոկրատիային լողունդ էյին տալիս հեղափոխութեան ժամանակ մնալ վորպէս «ծայրահեղ հեղափոխական ուղղիցիայի կուսակցութիւն»:

Յերբորդ համագումարը, վորին նախապատրաստման և գումարման վրա Լենինը այնքան շատ ջանք էր թա-

փել, անդի ունեցավ 1905 թ. ապրիլի 23-ից — մայիսի 10 Լոնդոնում: Իր առաջ՝ ինքնուրույն բայշեւիկիյան կուսակցութիւն ստեղծելու խնդիր դնելով և տեսնելով, վոր արդէն բայշեւիկիմի կազմակերպական ձեւակերպումը և սահմանադատումը մենչեւիկներից ու հալալողականներից լիակատար ընթացքով է առաջ դնում, Լենինը շարունակում էր յերկուդ կրել հալալողական տրամադրութիւնների ազդեցութիւնից և խստորեն դգուշացնում էր համագումարի կազմակերպիչներին, վորոնք ապրում էյին Ռուսաստանում, վորպէսդի նրանք վոչ մի «լոյալութիւն» հալահալանն կուսակցութեան նկ և իրհրդի հետ իրենց կապերը խզած անձանց հանդեպ: Այդ դործեակերպն այն հետեանքն ունեցավ, վոր մինչև այդ՝ վոստիկանական ճնշումներից արդէն թուլացած նկ անձնատուր յեղավ, ընդունեց համագումարի որինալանութիւնը և մասնակցեց նրա գումարման աշխատանքներին: Նույն այդ պատճառով Լենինն առաջարկեց մերժել Բերեյի առաջարկը, վոր ուղում էր հանդես դալ վորպէս միջնորդ բայշեւիկներին և մենչեւիկների միջև:

Լենինը լրջորեն պատրաստվում էր համագումարին, պատրաստելով համարյա բոլոր հիմնական բանաձեւերի նախագծերը, վորոնք հետո ընդունուեցին համագումարի կողմից (զինված ապստամբութեան մասին, ժամանակավոր հեղափոխական կառավարութեան մասին, սոցիալ-դեմոկրատիայի բացահայտ քաղաքական յելուցի մասին, սոցիալ-դեմոկրատների կողմից ժամանակավոր հեղափոխական կառավարութեան մեջ մասնակցելու մասին, գյուղացիական շարժմանը ցույց տրվելիք վերաբերմունքի մասին): Համագումարում Լենինը հանդես յեկավ մի շարք գեկուցումներով ու ճառերով: Նրա ա-

ռաջարկութեամբ համագումարն արտահայտվեց հոգուս
գլուղացիութեան հեղափոխական ձեռնարկումների
պաշտպանութեան՝ կիս մինչև ամբողջ կալվածատիրու-
կան, յեկեղեցական, վանքապատկան և թագավորական
տան հողերի գրավումը: Միայն մի մեծ հարցի առթիվ
(չհաշված կուսակցական մեկ թե յերկու կենտրոն ու-
նենալու անհրաժեշտութեան վերաբերյալ՝ համեմատու-
բար փոքր հարցը) համագումարը չհամաձայնվեց Լենին-
նի հետ, և համագումարն իրավացի չէր. — այդ՝ կալ-
մակերպութիւններում բանվորների և ինտելիգենցիայի
փոխհարաբերութեան սուր հարցն էր: Լենինը մերժում
էր մենչևիկներին կողմից դեմադոկրաբար քարոզչոյ՝
լիակատար դեմոկրատիայի և ընտրողականութեան լու-
կզբունքը, վորը հնարավոր չէր ուսական վոտովկանա-
կան պայմաններում, սակայն յեռանդով պաշտպանում
էր այն տեսակետը, վոր պետք է առավելագույն թիվով
բանվորներ մտցնել կոմիտեների մեջ: Համագումարում
ներկա գտնվող կոմիտեյականների մեծամասնութիւնը
այդ հարցում համառոտ և չհամաձայնվեց ընդունել հա-
մագումարին առաջարկված բանաձևը:

Իր կազմով գլուս բաղլչեվիկյան III համագումա-
րում Լենինն ընտրվեց Կի անդամ և նրա կողմից նշա-
նակվեց «Պրոլետարիյ» թերթի խմբագիր, վորն սկսել
էր լույս տեսնել «Վպերյոդի» փոխարեն: Վորովհե-
տեմբ բաղլչեվիզմը ձեռնկերպում էր, վորպես քաղաքու-
կան ինքնուրույն կուսակցութիւն և լիովին սահմանա-
դատվում էր մենչևիկներին, հետևապես չափազանց
ամբացավ ու ուժեղացավ, ուստի Լենինը հնարավոր էր
համարում հարց դնել միանալու մենչևիկներին հետ, վո-
րոնց յետեմից էր ընթանում բանվորների մի մասը, այն
պայմանով, վորպէսզի բոլոր սոցիալ-դեմոկրատներն

ընդունեն կուսակցութեան մարտունակութիւնն ապա-
հովող վորոշ կազմակերպական նորմաներ: Մեզ հաա-
կապես միութիւն է պետք, — գրում էր Լենինը, — և վոչ
թե կուսակցութեան յերկու մասերի «չփոթում»:

Հեղափոխութեան ամբողջ ընթացքում Լենինը չա-
րունակ վեր էր լուծում պայքարի շրջանների ու ձևերի
փոփոխութիւնը, արձագանգելով Ռուսաստանում տե-
ղի ունեցող մասսայական շարժման բոլոր արտահայտու-
թիւններին (հունվարի 9-ը, «Պատյոմկին», հոկտեմ-
բերյան ընդհանուր գործադուլ և այլն), ուսումնասիրե-
լով, ամփոփելով և ընդհանրացնելով հեղափոխական
պայքարի փորձը (համեմատիր, որինակ, «Մոսկվայի
դեպքերի դասերը») և տալով լողունդներ, վորոնք շար-
ժումը բարձրացնում, հասցնում էին պայքարի հաջորդ
ավելի բարձր աստիճանին:

Յերբ կառավարութիւնը հայտարարեց «Բուլիդի-
նյան Դումայի» առաջիկա գումարման յաւան, վորը
պետք է խոչոր բուրժուադկայի և կալվածատերերի ներ-
կայացուցիչներին կազմված խորհրդակցական մարմին
լիներ, Լենինը պնդում էր, վոր պետք է ակտիվ բոյկոտի
յենթարկել, վիժեցնել Բուլիդինյան Դուման, մասսանե-
րին մորիլիզացիայի յենթարկելով ապստամբութեան
լողունդով և կոչ անելով նրանց ստեղծելու մարտական
ջոկատներ ու հեղափոխական խմբեր: Յերկետ ունենա-
լով զինված ապստամբութիւնը, անդադար ապացուցե-
լով, վոր միայն ապստամբութեան հաղթանակը, միայն
պրոլետարիատի և գլուղացիութեան հեղափոխական
դեմոկրատական դիկտատուրայի հաղթանակը կարող է
ամբացնել հեղափոխութեան այն կամ այն նվաճումը,
Լենինը քննադատում էր «հեղափոխական ինքնավարու-

թխան» մենչեխկյան լողունդը, ըստ վորի այդ ինքնավար-
րությունը հնարավոր եր, իբր թե, առանց հին իշխա-
նության տասալման, Սահմանադիր Ժողովի «ինքնա-
բուխ», վորպես թե, առանց Ժամանակավոր հեղափո-
խական կառավարության առկայության հնարավոր
«ծննդի» բունդյան թեորիան և աջ թեխի ուղորտունխատա-
կան մեծու պատիկ մյուս դադարները: Լենինը շատ
անգամ և ընդգծել 1905 թ. հեղափոխության բուրժուա-
կան-դեմոկրատական բնույթն ընդհանրապես և գյուղա-
ցիական շարժումներին՝ ֆասնավորապես, պնդելով, վոր
պետք է խիստ տարբերել բուրժուական-դեմոկրատական
հեղաշրջումը սոցիալիզմականից և այդ տեսակետով
քննադատելով եսերներին, վորոնք հալսարար
հիմունքներով հող ստանալու գյուղացիական պահանջ-
ները հրամցնում եյին, վորպես սոցիալիզմ, և այն մեն-
չեվիկներին, վորոնք կողմնակից եյին յուրահատուկ
ձևով մեկնարանվող պերմանենտ հեղափոխության
(Պարվուս—Տրոցկի) և տվյալ հեղափոխության մեջ
հնարավոր եյին համարում, գյուղացիությունն անտե-
սելով, առաջադրել զուտ բանվորական կառավարու-
թյան լողունդը: «Պրոլետարիատը պետք է մինչև վերջը
հասցնի դեմոկրատական հեղաշրջումը, միացնելով իր
հետ գյուղացիության մասսային, վորպեսզի ուժով
ջախջախի ինքնակալության դեմադրությունը և վոչըն-
չացնի, անվտանգ դարձնի բուրժուազիայի անկայունու-
թյունը: Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հե-
ղաշրջում կատարի, միացնելով, իր հետ բնակչության
կիսապրոլետարական տարրերի մասսային, վորպեսզի
ուժով խորտակի բուրժուազիայի դեմադրությունը և
վոչնչացնի գյուղացիության և մանր բուրժուազիայի

անկայունությունը», — այսպես եր ձեվակերպում Լենի-
նը պրոլետարիատի ինդիքները «Յերկու տակտիկա»
բրոշյուրում:

1905 թ. հոկտեմբերյան ընդհանուր գործադուլից
և հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո Լենինը Ստոկ-
հոլմի և Հելսինգֆորսի վրայով նոյեմբերի 20-ին (7-ին)
գալիս և Պետերբուրգ և այստեղ մի առ ժամանակ ապ-
րում է կիսալեզալ, ղեկավարելով բայլչեվիկների գոր-
ծունեյությունը, մասնակցելով ԿԿ նիստերին, բայլչե-
վիկյան լեզալ «Новая Жизнь» թերթի խմբագրական
աշխատանքներին և հանդես դալով կուսակցական ժո-
ղովներում: Հենց առաջին հոդվածում, վոր Լենինը Պե-
տերբուրգ դալուց հետո գետեղեց «Новая Жизнь»
թերթում, նա արտահայտում է հոգուտ կուսակցու-
թյան փերակառուցման դեմոկրատական հիմունքնե-
րով, քանի վոր կուսակցության գոյության պայման-
ները հոկտ. 17-ից հետո ավելի ազատ եյին դարձել, և
առաջարկում է առավելագույն թվով բանվորներ ընդու-
նել կուսակց. մեջ՝ կուսակցության դադունի ապարա-
տը պահպանելու պայմանով: Նա մի քանի անգամ այցե-
լում է Պետերբուրգի բանվորական պատգամավորների
Խորհուրդը, ուսումնասիրելով բանվորական հեղափո-
խության շարժման այդ նոր ձևը: Այդ ժամանակ, յերբ
մենչեխկները Խորհուրդներում միայն «հեղափոխական
ինքնավարություն» եյին տեսնում, Լենինը հանձարե-
ղորեն Խորհուրդները բնորոշեց վորպես ապստամբու-
թյան մարմիններ և վորպես նոր իշխանության սաղմա-
յին որդաններ: Պետերբուրգի խորհրդում Լենինը հան-
դես յեկալ միայն մեկ անգամ, 1905 թ. նոյեմբերի 26-ին
(13-ին), մասսայական լոկաուտի հարցի առթիվ: Դեկ-

տեմբերին Լենինը ղեկավարում է բայլչեվիկներին Տափ-
մերձիկայան կոնֆերենցիան, վորտեղ հանդես է դալիս
յերկու ղեկուցումով—ընթացիկ մոմենտի և հողային
հարցի մասին. վերջին հարցի վերաբերյալ բանաձևում
ներառաջարկութեամբ ծրագրից հանվում է «կոորնե-
րի» վերաբերյալ կետը և մտցվում է հատուկ կետ՝ «յու-
ղացիների կողմից կալվածատիրական և այլ հողերը
գրավելիս նրանց պաշտպանելու մասին»:

Դեկտեմբերյան ապստամբութեան պարտութունից
հետո, վորի դասերին Լենինը վերաբերվեց շատ մեծ
ուշադրութեամբ, քննադատութեան յենթարկելով Պլե-
խանովի ոպորտունիստական ֆորմուլան—«պետք է եր
զենք վերցնել» Լենինը շարունակում է յերկտալ ընդու-
նել հեղափոխութեան նոր վերելքը և նոր զինված ա-
պստամբութունը, վորպես նրա անխուսափելի հետե-
վանք. նա շարունակում է պաշտպանել I Դումայի բոյ-
կոտի տակտիկան, համարելով այդ դուման ժողովրդա-
կան ներկայացուցչութեան կեղծիք, և մերկացնելով կա-
դետների սահմանադրական յերազները և նրանց ու մեծ-
չեվիկներին քարոզն այն մասին, թե իբր, Ռուսաստանի
համար սկսվել է սահմանադրական ու պարլամենտական
զարգացման դարաշրջան: Մասնավորապես Լենինն ան-
հրաժեշտ է համարում, վոր կուսակցութունը պաշտ-
պանի մարտական ջոկատներին գործունեութիւնը:
Պաշտպանելով պայքարի հեղափոխական ուղիները և
մերկացնելով կադետների համաձայնողականութունը,
Լենինը պայքարում է կադետական Դուման և դումայա-
կան (կադետական) մինիստրութեան պաշտպանութեան
լոզունգների դեմ, վոր առաջադրում է յին մենչեվիկները
և IV համագումարում ընտրված մենչեվիկյան ԿԿ-ը:

վորպես հակակշիռ այդ լոզունգին Լենինն առաջարկում
է «Դումայի ձախ խմբակներից գործադիր կոմիտե»
կազմելու դադարարը: Դումայի ներսում Լենինը պաշտ-
պանում է այն տեսակետը, վոր բանվորական ֆրակցիան
պետք է մոտենա հեղափոխական ղեմոկրատիայի հետ՝
հանձինս տրուդավիկների (աշխատավորականների),
վորոնք արտահայտում է յին դուրացիութեան շահերը,
միաժամանակ մատնանշելով նրանց ղեմոկրատիկմի
թերատութիւնը և անհետեւողականութիւնը, պահան-
ջելով, վոր նրանք ավելի հեղափոխական դիրք բռնեն,
և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը համարելով տրու-
դավիկների անջատումը կադետներից:

Իր քաղաքական հայացքները 1906 թ. առաջին կի-
սում Լենինը պարզում, արտահայտում է մասամբ բրո-
չյուրներում, մասամբ բայլչեվիկյան լեզալ թերթե-
րում—«Վալնա», «Վպերյոդ», «Եխո»: Առանձնապես
նշանավոր է Հելսինգֆորսում 1906 թ. ապրիլին գրված
«Կադետների հաղթանակը և բանվորական կուսակցու-
թեան խնդիրները» բրոշյուրը, վորի մեջ Լենինը տալիս
էր կադետական կուսակցութեան փայլուն վերլուծու-
թիւնը և գրում էր, վոր «մեր խնդիրները վոչ թե կա-
դետական Դումայի պաշտպանութիւնն է, այլ Դումայի
ներսի և այդ Դումայի հետ կապված կոնֆլիկտների ոգ-
տագործումը՝ թշնամու վրա հարձակվելու ինքնակալու-
թեան դեմ ապստամբելու հարմարագույն բոսկն ընտ-
րելու համար»: Այդ բրոշյուրում եւ շարադրված են Լե-
նինի չափազանց կարեւոր և արժեքավոր մտքերը դեկ-
տատուրայի ելութեան մասին: Լենինի՝ տվյալ շրջանին
վերաբերվող մյուս խոշոր աշխատութիւններից անհրա-

Ժեշտ ե նշել «Բանվորական կուսակցության հողային ծրագրի վերաքննությունը»:

Աղբերելով սկզբում Պետերբուրգում, հետո Կոստկա-
յայում (Ֆինլանդիայում, Պետերբուրգից վոչ-հեռու),
Լենինը բալական հաճախ հանդես է դալիս կուսակցա-
կան և բանվորական ժողովներում և մոտիկ մասնակցու-
թյուն է ունենում Պետերբուրգի սոց. — դեմոկրատական
կազմակերպության մի շարք կոնֆերենցիաներում, դա-
րպարապես զլխավորելով Պետերբուրգի բայկելի-
կյան կոմիտեն և մշտական պալքար մղելով մենչելիկ-
ները IV համագումարից հետո — մենչելիկյան Կենտրոնա-
կան Կոմիտեյի դեմ: Լայն չափերով հայտնի դարձավ
Լենինի 1906 թ. մայիսի 22-ի (6-ի) յեղույթը, վոր նա
ունեցավ Կարսով ազգանվան տակ՝ Պանինայի տանը
տեղի ունեցած միտինգում:

Յերկու անգամ, հունվարին և մարտին, լենինը կուսակցական գլխավորով զալիս և Մոսկվա, և յերկրորդ անգամ՝ ընդ և մնում ձերբակալի:

Յերբ կոտակցութեան որակարգի մեջ և զբաղում IV, աշխատեալ կոչված «Միացուցիչ» համապատասխան հրապարակում հարցը, Լեհիներ մինչև համապատասխան մշակում և մեծամասնութեան տակաւիկական պատասխանում, անցեկացնում բաշխելիքները ժողովներում և մասնակցում և հոգիին ծրագիրը մշակող հանձնաժողովում :

1906 թ. ապրիլի 23—մայիսի 8-ը (նոր տոմարով) Ստոկհոլմում տեղի ունեցած IV համազումարում Լե-
նինը, վոր համազումարի նախագահության մեջ եր-
մտնում, ղեկավարում ե բալլետիկյան ֆրակցիայի աշ-
խատանքը ե համազումարում հանդես ե դալիս մի շարք
զեկուցումներով ու ճառերով (հողային հարց, ներկա

մոռենաւ և պրօլետարիատի խնդիրները, դումայական դործեւակերպը, զինված ապստամբութիւն)։ Առանձնապէս նշանավոր և Լենինի ճառը, վորով նա համադումարում պաշտպանում եր հողի ազգայնացումը և քննադատում եր մենչևիկյան քաղաքայնացումը, վորը իսկական ազրարային հեղափոխության և կազետական հողային ռեֆորմի միջինը՝ ներկայացնող մի բան եր։ Հողի ազգայնացումը Լենինը կապում եր բուրժուական-դեմոկրատական հեղափոխութիւնը մինչև վերջը հասցնելու, մինչև պրօլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական ղեկատարութեայի լիակատար հաղթանակը հասցնելու խնդրի հետ։ Իր մեծամասնությամբ մենչևիկյան համադումարը վերջանալուց հետո բայելիկներին անունից հրատարակվեց Լենինի ձեռքով գրված և կուսակցությանն ուղղված մի «դիմում», վորի մեջ քննադատության ելին յենթադիմում մենչևիկյան բանաձևերը, և մատնանշվում եր, վոր բայելիկները պառակտման դեմ են, սակայն նրանք միաժամանակ գաղափարական սլաքար են մղելու «համադումարի այն յերեք վորոշումների դեմ, վոր մինք սխալ ենք համարում»։ Համադումարի արդյունքները Լենինն ամփոփեց «Ձեկուցում միացուցիչ համադումարի մասին» բրոշյուրում։ Սկսած IV-րդ համադումարից, Լենինը մտնում ե անպաշտոն կերպով գոյութիւն ունեցող բայելիկյան կենտրոնի մեջ, վորը ղեկավարում և բայելիկների ֆրակցիայի գործունէութիւնը։

Յերբ Ի Դուման ցրելուց հետո, հուլիսին, ծաղա-
վեցին Սվյատոքի և Կրոնտադի ապստամբութիոն-
ները, Լենինը հարց և դնում, Վոր պետք և պաշտպանե-
լալդ ապստամբութիոնները Պետերբուրգի բանվորներ:

գործադուլով, և շատ խիստ քննադատութեան և յեն-
թարկում մենչեիկյան կի-ին, վոր դուրսը կորցրել եր,
և Դոման ցրելու առթիվ նրա ընդունած կիսատ լո-
գունդները: Մասսայական շարժումները սակայն խոշոր
չափեր չընդունեցին: Լենինը, վոր առաջվա նման կանգ-
նած եր զինված ասպետաբություն պատրաստելու ան-
հրաժեշտութեան տեսակետի վրա, անհրաժեշտ և համա-
րում վերաքննութեան յենթարկել բայլչեվիկներին նախ-
կին դումայական գործելակերպը և արտահայտվում և
հոգուտ II Դումային մասնակցելուն, համարելով այն
պայքարի միջոցներից մեկը, վորը սակայն յերկրորդա-
կան, ստորագաս դեր և խաղում: Պաշտպանելով հեղա-
փոխական հնարավորութիւնները մինչև վերջն ոգտա-
գործելու անհրաժեշտութիւնը, Լենինը նպատակահար-
կար և համարում, վորպեսզի կուսակցութիւնը կազ-
մակերպի և պաշտպանի բանվորական առանձին խմբերի
կողմից կառավարական ուժերի դեմ մղվող «պարտի-
զանական պատերազմը»: Պնդելով այն տեսակետը, վոր
պրոլետարիատի համար անհրաժեշտ և ընտրութիւննե-
րի ժամանակ լիակատար ինքնուրույնութիւն պահպա-
նելը, Լենինը վճռականորեն պայքարում և կադետների
հետ բլոկ կազմելու ծրագրի դեմ, վոր պաշտպանում
էին մենչեվիկները, համարելով այդ լիբերալ-միադե-
տական/բուրժուազիայի փաստական դերի շխանութիւն,
թուլատրելի գտնելով միայն համաձայնութիւնը հե-
ղափոխական դեմոկրատիայի հետ, հանձնա տրուդա-
վիկների ու եսեոների, և քննադատում և «Դումայի լի-
ակատար իշխանութեան» պլեխանովյան լոգունդը:
«Ձախ բլոկի» և միաժամանակ կադետների դեմ պայքա-
րելու գործելակերպը Լենինը պաշտպանում եր մի շարք

հոգւածներում ու բրոշյուրներում, Տամերֆորսում
(1906 թ. նոյեմբերին) տեղի ունեցած համառուսական
կոնֆերենցիայում, Պետերբուրգի Կազմակերպութեան
կոնֆերենցիայում և կուսակցութեան V համագումա-
րում: Քանի վոր այդ շրջանում Կ. Կաուցկու հայացք-
ները մոտենում էին բալչեվիկների հայացքներին, ուս-
տի Լենինը թարգմանում և իր հառաջարանով հրատա-
րակում և Կաուցկու «Ռուսական հեղափոխութեան շար-
ժիչ ուժերը և հեռանկարները» աշխատութիւնը. հրա-
տարակում և Մարքսի՝ Կուզելմանին դրած նամակը
(Մարքսի աշխատութիւններով Լենինը զբաղվում և չա-
րունակ, միշտ դիմելով նրա և Ենգելսի գրվածքներին և
այտեղից հանելով ցուցումներ ընթացիկ պայքարի հա-
մար) և Վ. Լիբկնեխտի «Վո՛չ մի կոմպրոմիս, վո՛չ մի
րնտրական համաձայնութիւն» բրոշյուրը:

Կադետները հետ բլոկ կազմելու հողի վրա մենչե-
վիկների դեմ սկսված պայքարն առանձնապես սուր ձե-
քեր և ընդունում Պետերբուրգի կազմակերպութեան մեջ:
Կազմակերպութեան մեջ մեծամասնութիւն կազմելով,
մենչեվիկները, չկամենալով հրաժարվել կադետների
հետ բլոկներ կազմելու տեսակետից, պառակտեցին կադ-
ետակերպութիւնը, հեռանալով 1907 թ. հունվարին դու-
մարված պետերբուրգյան կոնֆերենցիայից, վորը դե-
կավարում եր Լենինը: Մենչեվիկների ուղորտունիզմը և
նրանց պառակտողական քաղաքականութիւնը Լենինը
նշովակեց մի շարք բրոշյուրներում («Սոցիալ-դեմոկ-
րատիան և Դումայի ընտրութիւնները», «Կլեսս հիմարի
դատաստանը», «Պետերբուրգի ընտրութիւնները և
31 մենչեվիկների կեղծավորութիւնը»), մեղադրելով
մենչեվիկներին բանվոր դասակարգին դավաճանելու և
կադետների հետ սակարկելու համար: Մենչեվիկյան կի

վորոշեց Լենինին կուսակցական դատի հանձնել: Դատարանում արտասանած իր պաշտպանողական ճառը Լենինը վերածեց մենչևիկյան կի դեմ ուղղված մեղադրական ճառի: Մենչևիկյանը վախեցան «դատը» շարունակել, և դործը կարճվեց: Այդ դործի հանդամանքները մասին մանրամասնորեն Լենինը գրեց «Ջեկուցում ՌՄԴԻՅ V համագումարին պետերբուրգյան պառակտման և նրա հետ կապված կուսակցական դատարան հիմնելու մասին»: Բայլչևիկյան թերթերը Դումայի ցրումից հետո, յերբ ռեակցիան ուժեղացավ, փակվեցին, ուստի Լենինը հնարավորություն ուներ լանվոր դասակարգի խնդիրները լուսարանելու միայն լեզալ բրոշյուրների մեջ («Դումայի ցրումը և պրոլետարիատի խնդիրները», «Սոցիալ-դեմոկրատիան և լիտերական համաձայնությունները») և կառավարության կողմից արագ փակվող շարաթաթերթերում («Тернии Труда», «Простые Речи», «Зрение»), հետո, յերբ կառավարական ճնշումները II Դումայի ղումարման չըջանում մի փոքր թուլացան—բայլչևիկյան լեզալ թերթերում «Новый Луч» և «Наше Дело», իսկ գլխավորապես բայլչևիկյան անլեզալ որդան «Пролетарий»-ում, վորն սկսեց լույս տեսնել 1906 թ. աշնանից ֆինլանդիայում: I Դումայի ցրումին հաջորդող չըջանում Լենինը ուշադրությամբ վեր և լուծում այն պրոցեսները, վորոնք տեղի յեն ունենում սոցիալիստական և հեղափոխական կուսակցությունների ներսում, արձանագրում և ետքների կուսակցություն զաղափարական ու քաղաքական անկումը, մերկացնում և հստական կուսակցության ներքին շերտավորման միջոցով նոր կազմակերպվող «Աշխատավորական Ժողովրդական—սոցիալիստական կու-

սակցություն» («հստական մենչևիկյան») ոպորտունիստական եյությունը, յեռանդով պայքարում և «հեղափոխական միջավայրի քաղքենիականություն» դեմ, անկումային, ռենեգատային տրամադրությունների դեմ:

Սուանձնանդես Լենինը նշում և մենչևիկյանի ճգնաժամը, ժամը, ցույց տալով նրա ծոցում ծնունդ առնող այն զաղափարները, վորոնք լիկվիդատորություն մի ամբողջ սխառմի վերածվեցին: Լենինը խիստ հարկածում և մենչևիկյանի կողմից քարոզվող «բանվորական համագումարի» զաղափարը, վորի նպատակն եր վոչընչացնել սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և այն փոխարինել պրոլետարիատի անկուսակցական քաղաքական կազմակերպությամբ:

Յերկրորդ դումայի բացումից հետո, վոր տեղի ունեցավ 1907 թ. մարտի 5-ին (փետրվարի 20-ին) Լենինն ուշադրությամբ հետեվում և նրա աշխատանքներին, ընդգծում և սահմանադրության յերեկույթական պատիր բնույթը, մերկացնելով կադեսներին, քննադատելով մենչևիկյանի ոպորտունիզմը, մատնանշելով սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիայի սխալները. պահանջելով, վոր սոցիալ-դեմոկրատիան, ինչպես հարկն և, տանի իր յետեվից դեմոկրատական մանր բուրժուազիային, պրոպագանդ մղելով այն մասին, վոր մասսաները վճռական պայքարով պետք և վոչնչացնեն ինքնակալությունը և ճորտատիրություն բոլոր մնացորդները: Կարելիք նշանակություն տալով սոցիալ-դեմոկրատ—բայլչևիկյան յելույթներին Դումայում, Լենինը նրանց համար ճառերի նախագծեր եր գրում (որ., հողային հարցի վերաբերյալ ճառի նախագիծը): Աշխատանքի

այդ մեթոդը Լենինը առանձնապես լայն կերպով կիրառում է IV-րդ Դումայի շրջանում, յերբ նա մի ամբողջ շարք ճառեր է գրում բայլչեվիկ պատգամավորների համար:

Մայիսի 13-ից մինչև 1-ը (ն. տ.) Լենինը մասնակցում է ՌՍԴԲԿ V համագումարի աշխատանքներին, Լոնդոնում: Համագումարից շատ առաջ Լենինը մշակում է համագումարին առաջարկվելիք բայլչեվիկյան բանաձևերի նախագծերը, վորոնք հետո ընդունվում են բայլչեվիկյան կուսակցական կազմակերպությունների համագումարում (Պետերբուրգի, Մոսկվայի կոմիտեները և այլն): Միաժամանակ Լենինը քննադատություն է յենթարկում մենչևիկներին տակտիկական պլատֆորմը: Համագումարում, վորտեղ բայլչեվիկները մեծամասնություն էին կազմում, Լենինը հանդես յեկավ մենչևիկյան ԿԿ գործունեության քննադատություն, և մի շարք հարցերի վերաբերյալ ճառերով: Առանձնապես կարևոր նշանակություն ունի Լենինի ղեկուցումը սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքի մասին դեպի բուրժուական կուսակցությունները, և համագումարի կողմից այդ հարցի առթիվ ընդունված (լենինյան) բանաձևը, վորի մեջ մատնանշվում էր, վոր լիբերալ-ապետական բուրժուազիայի կուսակցությունը—կադետները—վորոշակի կերպով յերես է դարձել հեղափոխությունից և նպատակ է դրել վերջ տալ հեղափոխությանը հակահեղափոխության հետ գործարքներ կնքելու միջոցով: Նարոդնիկների նկատմամբ մատնանշվում էր նրանց տատանումները լիբերալների դերի չխառնված յենթարկվելու և կալվածատերերի ու ինքնակալության դեմ վճռականորեն պայքարելու միջև, և սոցիալ-դեմո-

կրատներին առաջ խնդիր էր դրվում «բոլոր ուժերով խել նարոդնիկներին լիբերալների ազդեցությունից ուղեկալարությունից»: Հետագայում Լենինը մի քանի անգամ կանգ է առնում այդ բանաձևի վերլուծության ու հիմնավորման վրա, մեծ նշանակություն տալով նրան:

1907 թ. հունիսի 16-ի (3-ի) պիտական հեղաշրջումը (II Դումայի ցրումը, ընտրական նոր որենքը, վորը ծայրահեղ չափերով սահմանափակում էր դեպի զացիների և հատկապես բանվորների ընտրական իրավունքները) հակահեղափոխության լիակատար հաղթանակն էր: Մասսայական հեղափոխական շարժման անկման հետևանքով հեղափոխական կուսակցությունների մեջ սկսում են առանձնապես ուժեղանալ ունեգատային տրամադրությունները, վորոնց դեմ հանդես է գալիս Լենինը խիստ ձևով: Միաժամանակ նա համառ պայքար է մղում բայլչեվիկի մի ներսում զգալի չափեր ընդունած «ձախ» հոսանքի դեմ: Բոյկոտիստները Մ. Բադդանովի և Լ. Կամենևիի գլխավորությամբ բացահայտ ահալցիայի այդ շրջանում շարունակում էին կիրառել անմիջական հեղափոխական կռիվ մեթոդներ, վորոնք հնարավոր չէին մասսայական շարժման այդ շրջանում, և այդ հիման վրա արտահայտվում էին 111

Դումայի ընտրությունների դեմ: Լենինը վճռարար դուրս է գալիս բոյկոտային տակտիկայի դեմ, վորի հաղթանակի դեպքում կուսակցությունը կմեկուսանար ու կկտրվեր բանվորական մասսաներից,— իր հողվածներում («Բոյկոտի դեմ»), ճառերում ու ղեկուցումներում, վորոնցով նա հանդես է գալիս Պետերբուրգի կուսակցական կոնֆերանսներում և համառուսական յերկու կոնֆերանսներում (1907 թ. ոգոս-

տոսին Վերորդում և նոյեմբերին Հելսինգֆորսում) : Բոյկոտիստները պարտվում են : Պաշտպանելով այն տեսակետը, վոր անհրաժեշտ և կուսակցութեան կողմից ոգտադործել Դումայի ամբիոնը բանվորական մասսաների սոցիալիստական դաստիարակութեան և կադմակերպման (սակայն վոչ յերեք Դումայում «որգանական» աշխատանք կատարելու) համար, միաժամանակ առավելագույն չափերով հնարավոր անլեզալ աշխատանք կատարելով և անլեզալ ապարատը լիովին պահպանելով, Լենինը շարունակ մատնանշում է, վոր բանվոր-պատգամավորների պարտականութեանն է՝ ինրնակալութեան և կալվածատերերի ու խոշոր բուրժուազիայի փոխադարձ դործարքի արդյունք հանդիսացող Դումայում մերկացնել վոչ միայն կառավարութեանը, սե հարյուրակայիններին ու ակոյարրիստներին, այլև կադետներին, լիբերալ բուրժուազիային, վոր բուրժուովին հակահեղափոխականացել է և միայն սպառնացիցիա յե խաղում ցարիզմի հանդեպ :

1907 թ. ոգոստոսին Լենինը մատնակցում է Միտերնացիոնալի Շտուտգարդյան կոնգրեսին և մտնում է նրա նախագահութեան կադմի մեջ : Կոնգրեսի հանձնաժողովներից մեկում Լենինը և Ռ. Լյուքսեմբուրգը մի քանի կարեւոր ուղղումներ են մտցնում միլիտարիզմի հարցի վերաբերյալ Բերլին բանաձևի նախագծի մեջ : Ուղղումներից մեկը սոցիալիստներին վրա պարտավորութեան էր գնում պատերազմ ծաղելու դեպքում «բոլոր ուժերով աշխատել ոգտադործել պատերազմի առաջացրած տնտեսական ու քաղաքական ճգնաժամը՝ ժողովրդական մասսաների քաղաքական գիտակցութեանն արթնացնելու, խթանելու և կապի-

տալիստների դասակարգի տիրապետութեան խորտակումն արագանելու համար» : Բոլոր ուղղումները հիմնականում ընդունվեցին կոնգրեսի կողմից : Կոնգրեսից հետո Լենինը մտավ Միջազգային սոցիալիստական բյուրոյի կադմի մեջ և մի քանի անգամ մատնակցեց նրա աշխատանքներին, լինելով նրա ծայրահեղ ձախթեում (տես Լենինի հոդվածը-«Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստը», 1908 թ. «Միջազգային սոցիալիստական բյուրոյի տասնմեկերորդ նստաշրջանը», 1910 թ. և այլն) :

1907 թ. յերկրորդ կեսում Լենինին հաջողվեց լույս ընծայել իր հոդվածների ժողովածուն-«12 տարի» : Գիրքը, սակայն, անհապաղ դրավվեց և կրկին հրատարակվեց միայն 1918 թ. : Նույն այդ ժամանակ ել Լենինը դրեց «Հոգային հարցը» և «Մարքսի քննադատները» ընդհանուր վերնագիրը կրող հոդվածների սերիայի շարունակութեանը (հրատարակված են լեզալ կերպով) և ավարտեց իր մեծ աշխատութեանը-«Հոգային հարցը ռուսական առաջին հեղափոխութեան մեջ» : Գիրքը տպագրվեց հաջորդ տարին, սակայն վոչնչացվեց վոստիկանութեան կողմից և հրապարակվեց միայն 1917 թվին : Այդ Լենինի չափազանց կարեւոր աշխատութեանն է, վոր ցույց է տալիս, թե բուրժուական հեղափոխութեան հիմքը Ռուսաստանում հոգային հարցն է, վորի լուծումը հնարավոր է յերկու ուղիներով. — կամ ճորտատիրութեան վերացում, վոր կատարվում է ճորտատիրական կալվածատիրական տնտեսութեանների դանդաղ փոխանցումով յունկերական-բուրժուական-ի («պրուսական ուղին»), կամ հին կարգի հիմքերի բռնի տապա-

լում պրոլետարիատի կողմից ղեկավարվող պոլիտացիո-
նալ ճակատի հեղափոխական մասնաճյուղի ձևավորումը, հողի մաս-
նավոր սեփականության վերացումը և հողի ազգայնա-
ցումը, առավել ազատ պայմանները ստեղծումը կապիտա-
լիզմի զարգացման և դասակարգային պայքարի համար
(վոր պատմականորեն Լենինն անվանում է զարգաց-
ման «ամերիկյան» ուղի)։ Այդ դրքի լավանդակու-
թյունը Լենինը կոնսոլիդացիոն ձևով հաջորդ տարին
տվեց լեհական սոցիալ-դեմոկրատական «Полонд
Социал-демократичны» ամսագրում («Սոցիալ-դեմո-
կրատական հանդես»), մասամբ էլ «հողային հարցը
Ռուսաստանում XIX դարի վերջին» հոդվածում, վոր
գրված էր Գրանատի հանրապետական լոտարանի
համար, սակայն լույս տեսավ միայն 1918 թվին։

1907 թ. հեղափոխության պարտությունն այնքան
արդեն խորացավ, սեպտեմբերյան այնքան ուժեղացավ, վոր
Լենինը ստիպված էր կոնոկիալացից, վոտականու-
թյունից թագնավելով, անցնել մի փոքրիկ նվաճում
Հեյ-
սինգֆորտի մոտ, իսկ հետո 1907 թ. գեկտեմբերին գնալ
արտասահման, վորպեսզի իրեն հետևող վոտականու-
թյունից ծածուկ նավ հոտի, նա ստիպված էր գիշերը
Արո քաղաքից մի քանի վերստ ստուգի վրայով գնալ
մինչև այն կղզին, վորտեղ կանգնած էր չուկենավը։ Սա-
նույն անհուսալի յեր, մի տեղում սկսում է վոտքի տա-
կը իջնել և Լենինը, քիչ է մնում, խեղդվի։ Մտով հոգի է
Բեռլինի վրայով Լենինը գնաց Շվեյցարիա-ժնև։
Սկզբից յերկրորդ վտարանդիության չրջանը, վոր տե-
վեց 9 տարուց ավելի և անհամեմատ ավելի ծանր
յեղավ, քան ստաջին վտարանդիությունը։

1908 թ. ընթացքում Լենինը, վոր ապրում էր
սկզբում ժնևում, իսկ հետո Փարիզում, ուր նա տե-
ղափոխվել էր ուշ աշնանը, հոկտեմբերին, առանձին
ուշադրություն էր նվիրում այն նոր կացությանը,
վոր ստեղծվել էր Ռուսաստանում 1907 թ. հունիսի
16-ի (3-6) հեղաշրջման հետեվանքով, և հողային
այն նոր քաղաքականությանը, վոր վարում է Սոս-
լիսկինը։ Ընդգծելով զարգացման յերկու ուղիներին—
«պրոլետարիանի» և «ամերիկականի» որյեկտիվ հնա-
րավորությունը, Լենինը մատնանում էր, վոր պրո-
լետարիատն ու պոլիտացիոնությունը պետք է պայքարեն
զարգացման յերկրորդ հեռանկարի համար, հոգուտ
դեմոկրատական հեղափոխության յրակատար հաղթա-
նակի։ Գյուղացիության և ինքնակալական-կալվա-
ծատիրական ուժերի միջև հակասությունների ա-
ճումը, վոր արձանագրում էր Լենինը, ցույց էր տալիս,
վոր ստալիսկինյան ուժերը չի կարող կանխել նոր
հեղափոխության բռնկումը, նոր հեղափոխությունը։
«Նախապատրաստել նոր հեղափոխությունը»— այս-
պես էր վորոշում Լենինը պրոլետարիատի ընդհանուր
խնդիրն առաջիկա ամսով պատմական չրջանի հա-
մար։

Հունիսի 3-ի պետական հեղաշրջման հետևան-
քով ստեղծված ուժերի փոխհարաբերության դնա-
հատականը, ինքնակալության ելույթյան և նրա հողա-
յին նոր քաղաքականության բնույթի վերլուծու-
թյունը Լենինը տվեց մի շարք հոդվածներում, վո-
րոնցից հատկապես կարելի է «Ընթացիկ մոմենտի
գնահատականի մասին» հոդվածը։ Նրա հայացքներն

այդ առթիւ ամփոփւեցին և վերջնականապէս ձեւա-
կերպւեցին ժամանակակից մոմենտի և կուսակցու-
թյան խնդիրները վերաբերյալ բանաձեւում, վորն
ընդունեց համառուական «Դեկտեմբերյան» կոնֆե-
րենցիան 1908 թ. (տեղի ունեցավ Փարիզում 1909 թ.
հունվարի 3-9-ին (դեկտեմբերի 21-27-ին): Այդ կոն-
ֆերենցիայում, վորին մասնակցում էին բայլե-
վիկները, մենչեվիկները ներկայացուցիչները և լեհ
սոցիալ-դեմոկրատներն ու բուլղարները, հաղթա-
նակեցին բայլեվիկները: Կոնֆերենցիայում գլխավոր
զեկուցողն եր Լենինը: Բանաձեւում ասվում եր, վոր
բուրժուական միապետության վերածվելու ուղիու-
թյամբ առաջին քայլն անող ինքնակալությունը իր
հողային քաղաքականությամբ սրում ե գյուղացիական
բայն մասսաների դժգոհությունը և անխուսափելի յի
դարձնում նոր քաղաքական ձգնաժամի հասունացումը:
Դեկտեմբերյան կոնֆերենցիայի այդ բանաձեւը, վոր
պահանջում եր նաև ամրացնել ՌՍԴԲԿ, պայքարել
ինքնակալության, հետադիմական դատելի և լիբե-
րալների դեմ, պայքարել հեղափոխական մարքսիզմից
կատարվող շեղումների և ՌՍԴԲԿ լուրնադները սեղ-
մելու դեմ, պահանջում եր ողտադործել Դոմայի
ամբիոնը, — այդ բանաձեւը խոշոր սկզբունքային
նշանակություն ունեցավ, վորպես կուսակցության
կարեւորագույն փաստաթղթերից մեկը, վոր վորո-
շում եր նրա գործելակերպը մի շարք տարիների
համար:

Հսկայական նշանակություն տալով հողային
հարցին, Լենինը ուղադրությամբ ուսումնասիրում ե
այդ հարցի առթիւ III Պետական Դոմայում տեղի

ունեցած վիճարանությունները, վեր ե լուծում յու-
րաքանչյուր քաղաքական խմբավորման վերաբեր-
մունքը դեպի այդ հարցը Դոմայում և առհասարակ
տրուգավիկների ու գյուղացիական պատգամավորների
ճառերում, վորոնք անուղղակի կերպով արտացոլում
էին գյուղացիության շահերը, և գտնում ե, վոր
հաստատվում ե բայլեվիկյան գաղախարհների ճշտու-
թյունը գյուղացիական ասպտամբության անխուսա-
փելիության և գյուղացիության կողմից հողի աղբալ-
նացման սկզբունքին համակրելու մասին: «Պչեզլոնդ
սոցիալ-դեմոկրատիչնի» ամսագրում գետեղված հոդ-
վածում Լենինը լեհ սոցիալ-դեմոկրատներին ծանու-
թացնում ե բայլեվիկների հողային ծրագրին. նույն
ամսագրում նա բանավեճ ե մղում պ. Մասլովի հետ,
վոր պաշտպանում ե հողի քաղաքականացումը. ուսա-
կան անխեղալ մամուլում Լենինը պայքար ե մղում
Մասլովի հողային ռեվոլյուցիոնիզմի դեմ, վորով ժըխ-
տրվում եր բացարձակ ռենտայի տեսությունը, և
Պլեխանովի դեմ, վոր պաշտպանում եր Մասլովին:

Ժնևում գտնված ժամանակ Լենինը չառ ե զբաղ-
վում միջադպյին բանվորական և հեղափոխական շարժ-
ման հարցերով Յեվրոպայում և Արևելքում («Դյուբա-
վառ Նյուլթր համաշխարհային քաղաքականության
մեջ», «Ռադմաչունչ միլիտարիզմը և սոցիալ դեմոկրա-
տիայի հակամիլիտարիստական գործելակերպը»,
«Բալքանների և Պարսկաստանի անցքերը»), արձանա-
զրելով դասակարգային պայքարի սրումը բոլոր յերկըր-
ներում և միլիտարիզմի ծայրահեղ աճումը, վորպես
նշան դալիք կապիտալիստական պատերազմների: Միա-
ժամանակ Լենինը հետեւում ե հեղափոխական և ուղոր-

ստանդարտական հոսանքների պայքարին միջազգային սոցիալիզմի մեջ, սոցիալականելով որթողութաւ—մարքսիստական վերաբերմունքը դեպի պատերազմներն ու միլիտարիզմը: Ռուս սոցիալ-դեմոկրատներից Լենինը պահանջում էր պայքարել ցարիզմի արտաքին քաղաքականութեան դեմ, վորի նպատակն էր ճնշել հեղափոխական շարժումները արեւելյան յերկրներում: Այդ նույն շրջանում էլ անհրաժեշտ է նշել Լենինի պայքարն արհեստակցական միությունների չեղծութեան դեմ (Լենինը ապացուցում էր, վոր անհրաժեշտ է կապ և մերձեցում ստեղծել արհեստակցական միությունների և կուսակցութեան միջև), Դումայի սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիայի ոպորտունիստական սխալների քննադատութեանը, վոր նա կատարում էր Ֆրակցիայի դիմն ուղղելու նպատակով. սետք է հիշել նաև լիբերալների հակահեղափոխականութեանը մերկացնող, կեռների հետագա քայքայումն արձանագրող հոդվածը, Տալստոյի մասին գրած և այլ հոդվածները: Ժնևում գտնված ժամանակ Լենինի հոդվածների մեծ մասը լույս է տեսել բայլշևիկյան «Պրոլետարիյ» թերթում, վորի հրատարակութեանը փոխադրված էր Ժնև: Մի կարեւոր հոդված («Մարքսիզմ և ռեվոլյուցիոնիզմ») տպւեց Ռուսաստանում «Կարլ Մարքսի հիշատակին» լեզալ ժողովածվում:

1908 թ. հենց սկզբում բայլշևիկիների շրջանում խոշոր տարածաթնություններ ծագեցին փիլիսոփայական հարցերի շուրջը: Լենինը, վոր դեռ 1906 թվից սկսած և նույնիսկ ել առաջ բացասաբար էր վերաբերվում Ա. Բազդանովի փիլիսոփայական հայացքներին, անմիջապես անհաշտ դիրք բռնեց այն բայլշևիկիների

հանդեպ (Ա. Բազդանով, Ա. Լուճաչարսկի, Վ. Բազարով), վորոնք հանդես յեկան «Очерки по философии марксизма» ժողովածում՝ իդեալիստական հայացքների քարոզով (մախիզմ կամ եմպիրիոկրիտիցիզմ): Իդեալիզմի և փիլիսոփայական ռեվոլյուցիոնիզմի այդ պրոպագանդան այն անկումային տրամադրութեան արտահայտություններից մեկն էր, վորն սկսեց ծագել «Հասարակութեան» մեջ և քաղաքական կուսակցություններում՝ հեղափոխութեան պարտութեան հոգի վրա և վոր մասամբ համակել էր նաև բայլշևիկիներին: Բացառիկ նշանակութեան տալով մարքսիստական իդեոլոգիայի մաքրութեանը, Լենինը խիստ պայքար սկսեց եմպիրիոկրիտիկների դեմ, պաշտպանելով դիալեկտիկական մատերիալիզմը, մարքսիզմի փիլիսոփայական հիմունքները, սահմանադատվելով մախիստներից մամուլի մեջ և բացահայտ կերպով համերաշխելով փիլիսոփայութեան հարցերում ընդհանուր առմամբ որթող տեսակետի վրա մնացած Պլեխանովի հետ. այս հանգամանքը, հասկանալի չէ, ամենավին չթուլացրեց նրա պայքարը Պլեխանովի քաղաքական ոպորտունիզմի դեմ: 1908 թ. ապրիլին Լենինը, Մ. Գորկու խնդրեով, այցելեց բայլշևիկ-մախիստներին և նրանց համակրող Մ. Գորկուն Կապրի կղզում, սակայն այդ այցելութեան ել սովիլի հաստատեց նրա վճիռը՝ վոր անհրաժեշտ է պայքարել ռեվոլյուցիոնիստների դեմ: 1908 թ. աշնանը Լենինն ավարտեց իր մեծ փիլիսոփայական աշխատութեանը—«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» (Քննադատական դիտողություններ մի հետադիմական փիլիսոփայութեան մասին), վորը լեզալ կերպով լույս տեսավ 1909 թ. գարնանը: Այդ դիրքը պատրաստելիս Լե-

նինը միաժամանակ աշխատել և Լոնդոնում, Բրիտանական մուլդեյում: «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ, վորը խոչընդույն յերևելով թերեզման եր մարքսիզմի փրկափայլական գրականության մեջ, Լենինը վոչնչացնող քննադատության յենթարկեց բայլչեվիկ-մախիատներին, ցույց տալով նրանց հայացքների հետադիմական և տերտերականութունը քողարկող բնույթը:

Բայլչեվիկյան ֆրակցիայի ներսում դրուժյունը բարդացավ նրանով, վոր փրկափայլական տարաձայնությունները. ֆրակցիայի մեջ ծագեցին «ձախ» թեքումներ—«ատղավիզմ» և «ուլտիմատիզմ», վորոնք «բոլշևիստային» տրամադրությունների վերածնությունն եյին և ըստ եյության՝ տարբեր ձևերով ու աստիճաններով ժխտում եյին կուսակցության կողմից անլեզալ մեթոդների հետ զուգընթաց պայքարի պարլամենտական մեթոդներ կիրառելու անհրաժեշտությունը քրեանց կազմով «մախիատները»՝ զգալի չափով միաժամանակ նաև ուլտիմատիզմի և ատղավիզմի, ինչպես նաև «աստվածաբարության» կողմնակից եյին: 1908 թ. աշնանը Լենինի և նրա ղեկավարած բայլչեվիկյան կենտրոնի ղեմ կազմվեց բաղական ուժեղ «ձախ» ուղղությունը.—Ա. Բադդանով, Ա. Լուսաչարսկի, Վ. Բադարով, Մ. Լյադով, Լ. Կրասին, Գ. Ալեքսինսկի, Վ. Շանցեր-Մարատ և այլն: «Յերկու նամակի առթիվ» հոդվածում («Պրոլետարիում», 1908 թ. նոյեմբերին) Լենինը պայքար սկսեց ատղավիզմի և ուլտիմատիզմի դեմ, վորոնք բավական տարածվել եյին ուսական կազմակերպությունների

բում, և հաշտվողական վերաբերմունքի դեմ նրանց հանդեպ:

1908 թ. ոգոստոսին Լենինը մասնակցեց Կի պենումին, վորտեղ մենչեվիկները փորձում եյին մի վորոշում անցկացնել՝ Կի, վորպես ղեկավար մարմին, վոչնչացնելու և այն զուտ ինֆորմացիոն հիմնարկի վերածելու մասին: Լենինի ղեկավարությամբ, վորը մենչեվիկները պրանները փորակեց վորպես դավադրություն կուսակցության դեմ, լիկվիդատորներն այլ առաջին հարձակումը յետ մղվեց: Այդ շրջանից սկսած (1908 թ. ոգոստոս—նոյեմբեր) սկսվում և բայլչեվիկների պայքարը Լենինի ղեկավարությամբ, յերկու ճակատով, սոցիալ-դեմոկրատիայի ներսում աշխարհային բարձրացրած լիկվիդատորների (մենչեվիկների) դեմ և ձախից զործող լիկվիդատորների (ատղավիստների) դեմ. այդ պայքարում Լենինը պահանջում և կուսակցությունը մաքրել յերկու տիպի մանրբուրժուական «ուղեկիցներից»:

Սկզբում Լենինը ղլխավոր հարվածն ուղղեց ատղավիզմի դեմ, վորը նա բնորոշեց վորպես «թարած մենչեվիզմ». յերբ ատղավիզմի հակակուսակցական բուրժուազակությունը մերկացվեց ու դիմադրեց յետ (1909 թ. աշնան դեմ), կենտրոնական խնդիր դարձավ լիկվիդատորների դեմ մղվելիք պայքարը: Մի շարք հոդվածներում Լենինը ցույց տվեց, վոր ատղավիզմ-ուլտիմատիզմը միանգամայն անհամատեղելի յեն բայլչեվիզմի հետ (տես հատկապես «Բայլչեվիզմի ծաղրանկարը» հոդված*): 1909 թ. հուլիսի 4—15 Փարիզում Լենինի ղեկավարությամբ տեղի ունեցավ այսպես կոչված «Պրոլետարիյի» («Բայլչեվիկյան կենտրոնի») ընդլայ-

* «Како катура на большевизм.
Վ. Ի. Լենին»

նույնպես խմբագրութեան խորհրդակցութեանը, վերը
Լենինի առաջարկութեամբ պատշաճ դնահատական տվեց
ատղավիզմին և բայլչեվիկներին ֆրակցիայից հեռացրեց
Ֆազդանովին, վերը բռնել եր արդեն իր սեփական ֆր-
րակցիան ստեղծելու ուղին՝ Կապրիով կազմակերպած
դպրոցի միջոցով: Բազդանովից հետո բայլչեվիզմի
սահմանները դուրս մնացին նաև մնացած ատղավիստ-
ները, ուլտիմատիստները և «աստվածարարները», վո-
րոնք հետագայում կազմեցին «Վպերյոզ» խմբակը:

1907 թ. նոյեմբերի 7-ին Լենինը մասնակցում է Մի-
ջազգային սոցիալիստական բյուրոյի նիստերին Բրյու-
սելում, և հոլանդական սոցիալ-դեմոկրատիայի շարքե-
րում տեղի ունեցած պառակտման հարցում նա ձախ
հոլանդական մարքսիստների կողմն էր, վորոնք պա-
քարում էին իրենց ուղորտունիստների դեմ: 1910 թ.
ոգոստոսի 28—սեպտեմբերի 3-ը Լենինը մասնակցում է
II Ինտերնացիոնալի Կոպենհագենյան կոնգրեսին, մեծ
ուշադրութեան հովիթելով պրոլետարական կոոպերա-
տիվների հարցին և մտնելով կոոպերատիվ հանձնաժո-
ղովի մեջ: «Կոոպերատիվների հարցը Միջազգային սո-
ցիալիստական Կոպենհագենյան կոնգրեսում» հոգվածի
մեջ Լենինը, վոր ուշադրութեամբ հետեւել եր կոնգրե-
սում հոսանքների միջև տեղի ունեցած պաքարին և ամ-
բողջովին հարում եր ձախ թեկն (ներա նախաձեռնու-
թեամբ մինչև անգամ ձախերի մասնաւոր խորհրդակ-
ցութեան հրավիրվեց), գրում եր, վոր «գերիշխանու-
թեանը Ինտերնացիոնալում հաճախ դուրս է դալիս»
գերմանական սոցիալ-դեմոկրատների ձեռքից, վորոնք
ժարքսիստական որթողուկութեան ներկայացուցիչներն
են համարվում II Ինտերնացիոնալում, և ընդգծում եր

«գերմանական սոցիալ-դեմոկրատիայի այն ճղնաժամը,
վորն արտահայտվում է ուղորտունիստների հետ անխու-
ստիելի, վճռական խղման հասունացմամբ»: Այդպիսով
Լենինը վոչ մի իլյուզիա չունեւ իրերի խակական դրու-
թեան մասին միջազգային սոցիալիզմի մեջ, վորը հե-
տըհետեւ ավելի յեր յենթարկվում ուղորտունիստների
աղղեցութեանը: Կոնգրեսից հետո Լենինը վորոչ ժամա-
նակով դնաց Ստոկհոլմ մորը տեսնելու և Ստոկհոլմի
գրադարանում գրաղլելու համար, 1911 թ. սեպտեմբե-
րի 23—24-ին Լենինը մասնակցում է Միջազգային սո-
ցիալիստական Բյուրոյի աշխատանքներին Յուրիխում,
պաշտպանելով գերմանական սոցիալ-դեմոկրատիայի
Կի հարձակումներից Ռ. Լյուքսեմբուրգին, վորը ռեյ-
խտտաղի ընտրութեանների ժամանակ մերկացրել եր
գերմանական սոցիալ-դեմոկրատիայի խարաղուկնե-
րից մեկի ուղորտունիզմը գաղութների վերաբերյալ
հարցում:

Բազդանովին վտարելուց հետո Լենինը շարունակեց
լարված պաքար մղել «ձախերի» դեմ («Ատղավիզմի և
աստվածարարութեան կողմնակիցների ֆրակցիայի մա-
սին», («Զրույց Պետերբուրգի բայլչեվիկների մասին»)
և մերկացնել Կապրիի դպրոցի ֆրակցիոն ընուլթը, վաք
պարղ չեր Ռուսաստանից ալդ վարոցը յեկող բանվոր-
բայլչեվիկների մի մասի համար: Լենինի քննադատու-
թեան հետեւանքով դպրոցում պառակտում առաջացավ,
և բայլչեվիկ-լենինիստների կողմն անցան մի խումբ
բանվորներ, վորոնք ալդ պատճառով դպրոցից արտաք-
վեցին և 1909 թ. նոյեմբերին յեկան Փարիզ, վորտեղ
Լենինը նրանց համար մի շարք դասախոսութեաններ
կարդաց: Այդ դասախոսութեանները Լենինը հետո

դեկտեմբերին կրկնեց Կապրիի դպրոցի մնացած ունկընդերները (բազմաժողովների) համար, վորոնք նույնպես անցան Փարիզ: Լենինի դեկավարությամբ ատղարվիստների դեմ մղվող պայքարը Ռուսաստանում, վորոնք նրանք զգալի ազդեցություն ունեյին, սուր բնույթ էր կրում և վերջապա բայլչեվիկ-լենինիստների հաղթանակով:

Պայքարելով հեղափոխական կուսակցությունը պահպանելու համար, վորի ավելորդությունը քարոզում էին լիկվիդատորները, Լենինը մատնանշում էր, վոր բայլչեվիկների խնդիրն է «համբերությամբ դատարակել կուսակցական տարրերին, համախմբել նրանց և ստեղծել իսկապես միասնական ու ամուր պրոլետարական կուսակցություն»: Սխտեմատիկ ընտրատություն չենթարկելով աստղավիստների և լիկվիդատորների հայացքները, Լենինն առաջարկում էր մերձենալ, մոտենալ Պլեխանովի և մենչևիկ-կուսակցականների (պլեխանովիցներին) հետ, վորքան նրանք կանգնած էին լիկվիդատորության դեմ պայքարելու և անլեզալ կուսակցությունը պահելու տեսակետի վրա:

1910 թ. հունվարի 15-ից մինչև փետրվարի 5-ը Լենինը մատնակցում է Կիյայկա կոչված միացյալ պլենումի աշխատանքներին (Փարիզում), վորտեղ ներկայացված էին համարյա ՌՍԴԲԿ բոլոր հոսանքներն ու ուղղությունները և ազգային կուսակցությունները: Պլենումը նպատակ դրեց ստեղծել կուսակցության միացում, վորը հնարավոր էր միայն խիստ հեղափոխական պլատֆորմի բազայի վրա: Վորովհետև պլենումում զգալի թվով հաշտվողականներ կային, վորոնց թվում նաև բայլչեվիկներ, ուստի պլենումի կող-

մից միաձայն ընդունված բանաձևով (վորի ոգտին քվեարկեցին և՛ մենչեվիկները) թեև էր ելույթամբ խոսում էր միայն կուսակցության տարրերի միացման և յերկու ճակատով պայքարելու մասին (լիկվիդատորների և աստղավիստների դեմ) և այդ իմաստով զուգադրվում էր Լենինի հայացքներին, սակայն և այնպես միանգամայն վորոշակի բնույթ չէր կրում, վորոշ վորոշ՝ ձգույթյունների տեղ թողնելով լիկվիդատորների համար: Լենինը, վոր պլենումում ներկա չէր խորհրդակցական ձայնով, վորպես ԿՈ «Սոցիալ-դեմոկրատիայի» խմբադրության անդամ (ընտրված էր 1910 թ. հունվարից), պահանջում էր ավելի խիստ ձեկակերպել յերկու ճակատով պայքար մղելու գաղափարը և պաշտպանում էր «յերկու Փրակցիաների (բայլչեվիկների և մենչեվիկ-պլեխանովիցների) միությունը»: Սակայն համագումարում գերակշռող հաշտվողականները և հատկապես, իբր թե, վոչ-Փրակցիոնական Տրոցկին բայլչեվիկ-հաշտվողականների (Ի. Դուբրովինսկի, Լ. Կամենև և այլն) աջակցությամբ միության մեջ մտցրին և «զալաօովեցներին» («Голос Социал-демократов — մենչեվիկների արտասահմանյան ղեկավար որդանը), և՛ տրոցկիստներին, և՛ վոլերյոդովեցներին, միաժամանակ անցկացնելով բոլոր Փրակցիաների ցրումը, առանց անհրաժեշտ յերաշխիքների, վորոնք ապահովեյին բայլչեվիկների զործունեությունը: Չնայած մի շարք թերություններին, պլենումի բանաձևը, վոր աստղավիզմն ու լիկվիդատորությունը համարում էր վորպես «բուրժուական ազդեցության արտահայտությունը պրոլետարիատի վրա», այնուամենայնիվ կարող էր կուսակցության միացման հիմք ծառայել՝ բարեխղճորեն իրագոր-

ծվելու դեպքում: Սակայն, ինչպես նախատեսել եր Լենինը, «կուսակցության միացումը, վոր հռչակվեց պլենումի կողմից, Փիկտիվ դուրս յեկավ, վորովհետեւ պլենումից հետո անմիջապես «գալասովեցները» պայքար սկսեցին նրա վորոշումների դեմ, քարոզելով հոսանքների «հավասարութուն», լիկվիդատոր-լեզալիստների հավասարութուն հեղափոխական-կուսակցականների, ՌՍԴԲԿ հետ: Լենինը կատաղի պայքար սկսեց «գալասովեցները» կողմից պլենումի վորոշումները վիժեցնելու դեմ, մերկացնելով բեզալիստների բուրժուական բնույթը, նշավակելով նրանց, վորպես սոցիալ-դեմոկրատիայի թշնամիներ: «Կուսակցության դեմ կազմված դավադրությունը բացված է. բոլորը, ում համար թանդ է ՌՍԴԲԿ դոյությունը, վորքի կանդնեցեք կուսակցությունը պաշտպանելու համար», — գրում եր Լենինը: 1910—1911 թ. թ., յերբ լիկվիդատորները մի մասը պայքարում եր կուսակցության դեմ լեզալ մամուլի եջերում, կուսակցությունը դիակ անվանելով, իսկ մյուս մասը («գալասովեցները») քայքայում ու պայթեցնում եր կուսակցությունը ներսից, նստած հենց կուսակցության ասարատի մեջ, — այդ կուսակցության հեղափոխական բնույթը պահպանելու համար Լենինի կողմից մղվող ամենասուր, կատաղի պայքարի չըջանն եր: Կուսակցության պաշտպանության համար ծավալված այդ պայքարը, վոր ուժերի ծայրահեղ բարում եր պահանջում, վորի ընթացքում պետք եր հաղթահարել կուսակցության կենտրոնական հիմնարկներում նստած և նրա աշխատանքը վիժեցնող մենչեվիկների պերմանենտ դավերը, այդ պայքարը Լենինը մղում եր անսահման վատ պայմաններում, մանավանդ վոր այդ տարե-

ներում շատ մեծ թափուք տարածվում էրին փտած, զանազան խմբակների ու հոսանքների (հատկապես Տրոցկու) կողմից պատմաստված «հաշտվողական» այն տրամադրությունները, թե պետք է միություն ստեղծել, ինչպիսին ել լինի, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի կապիտուլիացիայի գնով լիկվիդատորների առաջ: Չանազան ուղղության հաշտվողականների դեմ ևս (Տրոցկին իր վիեննական «Պրավդայով», Բուհըր, բայլչեվիկ-հաշտվողականները, հետո լեհերը) Լենինը անհատ պայքար է մղում («Միացման ճղնաժամը մեր կուսակցության մեջ», «Հաշտվողականների կամ առաքինիների նոր ֆրակցիայի մասին», «Իրերի դրությունը կուսակցության մեջ», «Տրոցկու դիվանագիտության մասին և կուսակցականների մի պլատֆորմի մասին»): «Նստել այդ խառնակչության և սկանդալի, այդ դատարկության ու «իրիտերի» միջնորոտում... օիրտ խառնելու չափ ծանր է, — գրում է Լենինը Մ. Գորկուն 1910 թ. ապրիլի 10-ին, — և այդ ամենը դիտելն էլ զրգվանք է պատճառում: Սակայն անթույլատրելի չե նաև տրամադրության անձնատուր լինելը: Վտարանդրությունն այժմ 100 անգամ ավելի ծանր է, քան մինչև հեղափոխություն: Վտարանդրությունը և խառնակչությունն անբաժան յեն. սակայն խառնակչությունը վերանում է... Իսկ կուսակցության դարգացումը, սոցիալ-դեմոկրատական չարժման զարգացումը ընթանում ու ընթանում է ղեպի առաջ՝ չնայած այժմյան կացության բոլոր դիվային դժվարություններին: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության գոտումը, մաքրումը նրա վտանգավոր «թեթևներից» — լիկվիդատորությունից և ատղավիզմից — անչեղ առաջ

և դնում... Աստղավիզմին մենք, ճիշտն ասած, վերջ տրվինք դեռ մինչև պլենում: Լիկվիդատորությունը բոլորովին վոչնչացնել չկարողացանք այն ժամանակ, մենք եկվիկներին հաջողվեց մի առ ժամանակ թաղցնել ոճին, իսկ այժմ նրան լույս աշխարհ են հանել, այժմ նրան ամենքը տեսնում են, այժմ նրան պետք է վոչնչացնենք և *«Լիկվիդացնենք»*: Մի շարք հոգեվաճառում, վորոնք տպվել են դրսավորապես «Սոցիալ-դեմոկրատում», Լենինը վոչ միայն քայլ առ քայլ նշում է լիկվիտացորություն կազմակերպական ձեւակերպման սլոցեսսը, նրանց կողմից առանձին «ստալինյան բանվորական կուսակցություն» ստեղծելու սլոցեսսը, կուսակցություն, վոր անհաշտ թշնամական դիրք էր բռնել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հանդեպ և պայքարում էր նրան և նրա կենսարանական հիմնարկները քայքայելու համար («լիկվիդատորների „Голос“ կուսակցություն դեմ», «Լեզալիստների խոսակցություններ լիկվիդատորության հակառակորդի հետ»), այլ նաև միաժամանակ ցույց է տալիս, վոր միանգամայն լիբերալ և ռեֆորմիստական բնույթ ունի «անկախ-լեզալիստներին» քաղաքականությունը, վորոնք ժխտում էին սլոք-լետարիատի գերիշխանությունը և հրաժարվում էին հեղափոխությունից («Մեր լուծարիչները», «Իշխանություն սոցիալիստական կառուցվածքի, հեռանկարների և լիկվիդատորության մասին»):

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ:

1910 թ. վերջից, յերբ սկսվեց բանվորական շարժման նոր վերելքը, Լենինը, շարունակելով աշխատել «Սոցիալ-դեմոկրատում» և «Ռաբոչայա դադեստայում»,

վորոնք նույնպես արտասահմանում էին հրատարակվում, գաղտնիարորեն ղեկավարում է իր վճռական մասնակցությունը հիմնված լեզալ որդանները Ռուսաստանում—«Вперед» թերթը (Պետերբուրգում) և «Мысль» ամսագիրը (Մոսկվայում): 1912 թ. ապրիլից «Вперед»-ի հետ միասին, վոր հետո փակվեց, սկսեց լույս տեսնել «Պրավդան», իսկ 1911 թվի վերջից փակված «Мысль»-ի տեղ «Прогресс»-ն Պետերբուրգում Այդ որդաններում տպված հոգեվաճառի մեջ Լենինը մեծ ուշադրություն է նվիրում լիկվիդատորների (և «Վալերյոզովցիների») դեմ մղվող պայքարին:

Լենինի համար ակներեւ էր, վոր այլևս անհանդուրժելի յե կուսակցության մեջ լիկվիդատորների ներկայությունը, վորոնք բուրժուազիայի գործակալներն էին հեղափոխական սլոք-լետարիատի շարքերում: Վորպեսզի վերջ տրվի իրերի այդ կացությունը, յերբ լիկվիդատորները համարվում էին կուսակցության մի որինական մասը, վորը ներկայացուցիչներ ունեն նրա ղեկավար որդաններում և ոգտվում էր այդ ներկայացուցչությունից կուսակցության մեջ կազմալուծում մտցնելու համար, Լենինը սկզբում պահանջում է հրավիրել Կի պլենում, վոր բաղկացած էր զանազան ֆրակցիաների ու հոսանքների ներկայացուցիչներից (ՌՄԴԲԿ մեջ էին մտնում նաև լեհերը, լատիշները և բուլղարները) ճշնաժամից դուրս գալու մի «լեզալ», կուսակցական սահմանադրության վրա հենվող յեւք գտնելու համար: Յերբ պլենումի գումարումը տապալվեց լիկվիդատորների կողմից, վորոնք շահագրգռված էին Կի քայքայմամբ, վորի մեծամասնությունը բայլչեփիկներ էին, Լենինը հաստատապես վստիչում է ամբողջ գծով իղեւ

կապերը լիկվիդատորներին հետ : Նա ամենից առաջ 1911 թ. մայիսին հարաբերությունները խզում է այսպես կոչված՝ ԿԿ Արտասահմանյան բյուրոյի հետ, վորը գործիք էր դարձել լիկվիդատորների ձեռքին և ամեն կերպ կասեցնում էր պլենումի դեմարումը . հունիսի 10—17-ին Փարիզում տեղի չե ունենում ցիկլստների՝ Լենինի հրավերած խորհրդակցությունը, վորը Լենինի նախաձեռնությամբ վորոշում է հրավերել ուսական կուսակցական կազմակերպությունների կոնֆերենցիա և նախապատրաստման համար ստեղծում է համապատասխան հիմնարկներ (Արտասահմանյան կազմակերպչական Հանձնաժողով և Տեխնիկական Հանձնաժողով) : Այդ ձեռնարկումները Լենինն անց է կացնում լեհական սոցիալ-դեմոկրատների և բայլչեվիկ-հաշտողականների հետ բոլոր կազմած . այդ յերկու հիմնարկներում էլ բայլչեվիկ-լենինիստները փոքրամասնություն էլին կազմում : Լիկվիդատորներից ամեն կերպ սահմանադատվելու և նրանց հետ բոլոր կապերը խզելու նույն այդ նպատակով Լենինը 1911 թ. հուլիսին 2-րդ Փարիզյան խմբակի ժողովում անց է կացնում մի մեծ սկզբունքային բանաձև, վորով հանգամանորեն պարզարանվում էր լիկվիդատորության հարցը, և դոհունակությամբ ընդունում էր Մարտովի և Դանի հայտարարությունը՝ «Սոցիալ-դեմոկրատի» խմբագրությունից դուրս գալու մասին : 1911 թ. դեկտեմբերի 27—30-ին Լենինը գործոն մասնակցություն և ունենում արտասահմանյան բայլչեվիկյան խմբակների Փարիզում տեղի ունեցող խորհրդակցությանը և այնտեղ հանդես է դալիս կուսակցության դրության վերաբերյալ մի զեկուցմամբ, վոր իր սուր ծայրով ուղղված էր լիկվիդատորների դեմ : Պայ-

քարը ծայրահեղ սուր կերպարանք ընդունեց : Լիկվիդատորներին առեկռթյունը Լենինի հանդեպ այնտեղ հասավ, վոր Մարտովը հրատարակեց մի կեղտոտ, զրպարտիչ, գլխավորապես Լենինի դեմ ուղղված բրոշյուր՝ «Փրկիչներ թե՞ լուծարիչներ», վորը կուսակցին անվանեց «զգվելի» գործ :

Յերբ լեհ սոցիալ-դեմոկրատների լիդեր Տիչկոն հաշտողական դիրք բռնեց, աշխատելով համաձայնության գալ լիկվիդատորների հետ, Լենինը խզում է կապը տիչկոյականների և նրանց հետ բոլոր կազմած բայլչեվիկ հաշտողականների հետ . նրա ցուցումով բայլչեվիկ-լենինիստները դուրս են դալիս արտասահմանյան կազմակերպչական և Տեխնիկական Հանձնաժողովներից, իսկ կոնֆերենցիայի հրավերումն ամբողջովին իր վրա չե վերցնում Ռուսաստանում ստեղծված և Լենինի դեկավարած՝ Ռուսաստանի կազմակերպչական Հանձնաժողովը, վորին պաշտպանում են նաև բանվոր-պլենսնովեցները : Կուսակցությունը վերականգնելու նպատակով այդ կոնֆերենցիան հրավիրելու համար Լենինը հարկադրված էր անողոք պայքար մղել լիկվիդատորների, արեցկիստների, «վալեյոդովեցների», բայլչեվիկ-հաշտողականների, լեհ սոցիալ դեմոկրատների և այլ հոսանքների դեմ . կոնֆերենցիան դեմարովեց 1912 թ. հունվարի 18—30-ին Պրագայում : Կոնֆերենցիան (նրան մասնակցում էին Ռուսաստանում գործող կուսակցական բոլոր անլեզալ կազմակերպությունները) Լենինի առաջարկությամբ կառուցվեց, կազմակերպվեց, վորպես կուսակցության գերագույն մարմինը, վտարեց կուսակցությունից լիկվիդատորներին, մշակեց մի շարք տակտիկական բանաձևեր, վորոնցից առանձին նշանա-

կուլթյուն ունեն ժամանակակից մոմենտի և IV Դումայի
ընտրությունները վերաբերյալ բռնաձևերը, և ընտրեց
ԿԿ, վորի կազմի մեջ մտավ Լենինը։ Այդ կոնֆերենցի-
ան, վոր դումարվեց բանվորական շարժման նոր վերել-
քի չըջանում, ուսկիցիայի տեսական չըջանեց Հետո, խո-
շոր դեր խաղաց կուսակցության պատմության մեջ։

1908 թ. «Ռեկտեմբերյան» կոնֆերենցիայի և Պրա-
գայի 1912 թ. կոնֆերենցիայի միջև ընկած չըջանում
Լենինը, վորի ուշադրությունը կենտրոնացած էր գլխա-
վորապես կուսակցության համար մղվող պայքարի,
լիկվիդատորների և հաշտվողականների դեմ մղվող
պայքարի վրա, միաժամանակ շարունակում էր մամուլի
մեջ մշակել հեղափոխության բոլոր հիմնական հարցե-
րը, ապացուցելով բայլչեվիկների պաշտպանած քաղա-
քականությունը և մերկացնելով մենչևիկների, Տրոցկու
և ուրիշների դերքի ռեֆորմիստական ու ուղորդունի-
տական ելությունը։ Անհրաժեշտ է նշել հետևյալ հար-
ցերը, վորոնցով բուռն կերպով զբաղված էր Լենինը
այդ չըջանում. — սոցիալ դեմոկրատիայի հայացքների
ձևակերպումը կրոնի հարցում, դասակարգերի և կու-
սակցությունների գնահատականը գեպի կրոնն ու յե-
կեղեցին ցույց տված նրանց վերաբերմունքի տեսակե-
տից, կադետական «Վեխի» աղմուկ հանած ժողովա-
ծուի, վորպես «լիբերալ ռենենգատության ենցիկլոպե-
դիայի գնահատականը։ Տոլստոյի մահվան առթիվ նրա
մասին գրած հոդվածը, 1861 թ. գյուղացիական ռեֆոր-
մի հորեկյանի առթիվ գրած հոդվածները, «տալիպի-
նյան քաղաքականության գնահատականը, մի հոդվա-
ծաշարք IV Դումայի ընտրական կամպանիայի առթիվ,
«Ռուսաստանի դործադուլները վիճակագրության մա-

տին» հոդվածը, վոր նվիրված էր 1905-1907 թ.թ. գյու-
ծադուլային շարժման վերլուծությանը, և այլն։ Բացի
գլխական դործաւնեյությունից Լենինը 1911 թ. ամառը
սխտեմատիկ կերպով դասասխտություններ էր կարդում
Լոնտյունի (Փարիզի մոտ) կուսակցական դպրոցում։

Բանվորական շարժման վերելքին և այդ իսկ պատ-
ճառով Պետերբուրգի լեզալ մամուլին մոտ լինելու նպա-
տակով Լենինը 1912 թ. հուլիսի սկզբին գալիս է Կրակով
և ապրում է այնտեղ մինչև 1913 թ. մայիսը։ Փարիզի
կոնֆերենցիայից հետո, վորի դեմ կատաղի հարձակում
սկսվեց լիկվիդատորների, ազգային կուսակցություն-
ների, Տրոցկու և արտասահմանյան այլ խմբավորում-
ների կողմից, վորոնք նրան մեղադրում էին «ուղուր-
պացիայի» և «սրտակտողականության» մեջ, այդ չըր-
ջանում Լենինի սամենակարեւոր խնդիրն էր պաշտպանել
այդ կոնֆերենցիան և նրա վորոշումները, բացատրել և
ըստարանել նրա դերը և նշանակությունը ուսա բանվոր-
ների առաջ «Պրավդայում», գերմանական սոցիալ դեմո-
կրատիայի առաջ, վոր հովանավորում էր լիկվիդատոր-
ներին լեհական սոցիալ-դեմոկրատիայի առաջ, վորի մեջ
պառակտում առաջ յեկավ, և նրա մի մասը համակրում
էր բայլչեվիկներին։ Գերմանական սոցիալ դեմոկրա-
տիայի ԿՈ «Ֆորվերտսը» գետեղեց Տրոցկու անստորա-
գիւր, ստով լի հողվածը կոնֆերենցիայի մասին և հրա-
ժարվեց տեղ տալ բայլչեվիկների պատասխանին։ Ուստի
Լենինը գերմանական սոցիալ դեմոկրատներին իրերի իս-
կական դրությանը ծանոթացնելու համար հրատարա-
կում է գերմաներեն լեզվով «Ֆորվերտսի անոնիմը» բրո-
շյուրը (1912 թ. մարտին) և «ՌՍԴԲԿ արդի կացության
առթիվ» բրոշյուրը (1912 թ. հուլիս-սեպտեմբեր)։ Յեր-

կու հոգւմած ել կուսակցութեան դրութեան և Տիշկոյի հաշտվողական դիվանագիտութեան մասին Լենինը դեմոկրատիկ լեհական սոցիալ դեմոկրատական օպպոզիցիայի որդաններում 1912 թ. հուլիսին և ոգոստոսին: «Պրավդայի», Պրասվեչենիեյի և անդերալ «Սոցիալ-դեմոկրատի» եջերում Լենինը շարունակում է խիստ պայքար մղել լիկվիդատորներին և Տրոցկու կողմից՝ բայլչեվիկներին դեմ պայքարելու նպատակով կազմակերպված «ոգոստոսյան բոլի» դեմ, վոր կազմված էր լիկվիդատորներից, տրոցկիստներից, բունդիստներից, լատիշներից և այլն, մերկացնելով այդ բոլիի լիկվիդատորական ելութունը, վորը պրոլետարիատի ուշադրութեան կենտրոնն էր դարձնում «կոալիցիաների ազատութեան» լոգունգը և վոչ թե ինքնակալութեան տապալման համար մղվելիք պայքարը, վոր միջազնում էր հանրապետութեան լոգունգը, բացասաբար եր վերաբերվում մասսայական հեղափոխութեան դործադուլներին, քարոզում էր սահմանադրական ռեֆորմներ և չէր հավատում հեղափոխութեան անխուսափելիութեանն ու անհրաժեշտութեանը: Այդ ռեֆորմիստական քաղաքականութեանը Լենինը հակադրում է հեղափոխական ծրագիր, սնդելով, վոր պետք է պայքարել այդ ծրագրի համար ընդհանրապես և հատկապես IV Դումայի ընտրութիւնների շրջանում (1912 թ.): Լիկվիդատորների դեմ ուղղված և կուսակցական գիծը պաշտպանող հոգւմածներից անհրաժեշտ է նշել հետեյալները՝ «Ինչպես է պ. Ակսելրոդը մերկացնում լիկվիդատորներին», «Ռեֆորմիստների պլատֆորմը և հեղափոխական սոցիալ դեմոկրատների պլատֆորմը» (1912 թ.): Վիճելի հարցեր. «Ինչպես է Վերա Զասուլիչը սպանում լիկվիդատորութեանը» (1913 թ.):

IV-րդ Դումայի ընտրութիւնների ժամանակ Լենինը պայքարում է «խլենք Դուման ռեանցիայի ձեռքից» և ոգնենք կադետներին «խլանութեան հասնելու գործում» լիկվիդատորական լոգունգի դեմ, պահանջելով պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականութեան (դեմոկրատական հանրապետութեան, Տ-ժամյա աշխատանքային որվա, կալվածատիրական հոգերի դրաման լոգունգները) և պայքար դեմոկրատիայի համար, նրա ազատագրութեան համար կադետների գերիշխանութիւնից («Ընտրութիւնների արդյունքները»): Ընտրական պայքարը, վոր զաղափարորեն ղեկավարում էր Լենինը, պսակվեց բայլչեվիկների հաջողութեամբ. բանվորական կուրիյայի բոլոր վեց պատգամավորներն էլ բայլչեվիկներ ընտրվեցին: Հետագայում Լենինը սիտեմատիկ կերպով ղեկավարում է բայլչեվիկ-պատգամավորների գործունեյութեանը, վորոնք հաճախ գալիս էյին նրա մոտ—կրակով կամ Պորոնինո, նրանց հետ գրադրութեան և պահպանում, հրահանգում է նրանց, համար թեղիսներ և ճառերի նախագծեր և գրում, վորոնց համեմատ նրանք հետո հանդես են գալիս Պետական Դումայի ամբոյնից («Ժողովրդական Լուսավորութեան մինիստրութեան քաղաքականութեան հարցի առթիվ», «Ժամանակակից կառավարութեան հոգային (ընդհանուր) քաղաքականութեան հարցի առթիվ», «Ազգային քաղաքականութեան հարցի առթիվ» և այլն): 1913 թ. հունվարի 10-14-ին Լենինը ղեկավարում է Կի խորհրդակցութեանը, վոր դումարվել էր պատասխանատու աշխատողների հետ միասին Կրակովում (այսպես կոչված «փետրվարյան» խորհրդակցութեանը) և այնտեղ հանդես է գալիս յերկու գեկուցումով—«Հեղափոխական

վերելքը, գործադուլները և կուսակցութեան խնդիրները», «Լիկվիդատորութեանը ցույց տրվելիք վերաբերմունքի և միասնականութեան մասին»:

«Պրավդային» և «Պրավդաչենիսին» Լենինն աշխատակցում եր չափազանց ակտիվ կերպով. հատկապես «Պրավդային» նա համարյա ամեն ուր հոդվածներ եր ուղարկում: «Պրավդայի» գոյություն առաջին տարվա ընթացքում Լենինն ստիպված յեղավ պայքարել թերթի ուս լամբադրութեան դեմ, վորը հաշտվողական վերաբերմունք եր ցույց տալիս դեպի լիկվիդատորություն ու Ս. Բազդանովը, մինչև վոր վերջապես «Պրավդայի» դիմն ուղղվեց:

Բացի ուսական քաղաքական թեմաներին վերաբերվող հոդվածներից (լիբերալների քաղաքականութեան մերկացում, նարոդնիկութեան զննադատութիւն, հողային հարց և այլն), Լենինը «Պրավդային» շատ հոդվածներ եր ուղարկում, վորոնք լուսարանում ելին միջադրային բանվորական շարժման և Ս. Բ. վերելքի հեղափոխական շարժման զանազան կողմերը: Միջադրային դրութիւնը 1912 թ. վերջին Լենինը բնութագրում եր «բանվոր դասակարգի կողմից բուրժուազիայի դեմ մղվող կռիւ ծայրահեղ սրումով (կյանքի թանգացում, մասսայական գործադուլները, պետութիւնների իմպերիալիզմը, նրանց կատաղի մրցումը շուկաների համար, նրանց մոտեցումը պատերազմին) և սոցիալիզմի իրականացման մերձեցմամբ»:

1913 թ. մայիսի կեսերին Լենինը Կրակովից գնաց Պորոնինս գյուղը (Գալիցիայում), սակայն այստեղ յերկար չմնաց և հունիսի 21-ին Վիեննայով անցավ Շվեյցարիա, վորտեղ գտնվում եր մինչև ոգոստոսի

սկիզբը: Շվեյցարիայում յեղած միջոցին Լենինը մի շարք քաղաքներում դասախոսութիւններ ե կարդում ադդային հարցի վերաբերմամբ. բացի դրանից՝ ոգոստոսի 5-ին նա հանդես ե դալիս Բերնում կուսակցութեան դրութեան վերաբերյալ զեկուցմամբ ՌՄԴԲԿ արտասահմանյան կազմակերպութիւնների կոնֆերենցիայում: Պորոնինս վերադառնալուց հետո Լենինը 1913 թ. հոկտեմբերի 3—14-ին ղեկավարում ե այսպես կոչված՝ Կի «սամուային» խորհրդակցութիւնը կուսակցութեան աշխատողների հետ, հանդես դալով Կի հաշտվողութեամբ և ազդային հարցի վերաբերյալ զեկուցումով: Պորոնինսից Լենինը Կրակով ե վերադառնում 1913 թ. նոյեմբերի 5-ին:

Հսկայական նշանակութիւն տալով Դուբայի պատգամավոր բայլչեվիկյան վեցյակի ինքնուրույն դիրքին, Լենինն սկզբում պայքարում ե մարքսիստ բանվորների խոշոր մեծամասնութեան կամքի արտահայտիչ հանդէսացող բայլչեվիկյան վեցյակի «իրավահավասարութեան» համար մենչեւիկյան յոթնյակի հետ (ոգտվելով իրենց մեկ ձայնի առաւելութիւնից, մենչեւիկները սոցիալ դեմոկրատական Փրակցիայում ճնշում ելին բայլչեվիկներին, մերժելով, որինակ, բյուջետային հանձնաժողովում յերկու տեղից մեկը նրանց հատկացնել և այլն), իսկ յերբ մենչեվիկները հրաժարվում են այդ պահանջը կատարել, նա, հաղթահարելով Պետերբուրգի մի քանի կուսակցականների դիմադրութիւնը, վորոնք վախենում ելին Փրակցիայի պառակտումից և հաշտվողական վերաբերմունք ունելին դեպի լիկվիդատորները, անջատում, խզում ե առաջացնում վերացալի ու յոթնյակի միջև (1913 թ. նոյեմբերին) և ստեղծ

ծում և Գումայի ինքնուրույն բայլելիկյան Ֆրակցիա :
Բացատրելով բանվորներին բայլելիկիների բռնած դիր-
քի ձևադասերը, մերկացնելով լիկվիդատորների կեղ-
ծավոր աղմուկը միասնականության մասին, վորն իս-
կապես արդեն ստեղծված եր' բանվորների ճնշող մե-
ծամասնության համախմբող փարիզյան կոնֆերեն-
ցիայի միջոցով, պայքարելով հաշտվողականության բո-
լոր տեսակների, վորոնց թվում նաև լեհ սոցիալ դեմո-
կրատների մի մասի հաշտվողականության դեմ՝ Ռոզա
Լյուքսեմբուրգի և Լ. Տիշկոյի գլխավորությամբ, Լե-
նինն ուսումնասիրում է այն որդեկալի տվյալները, վո-
րոնք հնարավորություն էլին տալիս դատելու «պրավ-
դիստների» և լիկվիդատորների աղդեցության աստի-
ճանի և ուժի մասին (IV Գումայի ընտրությունները,
յերկու ուղղության թերթերի ոգալին բանվորների կա-
տարած մոծանքները, արհմիությունների և ապահո-
վական գանձարկղների ընտրությունների ընթացքը և
այլն), և անհերքելիորեն ապացուցում է, վոր «պրավ-
դիզմը» իրոք բանվորների հսկայական մեծամասնու-
թյան կամքի ներկայացուցիչն է, իսկ լիկվիդատորու-
թյունը մանրբուրժուական-ինտելիգենտական հոսանք
է, վոր ուժեղ է միայն բուրժուազիայի պաշտպանու-
թյամբ : Յերկու հոսանքների աղդեցության աստիճանի
վերաբերյալ այդ տվյալները Լենինը հաղորդում է Մի-
ջազգային սոցիալիստական բյուրոյին, վորը գումար-
վել եր հեղափոխական մարքսիստներին լիկվիդատորնե-
րի հետ «միացնելու» համար : Ընդունելով, վոր «միու-
թյունը» թույլատրելի չէ միայն այն դեպքում, յեթե
լիկվիդատորները և մյուս խմբակներն առանց առարկա-
լի ընդունեն հեղափոխական պլատֆորմը, Լենինը

խիստ կերպով սլաքարում ե այն փորձերի դեմ, փորոնց նպատակն էր «միացման» դեռ չի տակ հեղափոխական մարքսիստներին կապիտուլիացիայի յենթարկել: «Մի-ապնակահուծյունը՝ միասնականության վերաբերյալ ազմուկով խախտելու մասին» հոգվածում (1914 թ. մայիսին) նա շատ սաստիկ հարձակում է իբր թե «ան-Փրակցիոն» Տրոցկու անկղբունք դիրքի վրա, փորն այդ ժամանակ դուրս էր յեկել լիկվիդատորների հեա կողմած ողոստոսյան ըրդից, սակայն «ըստ էյության, կրկնում էր հենց նրանց գաղափարները»:

«Ազոստոսյան բլուկի» քայքայման պրոցեսսին Լենինը շատ մեծ ուղադրությամբ եր վերաբերվում և յետանդուն պայքար եր մղում, վորպեազի բլուկից դուրս գա և՛ լատիշական սոցիալ դեմոկրատիան: 1914 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին Լենինը գնում և Փարիզ, վորտեղ հանդես և գալիս մի շարք գեկուցումներով: Այդ ոեֆերատային ողեվորության ժամանակ նա Փարիզից գնում և Բըրյուսսել, վորտեղ ներկա լինելով լատիշական սոցիալ դեմոկրատիայի IV-րդ համագումարին, քննադատում և լատիշական կի և ոգոստոսյան բլուկին, կոչ անելով լատիշական սոցիալ դեմոկրատիային հարել ՌՍԳԲԿ կի-ին: Դեռ դրանից ել առաջ Լենինը կապ եր հաստատել լատիշների ճախ թեի հետ և գրել եր «Լատիշական յերկրի սոցիալ դեմոկրատիայի IV համագումարի պլատֆորմի նախագիծը»: Լատիշները դուրս յեկան սգոստոսյան բլուկից և ընտրեցին կի, վորի մեջ գերակշռում և յին բայլեմիկների կողմնակիցները:

1913-1914 թ.թ. Լենինը յեռանդով պայքարում եր
նան ձախ—նարողնիկուժյան (Լսերների) դեմ, վարոնք
վարող ազդեցուժյուն Ելին ձեռք բերել քանվորների մեջ,

ընդգծելով, վոր նրանք քողարկում են աշխատանքի և կապիտալի միջև յեղած անդունդը և հրաժարվում են հետեւողական դեմոկրատիզմից: 1913 թ. յերկրորդ կիսում և ամբողջ 1914 թ. ընթացքում Լենինն առաջնալույսն ունեցող թյուրմեքան է նվիրում ազգային հարցին, բաղմակողմանի վերլուծութայն ու քննադատութայն յենթարկելով հեղափոխական մարքսիզմի տեսակետի մի շարք աղավաղումներն ու խեղաթյուրումներն այդ աստարիղում: Պահանջելով, վորպեսզի ճշված ազգերի անջատվելու և ինքնուրույն պետութայն կազմելու իրավունք տրվի, Լենինը վճռականորեն առարկում է «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» լիկվիդատորական լոզունգի դեմ: Բացի բաղմաթիվ մանր հոգւածներէից, ազգային հարցին Լենինը նվիրեց յերկու մեծ աշխատութայն. «Քննադատական դիտողութայններ ազգային հարցի առթիւ» (1913 թ. հոկտեմբերին) և «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» (1914 թ. փետրվարին), վորոնց մեջ քննադատեց Ռ. Լյուքսեմբուրգի, լիկվիդատորների, բունդիստների, ուկրայնական նացիոնալ-սոցիալիստների և այլոց սխալներն ու խեղաթյուրումները ազգային հարցում, վերականգնելով և զարգացնելով Մարքսի և Ենգելսի հայացքներն ազգային հարցի առթիւ:

Միջազգային սոցիալիստական բյուրոն վորոշում է խորհրդակցութայն հրավիրել (Բրյուսելում) ուսանական սոցիալ-դեմոկրատիայի բոլոր հոսանքների ներկայացուցիչներից «միացման» համար. Լենինը 1914 թ. Պորոնինոյում, ուր նա յեկել եր մայիսի 9-ին, մի ընդարձակ զեկուցում և գրում կի անունից, վորի մեջ վերջապէս՝ լիկվիդատորների հետ միանալու ուղտիմատումա-

յին պայմաններ առաջադրում է 14 կետ (վորոնց եյուլթյունն եր՝ լիկվիդատորներն անառարկելիորեն պետք է հրաժարվեն, ինչպես նաև մյուս խմբակները, իրենց հայացքներից, պետք է ընդունեն կուսակցութայն հեղափոխական պլատֆորմը, յենթարկվեն կի և համակուսակցական հիմնարկների բոլոր վորոշումներին, վորոնցիցում է լիկվիդատորների ղեկավար կենտրոնը և այլն): Այդ վորով էլ Բրյուսելի խորհրդակցութայն համար կիւից նշանակված պատգամավորութայնը՝ խորհրդակցութայն ընթացքում վարելիք իր դործելակերպի մասին հրահանգ և ստանում Լենինից, վորն անձամբ չեր զնալու այնտեղ: Խորհրդակցութայնը բայլչեվիկների (և լատիշների) պատգամավորութայնը, Լենինի հրահանգների համաձայն, հրաժարվեց մասնակցել ՄՍԲ առաջարկած բանաձևի քվեարկութայնը, վորն ըստ եյուլթյան ուղղված եր բայլչեվիկների դեմ: Խորհրդակցութայնը վորջ մի հետևանք չունեցավ: Խորհրդակցութայնից հետո լիկվիդատորները, «Վպերթդը», Տրոյկու «Բայրբա»-ն և մյուս խմբակները կընքեցին նոր «բրյուսելյան» բոկ բայլչեվիկների դեմ: Միացման հարցը նորից պետք է զրվեր Վիեննայում շուտով գումարվելիք կոնգրեսում, օակայն պատերազմը խանգարեց դրան:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Յերը 1914 թ. ոգոստոսին սկսվեց պատերազմը, Լենինը, վոր այդ ժամանակ Գալիցիայի Պորոնինո դյուղում եր գտնվում, ձերբակալվեց ավստրիական իշխանութայն կողմից՝ կառկածվելով լրտեսութայն մեջ, վորպէս ուսանահպատակ, և բանտ դրվեց: Շնորհիվ մի

քանի ազդեցիկ ավատրիական սոցիալ-դեմոկրատների միջնորդութան, վորոնք Լենինին ճանաչում էին վորպես հեղափոխականի և ռուսական ինքնակալութան անհաշտ թշնամու, Լենինին առաջադրված անհեթեթ մեղադրանքը վերացվեց, և նա յերկու չարախօս կալանքից հետո ոգոստոսի 19-ին բանտից արձակվեց։ Ավատրիայից հեռանալու թույլտվություն ստանալով՝ Լենինը դնաց չեղոք Շվեյցարիա և հաստատվեց Բեռնում, վորտեղ սպրեց միտ տարի և կես։ 1916 թ. փետրվարին Լենինը Բեռնից անցավ Յյուրիխ, վորտեղ նա ապրում էր մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը, վորից հետո վերադարձավ Ռուսաստան։

Իմպերիալիստական պատերազմի հենց սկզբից Լենինը նրա հանդեպ հետեողական հեղափոխական մարքսիստի անհաշտ-թշնամական դիրք բռնեց։ Գալիցիայից Շվեյցարիա գալով, նա խսկույն թեղիաներ և դրում պատերազմի մասին։ Այդ թեղիաներն անդեպալ կերպով ուղարկվում են Ռուսաստան, վորտեղ հավանություն են ստանում Դումայի բալլչեիկյան հնգյակի կողմից, իսկ հետո Լենինի ձեռքով վերամշակվում և դառնում են կի մանիֆեստը—«Պատերազմը և ռուսական սոցիալ-դեմոկրատիան», վորը տպագրվեց 1914 թ. նոյեմբերի 1-ին։ Թեղիաներում և մանիֆեստում Լենինը օկուպած համալխարհային պատերազմը բնորոշում է, վորպես իմպերիալիստական պատերազմ, արձանագրում է II Ինտերնացիոնալի խորտակումը, վորին պատկանող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեծ մասը դավաճանեց հեղափոխական մարքսիզմի ափանդներին և անցավ «իր» բուրժուազիայի կողմը. պահանջում է բոլորովին և անվերապահորեն խզել կապերը

ոպորտունիստների ու սոցիալ-չովինիստների հետ և ըստեղծել նոր հեղափոխական ինտերնացիոնալ. նույն թեղիաներում էլ նա տալիս է իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լոգունդը և ցարական միապետության «պարտության» լոգունդը։ Պատերազմի սկզբում Լենինը և բալլչեիկները միակ սոցիալիստներն էին, վորոնք անմիջապես և առանց ամենափոքր տատանումների հետեողական հեղափոխական մարքսիզմի դիրք բռնեցին։

Դեռ պատերազմն սկսվելուց առաջ ցարական կառավարութունը փակեց բալլչեիկներին չեզալ որդան «Պրավդան»։ Այդ ժամանակ արդեն բալլչեիկյան սրտասահմանյան որդան չկար։ Ռուսիի պատերազմի առաջին յերկու ամսիա ընթացքում Լենինը հնարավորություն չուներ մտնուլում իր տեսակետն արծարծելու և անցկացնելու։ Մինչդեռ պետք էր, վորքան կարելի յե չուտ սոցիալ-չովինիստական ուղարին հակադրել բալլչեիզմի ոլլատֆորմը և իր ձայնը բարձրացնել ի պաշտպանություն հեղափոխական մարքսիզմի։ Չունենալով իր թերթը, Լենինն այդ պատճառով էլ բալլչեիզմի տեսակետը պարզում և արծարծում է սեֆերատներում, հանդես գալով Շվեյցարիայի դանադան քաղաքների սոցիալ-դեմոկրատների վտարանդիական ժողովներում։ Այդ չըջանում Լենինի առաջին հրապարակային յերույթը այն ձառն էր, վոր նա 1914 թ. հոկտեմբերի 11-ին Լոդանում արտասանեց՝ Թունդ սոցիալ-չովինիստ դարձած Գ. Պլեխանովի զեկուցման առթիվ։

Մեծ Զանքերից հետո, հաղթահարելով մի շարք դժվարություններ, Լենինին հաջողվում է վերահաստարակել մեր կուսակցության կենտրոնական որդան

«Առցիալ-գեմոկրատը» : Մի փոքրիկ թերթիկ, վոր լույս եր տեսնում մեծ քնդհատումներով և աներեմակայելի դժվարութեամբ գաղտնի կերպով ուղարկվում եր Ռուսաստան, — ահա համարյա այն բոլորը, ինչ վոր բռնեք Լենինն իր տաճարաբուծական տակ՝ իր հայացքները պատերազմի ժամանակ սխտեմատիկ կերպով տարածելու համար : Բացի «Առցիալ-գեմոկրատից», Լենինի մի շարք հոդվածներ տպվեցին «Կոմունիստ» ամսագրում (լույս տեսաւ յերկու համար), «Сборник Социал-демократа» փոքրածվում (լույս տեսաւ յերկու համար), «Պորբուտում» («Նախադուշակ» — ցիմ-մերվալդյան ձախ թևի որդանը) : Լենինի բոլոր հոդվածներից, վորքան հայտնի չե, հաջողվեց միայն մի փոքրիկ հոդված լեզալ կերպով տպագրել Ռուսաստանում, «Այսահոմագրութեան Հարցեր» ամսագրում : Նրա մի քանի հոդվածները, վորոնք գրված եյին լեզալ հրատարակութեան ժամանակ, համար, տպագրվեցին 1917 թվին : Մի այնպիսի նշանավոր գիրք, ինչպես «Իմպերիալիզմ»-ը, վոր Լենինը գրել եր 1916 թ. լույս տեսաւ միայն Փետրվարյան հեղափոխութեանից հետո :

Հսկայական կարեւորութեան տալով բալլեկովի հեղափոխական պլատֆորմի արծարծմանն ու հայտարարմանը միջազգային ասպարեզում և նկատի բռնեցաւ իր բալլեկներին ինքնուրույն յերաւթներին և չովինիստներից ու ամեն յերանգի ցնտրիստներից սահմանադատվելու ամբողջ կարեւորութեանը, Լենինն ոգտագործում եր բոլոր հնարավորութեանները, վորպեսզի բալլեկներին իրենց հայացքները պարզեն ոտարերկրյա սոցիալիստական կուսակցութեանների առաջ. թեզիսներ և ուղարկում Լուգանոյում գումարված խտուր-

չվեյցարական կոնֆերենցիային (1914 թ. սեպտեմբերի 24-ին), հրահանգում ե Ս. Շլյապնիկովին չվեյտական սոցիալ-գեմոկրատիայի համադումարում հանդես գալուց առաջ (1914 թ. նոյեմբերի 23-ին), հրահանգում ե Մ. Լիտվինովին նախքան նրա դեմոնստրատիվ յեւրոպիք «Համաձայնութեան յերկրներին» սոցիալիստների կոնգրեսում գումարվելիք կոնֆերենցիայում (1915 թ. փետրվարի 14-ին) և ուղարկում ե նրան ղեկարացիայի նախադիմք. ղեկավարում ե բալլեկներին պատգամավորութեան յերաւթները կանանց միջազգային սոցիալիստական կոնֆերենցիայում (1915 թ. մարտի 26-28) և միջազգային յերիտասարդական կոնֆերենցիայում բեռնում (1915 թ. ապրիլի 5-6) : Այդ բոլոր յերաւթներում բալլեկները իրենց հեղափոխական ծրագիրն են հակադրում չովինիստներին ու ցնտրիստներին :

1915 թ. դարձանը Լենինը ձոտիկ մասնակցութեան ե ունենում մեր կուսակցութեան արտասահմանյան Բեռնի կոնֆերենցիային (փետրվարի 27—մարտի 4) : Կոնֆերենցիայի՝ պատերազմի տաճարած հարցերի վերաբերյալ բանաձևերը, վորոնք գրված են Լենինի ձեռքով (նա կոնֆերենցիայում հիմնական ղեկուցողն եր), բալլեկի դի կարեւորագույն փաստաթղթերից մեկն ե պատերազմի առաջին շրջանում : Կոնֆերենցիայի շրջանին ե վերաբերում կուսակցութեան ներսը նրա գործելակերպի և լողունքների վերաբերյալ հարցի շուրջն ծագած տարաձայնութեանների սկիզբը : Ընկերների մի մասը Ն. Բուխարինի դիտաւորութեամբ սկսեց տատանվել այդ հարցում : Լենինը կոնֆերենցիայում յետանդուն պայքար եր մղում ուկրոնիստների դեմ, վորոնք բացասաբար եյին վերաբերվում «պարտութեան» յո-

գրանցին և պաշտպանում էլ յին «հաշտութեան» «տեքստ-
րական» լողունը, վերայ ուղարկեցիան մոտենում էր
արցակիտաների հետ («Նաշն Սրբա»)։ Ավելի ուշ տա-
րածախնութեանն էր ծագեցին Ն. Բուխարինի—Գ. Պյա-
տակովի խմբակի հետ աղղային հարցում. այդ խմբակը
Ժխտում էր աղղերի ինքնորոշման իրավունքը։ Սկզբում
հաջողվեց Բուխարինի խմբակի հետ համաձայնութեան
գալ միատեղ «Կոմունիստ» ամսագիրը հրատարակելու
չարժը, սակայն հետագայում տարածախնութեանն էր
այնպես սրվեցին, վոր այդ հրատարակութեանը դադա-
րեցվեց։ «Սոցիալ-դեմոկրատում» և «Կոմունիստում»
տպված մի շարք հոդվածներում (հատկապես պետք է
նշել «II Ինտերնացիոնալի փլուզումը» հոդվածը) Լե-
նինն անհնա քննադատութեան յենթարկեց քաղաքացի
և քողարկված (ցենսորիզմ) սոցիալ-չովինիզմի բոլոր
տեսակներն ու ձևերը, վոր քարոզում էլին լիկվիդա-
տորները Խուսափում (Պոտրեսով), արտասահման-
յան լիկվիդատորները (Մարտով), բունդիստները,
Չփեյիձեյի Փրակցիան, Տրոցկու «Նաշն Սրբա» և ու-
րիշները։ Խուսական կամ միջաղղային սոցիալ-դեմո-
կրատիայի և վոր մի քիչ թե շատ նկատելի հոսանք,
վոր սրաշտպանում էր սոցիալ-չովինիզմը կամ պլատո-
նական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ, կողմնակից
էր չովինիստներին հետ միանալու, նույնպես իրատ մեկ-
կացվում էր Լենինի կողմից։ Առանձնապես անհնա յեր-
նա դեպի Կաուցիկն, վորն ամենանուրը, ուստի և ամե-
նալուսնադավոր ձևով քողարկում և արդարացնում էր
չովինիզմը։ Իսկապես ինտերնացիոնալիստ լինել պակաս-
ցող սոցիալիստներին Լենինը պահանջում էր բոլորովին
և անվերապահորեն խղել կապերը սովյալ իմպերիալիս-

տական պատերազմում բուրժուական հայրենիքի
պաշտպանութեան կողմնակիցների հետ և ընդունել հե-
ղափոխական կռիւ ծրագիրը։

Կարելով իր կապերը անմեկացած II Ինտերնացիո-
նալի հետ և հռչակելով նոր, հեղափոխական ինտերնա-
ցիոնալ ստեղծելու անհրաժեշտութեան լողունը, Լե-
նինը ուժեղ կերպով աշխատում է միջաղղային բանվո-
րական շարժման ինտերնացիոնալ տարբերին կազմա-
կերպելու և համախմբելու ուղղութեամբ, ուշադրու-
թեամբ հետևում է միջաղղային սոցիալիզմի ուղղու-
թեանների միջև հետզհետե ավելի սրվող պայքարին,
կապեր և հաստատում զանազան յերկրների «ձախերի»
հետ, նրանց հետ դրադրութեան և վարում, մշակում
և «միջաղղային ձախ թեկ» տախտիկական պլատֆորմը
և լողունները։ Յիմմերվալդյան կոնֆերենցիայից ա-
ռաջ, վոր դումարվեց 1915 թ. սեպտեմբերի 5-ին և
տեղեց մինչև 8-ը, նա Գ. Ջինովյեվի հետ միասին լույս
և լողունները։ Յիմմերվալդյան կոնֆերենցիայից ա-
լից և պատերազմ» բրոշյուրը, վորի մեջ պարզում է
մեր կուսակցութեան վերաբերմունքը դեպի պատերազ-
մը։ Կոնֆերենցիայում Լենինը գլխավորում է ցիմմեր-
վալդիստների ձախ թեկը, վոր հանդես էր յեկել իր սե-
փական պլատֆորմով, և ղեկավարում է նրա աշխա-
տանքները։ Գերմանական սոցիալ-դեմոկրատ Լեդերու-
րը, ցենտրիստ, իրեն թույլ է տալիս կոնֆերենցիայում
մեղադրել Լենինին՝ «սահմանի մյուս կողմից» մասսա-
ների մեջ հեղափոխական լողուններ տարածելու հա-
մար։ Լենինը հանդիստ պատասխանում է, վոր նա հե-
ղափոխական աշխատանք և կատարում արդեն 20 տա-
րուց ի վեր, մասսաներին հեղափոխական լողուններ

տալով բանտից, սիրիւրյան աքսորից, սահմանի մյուս կողմից, վոր նա հետեւում է Մարքսի և Ենգելսի որդինակին 1848 թ. հեղափոխութեան շրջանում և վոր նա իր պարտքը կատարելու յե մինչև վերջը: Չհրաժարվելով միտեալ հանգես դալ՝ սոցիալ-չովինիզմի դեմ բողոքող ցիմմերվալդյան մեծամասնութեան հետ, և այդ պատճառով ել ստորագրելով կոնֆերենցիայի մանիֆեստը, Լենինը միաժամանակ քննադատում է այդ տատանվող, «համարյա-կառուցկիական» մեծամասնութեան թերտութեանն ու յերկչոտութեանը, հակադրելով նրան հետեւողականորեն-հեղափոխական ինտերնացիոնալիզմի դերը («Առաջին քայլը», «Հեղափոխական մարքսիստները 1915 թ. սեպտեմբերին 5-8-ի միջադպրին սոցիալիստական կոնֆերենցիայում»): 1916 թ. ապրիլի 24-30-ը Լենինը մասնակցում է Կինտայի-յերկիրորդ միջադպրին սոցիալիստական-կոնֆերենցիային, վորի համար նա ԿԿ անունից ներկայացնում է առաջարկութեանների նախագիծ. այդ նախագիծում արվում էր II Ինտերնացիոնալի պաշտպանած «հաշտութեան ծրագրի» քննադատութեանը, պաշտպանվում էին բայլեիկներին հեղափոխական լոզունգները, և սահմանվում էր, վորսեպի Յիմմերվալդն ավելի վճռական դիրք բռնի II Ինտերնացիոնալի հետ պառակտվելու հարցում: Չախերի ճնշման տակ Կինտայի կոնֆերենցիան մի քայլ առաջ՝ դնաց՝ Յիմմերվալդում ընդունված վորոշումների համեմատութեամբ, խիստ դատապարտելով II Ինտերնացիոնալի Միջադպրին սոցիալիստական բյուրոյին, և արտահայտվեց սոցիալ-չովինիզմի դեմ:

ՅԵՐԻ 1916թ. վերջին-1917թ. սկզբում ցիմմերվալ-

դիսաների մեծամասնութեանը Ռ. Գրիմմի ղեկավարութեամբ թեքվեց դեպի աջ, սոցիալ-չովինիզմի կողմը, Լենինն առանց տատանվելու հայտարարեց ցիմմերվալդյան մեծամասնութեան դադարաբեկան փլուզումը և նրա դավաճանութեանը ինտերնացիոնալիզմին, պահանջելով ինտերնացիոնալ ստեղծել իսկապես հեղափոխական տարրերից («Ռուսոական պացիֆիզմ և սոցիալիստական պացիֆիզմ», Բաց նամակ Շառլ Ենինին):

Կազմակերպելով ցիմմերվալդյան ձախ թեք համախմբելով նրան վորոշակի դադարաբեկան հիմքի վրա և սահմանադատվելով ցիմմերվալդյան մեծամասնութեանից, Լենինը միևնույն ժամանակ պաշար է մղում հեղափոխական մարքսիզմից կատարվող բոլոր շեղումների դեմ: Այստեղ սեղծ է հիշատակել նրա բանավեճը Լեհ-Գեռմանական (Ռ. Լյուքսեմբուրգ, Կ. Ռադեկ) և Նոյն-դեկան սոց.-դեմոկրատների հետ, վորոնք բացասաբար էյին վերաբերվում ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ լոզունգին և ընդհանրապես թերադնահատում էյին դեմոկրատիայի համար մղվող պաշարի նշանակութեանը իմպերիալիզմի շրջանում («Սոցիալիստական հեղափոխութեանը և ազգերի ինքնորոշման իրավունքը»: Ինքնորոշման վերաբերյալ դիտելու խախտումները)՝ նրա բանավեճը չվեցարական, սկանդինավյան և հոլանդական սոց.-դեմոկրատների հետ դիտաթախման լոզունգի վերաբերյալ հարցի շուրջը («Զինաթախման լոզունգի մասին»), հատուկ հղվածը Ռ. Լյուքսեմբուրգի սխալների մասին («Յունուսի բողոքի մասին»), Գ. Պյատակովի սխալ հույսաքնների քննադատութեանը ազգային հարցում («Մարքսիզմի մի ծաղրանկար է մասին և իմպերիալիստական եկոնոմիզմի մասին») և

Ն. Բուխարինի սխալ հայացքները քննադատությունը («Ժմպերիայիստական եկոնոմիզմի ծնվող ուղղության մասին»), Ն. Բուխարինի սխալ հայացքների քննադատությունը պետության վերաբերյալ հարցում: Անհրաժեշտ է նշել, վոր իմպերալիստական պատերազմի շրջանի իր աշխատություններում Լենինը, նախատեսելով, վորպես պատերազմի հետևանք, կապիտալիզմի վերագումը և բուրժուական-դեմոկրատական հեղափոխության անխուսափելիությունը Ռուսաստանի համար (իսկ հետո՝ հենց նրա համար ել-սոցիալիստականին) և սոցիալիստական հեղափոխության անխուսափելիությունը Արևմտյան Յեմբուրգի յերկրների համար,—դրեց և լուծեց անսակառն և քաղաքական պրոբլեմներ մի հսկայական կոմպլեքս — գաղութային ժողովուրդների պայքարի և սոցիալիստական շահակությունների նշանակությունը. սոցիալիզմի հաղթանակը մի յերկրում («...սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է սկզբում սակավաթիվ կամ նույն իսկ մեկ, ոտանձին վերցրած, կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթանակած պրոլետարիատը, Երազրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստներին և կազմակերպելով իր սոցիալիստական արտադրությունը, կկանգնեք մնացած կապիտալիստական աշխարհի դեմ, իր կողմը դրավելով մյուս յերկրների ճնշված դատարարներին, յերանց մեջ ապստամբություն հարուցելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտության դեպքում նույնիսկ զինվորական ուժով դուրս դալով շահագործող դատարարների և նրանց պետությունների դեմ»: Ազգային հարց. պրոլետարիատի պետության հարց. սոցիալիստական հեղափոխության Երկրան մոմենտները և առանձնահատկությունները. «դեմոկրատիայի իրազորմելիության մասին

իմպերալիզմի պայմաններում. անհեկախների հարցը. իմպերալիզմի վերլուծությունը և այլն:

1916 թ. առաջին կեսի ընթացքում Լենինը Յուրբիում դրեց մի մեծ աշխատություն «Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի նորագույն ետապ» անունով: Այդ գրքի մեջ, վոր տալիս է իմպերալիզմի, վորպես «մահացող», «նեխող» կապիտալիզմի, սոցիալիստական հեղափոխության նախորդակը հանդիսացող կապիտալիզմի ուշագրավ վերլուծությունը, Լենինը նպատակ էր դրել «ցույց տալ բուրժուական վիճակագրության հավաքական անվիճելի տվյալների և բոլոր յերկրների բուրժուական գիտնականների խոստովանությունների համաձայն, թե ինչ ընդհանուր պատկեր է ունեցել համաշխարհային կապիտալիստական անտեսությունը իր միջազգային հարաբերությունների մեջ XX դարի սկզբներին, առաջին իմպերալիստական համաշխարհային պատերազմի նախորդներին»:

Պատերազմի տարիներում Լենինը ուսուական բալլը վիզմի առաջնորդից դառնում է սկզբում հեղափոխական ինտերնացիոնալիստների առաջնորդ, իսկ հետո, հատկապես 1917թ. Հոկտեմբերից հետո, — միջազգային հեղափոխական շարժման առաջնորդ:

Մշակելով մարքսիստական տեսության և քաղաքականության բոլոր հիմնական հարցերը պատերազմի շրջանում, Լենինը միևնույն ժամանակ զեկավարում է Ռուսաստանի բալլչեիկների գործունեյությունը, վորքան այդ թույլ ելին տալիս Ռուսաստանի հետ յեղած թույլ կապերը Լենինից բաժանող հեռավորությունը: «Ռուսաստանի նշանավոր են Լենինի «Մի բանի թեղիաները» («Սոցիալ-դեմոկրատի») 1915 թ. հոկտեմբ. 13-ի, №

47) , վորոնք պարունակում է յին գործնական զիրենկտի- ներ՝ ռազմա-արդյունաբերական կոմիտեներին մասնակ- ցելու դեմ , գործադուլային շարժումն ուժեղացնելու և զարգացնելու մասին՝ « յերեք կեսերի » լողունգով (դեմո- կրատական հանրապետութիւն , կալվածատիրական հողի բռնազբաւում , ութթամյա բանվորական որ) . բանվորական պառլամենտի խորհուրդներին՝ վոր- ուն ապստամբութեան որդաններ , վորպէս հեղափոխա- կան իշխանութեան որդաններ լողունգը և այլն : Թեղիս- նեքում Լենինը գրում եր , վոր յեթե պառլամենտը Թուրքիայում իշխանութեան գլուխ կարգեր պրոլե- տարիատին , ապա « մենք . . . սխտեմատիկ կերպով կա- պրստամբեցնէինք այժմ վելիկոռուսներ կողմից ճնշ- ված ազգերին ու գաղութները և Ասիայի կախյալ յեր- կրները (Հնդկաստան , Չինաստան , Պարսկաստան , և այլն) , ինչպէս նաեւ — և առաջին հերթին — ապստամբութեան կհանէինք Յեւրոպայի սոցիա- լիստական պրոլետարիատին ընդդէմ նրա կա- ռաւարութեան և հակառակ նրա սոցիալ-շովինիստ- ների : Վոչ մի կտակած չի կարող լինել այն մասին , վոր պրոլետարիատի հաղթանակը Ռուսա- տանում արտակարգ նպաստավոր պայմաններ կտար հե- ղափոխութեան զարգացման համար Ասիայում և Յեւրո- պայում » :

Զբաղվելով ուսական և միջազգային հեղափոխա- կան շարժման հարցերով , Լենինը միաժամանակ , հսկա- յական հետաքրքրութիւն եր ցուցաբերում դեպի տեղա- կան — չլեյցարական — բանվորական շարժումը , աշխա- տելով արդեցութեան ունենալ նրա վրա չլեյցարական ձախերի միջոցով : Լենինի արխիւում պահպանվել են

նրա մի շարք ձեռագրերը ձախ ցիմերովալդիստներէ խնդիրներին և գործեալակերպի մասին չլեյցարական սո- ցիալ-դեմոկրատիայի շարքերում : Միևնույն ժամանակ Լենինն ամեն մի հնարավորութեանից ոգտվում եր՝ չլեյցարական բանվորներին ծանօթացնելու համար ուսա պրոլետարիատի հեղափոխական անցյալին և նրա հեղափոխական հեռանկարներին (« Զեկուցում 1905 թ . հեղափոխութեան մասին » — 1917 թ . հունվարին) :

Լենինի՝ պատերազմի առաջադրած հարցերի հետ մոտիկ առնչութիւն չունեցող աշխատութեաններից պետք է հիշել 1915 թ . ավարտված և հեղափոխութիւն- նից հետո հրատարակած բրյոչուրը — « Նոր տվյալներ կա- պիտալիզմի զարգացման որենքների մասին հողագործու- թեան մեջ » : Պատերազմի սկզբում Լենինը գրել է մի հոդված — « Կարլ Մարքս » , վորը հետո վոչ-լրով տպա- գրվել է Գրանատի քառաբանում : Դեռ պատերազմից շատ առաջ Լենինը բւրջ կերպով ուսումնասիրում եր փիլիսոփայութիւնը , մեծ քաղվածքներ անելով Արես- տոտելից , Ֆեյերբախից և առանձնապէս Հեգելից և մը- տադիր եր մի դիրք գրել Հեգելի փիլիսոփայութեան և դիալեկտիկական մեթոդի մասին : Այդ աշխատանքը Լենինը շարունակում եր նաեւ պատերազմի ժամանակ , ինչպէս նաեւ իրագործելու իր մտադրութիւնը , և Լենինն ստիպված յեղով հրաժարվելու իր պլանից :

1917 թիվ Ը

Հենց վոր Շվեյցարիայում ստացվեցին փետրվար- յան հեղափոխութեան առաջին լուրերը , Լենինն իսկույն նպատակ դրեց , ինչպէս ել լինի , Ռուսաստան դալ . այդ

վորսչումն իրագործելը չառ, չափազանց դժվար էր։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները վոչ մի սլայ-մանով չէին բաց թողնի ոուս հեղափոխական ինտեր-նացիոնալիստներին ժամանակավոր կառավարութունն էլ չահագորդոված չեր, վոր Ռուսաստան վերադառնան «սարսփողականները», ինչպես այն ժամանակ անվա-նում էին բայլչեիկներին։ Պետրոգրադի բանվորական պատգամավորական մենչեիկ-եռակական խորհուրդն այդ հարցում խուսափողական դիրք եր բռնել։ Համոզ-վելով, վոր հեղափոխական Ռուսաստան վերադառնալու բոլոր «լեզալ» ճանապարհները նրա համար փակված են, և գաղտնի վերադարձի բոլոր բաղմազան պլաններն անի-րագործելի, Լենինը վճռեց բացահայտ կերպով վերադառնալ Գերմանիայի վրայով, վորն այն ժամա-նակ, ինչպես հայտնի չե, պատերազմի վիճակում եր գտնվում։ Այս գործում միջնորդութուն ստանձնեցին չվեյցարական սոցիալ-դեմոկրատները Թ. Պլատտենի գլխավորությամբ։

Գերմանական կառավարութունը համաձայնից թույլ տալ վտարանդիներին անցնել իր յերկրով, և Լե-նինը մի խումբ ընկերների հետ Գերմանիայի վրայով անցավ Շվեդիա, իսկ այնտեղից Ֆինլանդիայի վրայով Պետրոգրադ, ուր նա յեկավ 1917 թ. ապրիլի 16-ին (3-ին)։ Կայարանում նրան հանդիսավոր կերպով դիմա-վորեցին Պետրոգրադի բայլչեիկներն ու բանվորները։ Բուրժուազիան և սահարյուրակայինները կատաղի հար-ձակումներ սկսեցին Լենինի դեմ, զրպարտիչ լուրեր տա-րածելով, թե իրր նա կապեր ունի գերմանական կառա-վարության հետ։

Դեռ Շվեյցարիայում գտնված ժամանակ, իր արամա-

դրության տակ միայն աղքատիկ տեղեկութուններ ու-նենալով Փետրվարյան հեղափոխության ընթացքի մա-սին, Լենինը («Նամակներ հեռվից» հետաքրքրական բրո-շյուրում վերլուծության և յենթարկում տեղի ունեցած հեղաշրջումն ու նրա պատճառները, փետրվարյան որե-րը բնորոշում ե, վորպես «առաջին հեղափոխության ա-ռաջին ետապ» և ձևակերպում ե բանլոր դասակարգի հետագա անելիքները, մատնանշելով նրան, վոր անհրա-ժեշտ ե կովել իշխանությունը խորհուրդներին հանձնե-լու համար, հանուն պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիական դիկտատուրայի, հանուն սոցիալիզմի, և ընդգծում ե, վոր հանուն խորհրդային իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի մղվելիք կովում բանլոր դասակարգի դաշնակիցն են յերկրի աշխատավոր բնակչության լայն մասաները (գլխավորապես գյուղա-ցիությունը) և միջադպին պրոլետարիատը։ «Այդ յեր-կու դաշնակիցների հետ,—գրում եր Լենինը,—Ռու-սաստանի պրոլետարիատը կարող ե առաջ դնալ և կչես, ոգտագործելով այժմյան անցողիկ մոմենտի առանձնա-հատկությունները, դեպի՝ սկզբում՝ դեմոկրատական հանրապետության նվաճում և գյուղացիության լիա-կատար հաղթանակ կալվածատերերի հանդեպ, իսկ հե-տո դեպի սոցիալիզմ, վորը միայն կարող ե պատերազմից տանջված ժողովուրդներին տալ խաղաղություն, հաց և ազատություն»։ Միաժամանակ Լենինը կուսակցությա-նը նախադուչացնում եր վորեւ փորձ չանել միանալու սոցիալ-լովինիստներին («հեղափոխական պաշտանդա-կաններին») կամ սոցիալ-դեմոկրատիայի տատանվող տարրերի հետ, ինչպես որինակ՝ Տրոցկու խմբակն եր, պնդելով, վոր անհրաժեշտ ե «չարունակել իր կուսակ-

ցութիւնն աշխատանքը հետեւողական ինտերնացիոնալ վոզով»:

Պետրոգրադ գալուց հետո Լենինն իսկույն հանդես ե գալիս իր նշանաւոր «ապրիլյան թեզիսներով», վորոնք հետո կուսակցութեան ամբողջ հետագա գործերակերպի հիմքը դարձան: Այդ թեզիսների տպավորութիւնը հրակայական եր:

Թեզիսներու մ առաջադրած ե «Պրոլետարիատի ինդիւրները մեր հեղափոխութեան մեջ» բրոշյուրում, ինչպիս նաեւ բազմաթիւ հոդվածներում ու ճառերում զարգացրած՝ Լենինի հիմնական դադափարները սրանք յին — ինքնակալութեան տապալումից հետո իշխանութիւնն անցաւ բուրժուազիայի ձեռքը, կապիտալիստների ձեռքը, պատերազմն առաջիկա նման իսպերիալիստական պատերազմ ե, ուստի պրոլետարիատը չի կարող պատարանել առէ պատերազմը. «ամենափոքր զինումը հեղափոխական պաշտպանողականութեանը — դա՛վա՛ստութեան ե սոցիալիզմի հանգիստ, բացարձակ հրաժարում ինտերնացիոնալիզմից», «պետք ե մասսաներին համբերութեամբ պարզարանել: և ապացուցել, վոր չի կարելի պատերազմն իսկական դեմոկրատական, վոչրոնի հաշտութեամբ վերջացնել՝ առանց կապիտալի տապալման», մոմենտի առանձնահատկութիւնը «յերկիշխանութիւնն ե», այն, վոր ժամանակավոր կառավարութեան, բուրժուական կառավարութեան կողքին կալմակերպվել ե դեռ թույլ, սաղմային, բայց համենայն դեպս անպայման իրապէս գոյութիւն ունեցող ե ուժող ուրիշ կառավարութիւն — բանվորների ե զինվորների պատգամավորական խորհուրդները». վոր մի յթտահալութիւն ե վոչ մի աջակցութիւն ժամանակավոր կառավարութեանը ցուց տալ չի կարելի. ամբողջ

իշխանութիւնը յերկրում, վարից—վեր պետք ե պատհանի խորհուրդներին, վորը պետութեան նոր տիպն ե, փարիզի Կոմունային ազգակից. տվյալ մոմենտում մեր կուսակցութիւնը փոքրամասնութիւն ե կազմում, մեծամասնութիւնը խորհուրդներում պատկանում ե մենչիվիկներին և եսերներին, վորոնք բուրժուազիայի ազգացութեան տակն են դնելում, պաշտպանում են նրան, վախենում են կտրել իրենց կապերը կապիտալիստների հետ և իշխանութիւնն ինքնուրույն կերպով իրենց ձեռքը վերցնել: Մերձավոր ժամանակի լոզունգը — «Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» դեռ չի նշանակում պրոլետարիատի զերիտատուրա. այդ լոզունգը հալասարագոր ե պահանջելու, վոր իշխանութիւնն անցնի մանր—բուրժուական դեմոկրատիայի ձեռքը՝ նրան բուրժուազիայից անջատելու նպատակով: Քանի դեռ մենք վոքբա՛մասնութիւն ենք կազմում, քանի դեռ ժողովրդի (հատկապէս գյուղացիութեան) լայն մասսաները (նաեւ բանվորութեան մի մասը) պաշտպանում ե մենչիվիկներին և եսերներին, պետք ե մերկացնել այդ մանր—բուրժուական կուսակցութիւններին համաձայնողական քաղաքականութիւնը, պարզել մասսաների առաջ, բացատրել նրանց սխալները և սովորն, համառ աշխատանքով ստորին խաւերում, բանվորների, զինվորների և գյուղացիների մեջ, նվաճել նրանց վստահութիւնը, նվաճել մեծամասնութիւն խորհուրդներում: Յերբ հետզհետե գինվորա—գյուղացիական և բանվորական մասսաները փորձով համոզվեցին, վոր համաձայնողականների քաղաքականութիւնը կործանարար ե, և նրանք անընդունակ են խզերու իրենց կապերը բուրժուազիայի հետ և լուծելու հեղափոխութեան կարեւորագույն խնդիրները (հաշտութիւն, հող, ազա-

տութիւն), մեծամասնութիւնը խորհուրդներում սկըսեց անցնել բալլէտիկների ձեռքը, և այդ ժամանակ «Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» լողունդը դարձավ պրոլետարիատի և չքավոր գյուղացիութեան գիկտատուրայի լողունդ: Լենինի ռաբմադիտական պլանի էյուլթիւնն էր՝ համոզել ժողովրդի մեծամասնութեանը, վոր դեռ վստահանում է համաձայնողականներին և բուրժուազիային, վոր բալլէտիկների տեսակեարը ձիւտ է, նրանց բերել այն գիտակցութեանը, վոր անհրաժեշտ է պրոլետարիատի գիկտատուրան, վորպես մի ուժ, վոր ընդունակ է յերկիրը դուրս բերելու խմորի խալիստական պատերազմի վիճակից և նրա ստեղծած տնտեսական քայքայումից: Վորպես հեղափոխութեան «յերկրորդ ետապի» խնդիր դնելով իշխանութեան անցումը բանվոր դասակարգի ձեռքը, Լենինը միաժամանակ զգուշացնում էր դեռևս բացարձակ փոքրամասնութիւն կազմող կուսակցութեանը «բանվորական կառավարութեան» ձեռքով իշխանութիւնն անմիջապես վերցնելու արոցկիստական խաղից, քանի վոր այդ կնշանակելը «ցատկել» դեռ իշյուզիաներից չաղատադրված գյուղացիութեան վրայից, վորը բնակչութեան մեծամասնութիւնն է կազմում և դեռ վստահութեամբ է վերաբերվում բուրժուազիային և համաձայնողականներին: Խորհրդային հանրապետութեան լողունդի հետ միաժամանակ Լենինն առաջադրեց կարլժատիրական հողերը գյուղացիների ձեռքով անհապաղ (առանց ժամանակավոր կառավարութեան խոստացած Սահմանադրի ժողովին ստրսելու) գրավելու և առհասարակ բոլոր հողերն ազգայնացնելու սահմանը, ցարիզմի ճնշած բոլոր ազգերի և ժողովուրդների Ռուսաստանից անջատվելու ազատութեան սահմանը, բոլոր բանկերն ու սին-

գիկատներն ազգայնացման յենթարկելու և նրանց վրա խորհուրդների վերահսկողութիւն սահմանելու սահմանը: Այդ տնտեսական ձեռնարկումները, — բացատրում էր Լենինը, — դեռ սոցիալիզմ է, բայց արդեն «մի քայլ է դեպի սոցիալիզմ», իսկ պատերազմի ստեղծած դրութիւնից չի կարելի դուրս գալ, չգնալով դեպի առաջ — դեպի սոցիալիզմ, դեպի պրոլետարիատի գիկտատուրա: «Սոցիալիզմից դուրս, — գրում էր Լենինը, — մարդկութիւնը փրկութիւն չունի պատերազմներից, սովից և միլիոնավոր ու միլիոնավոր մարդկային նոր զոհերից»: Բացի դրանից, Լենինը թեգիաներում ցույց տվեց, վոր ռուսական հեղափոխական պրոլետարիատը պարտավոր է իր վրա վերցնելու III Ինտերնացիոնալ ստեղծելու նախաձեռնութիւնը, վորի մեջ չեն մտնելու վո՛չ սոցիալ-չովինիստները, վո՛չ ցենտրիստները:

Լենինի ղեկավարութեամբ կուսակցութիւնը, վորի շարքերում մինչև Վլադիմիր Իլյիչի գալը վորոշ տոտանումներ էլին նկատվում հետագա պայքարի ուղիներն ընտրելու հարցում, վճռականապես ուղղում է իր դիժը և բռնում է սոցիալիզմի համար մղվող պայքարի ուղին: Պետրոգրադյան, իսկ հետո Համառուսական ապրիլյան կոնֆերենցիայում, վորն իր նշանակութեամբ համասար էր համագումարի, հաղթանակեցին ամբողջապես լենինյան իդեաները: Պետրոգրադի կոնֆերենցիայում, վոր տեղի ունեցավ հին տոմարով ապրիլի 14—22-ը, Լենինը հանդես յեկավ մի գեկուցումով, վորի նյութին էր ընթացիկ մոմենտը և մեր վերաբերմունքը դեպի ժամանակավոր կառավարութիւնը. Համառուսական ապրիլյան կոնֆերենցիայում (ապրիլի 24—29) նա գիկուցում է ընթացիկ մոմենտի, հողային հարցի,

կուսակցական ծրագրի փոփոխութեան մասին և մի շարք ճառեր և արտասանում պատերազմի, ազդային հարցի և խնդիրների շուրջը: Այդ կոնֆերենցիայի շրջանում Լենինը պայքարում է աջ ուղղակիցիայի դեմ (Կամենև, Ռիկով), վրը վորձում էր սահմանափակել չարժման խնդիրները բուրժուական — դեմոկրատական հեղափոխության շրջանակներով, պահանջում էր, վոր հեղափոխական պրոլետարիատը ողնի ժամանակավոր Կառավարութեանը «այնքան, վորքան նա խաղաղ և կու- վում է հին ռեժիմի մնացորդների դեմ» (վորպես թե կապիտալիստների կառավարութեանը կարող էր կըռ- վել հին ռեժիմի դեմ), բացասաբար էր վերաբերվում հանուն սոցիալիզմի, հանուն պրոլետարիատի զիկտա- տուրայի պայքարելու անհրաժեշտութեանը: միաժամա- նակ Լենինը պայքար էր մղում «ձախ» ուկրաինացիների (Պյատակով) դեմ, վորոնք ժխտում էին ազգերի ինք- նորոշման իրավունքը: Այդ ժամանակ էլ, ապրիլի 19—21 ստեղծված քաղաքական մեծ ճգնաժամի օրերին, վոր ստեղծվեց չնորհիվ Միլյուկովի հայտնի հայտադրի, վորով ժամանակավոր Կառավարութեանն իր հավա- տարմութեանն էր հայտնում դաշնակիցների հետ կըն- քված պայմանագրերին, Լենինը հաստատորեն չտկում, ուղղում է Պետերբուրգի կամխոնի դիմը, վորը տրա- մադրութեանն էր ցույց տալիս Կի—ից «մի վորքը ալելի ձախ» դիրք բռնելու (Լենինի առաջարկութեամբ Կի մասսաներին խաղաղ ցույցերի լոգունգ տվեց, իսկ Պե- տերբուրգի կոմիտեն առաջադրեց ժամանակավոր Կա- տավարութեան տապալման՝ տվյալ պայմաններում ար- կածախնդրական լոգունգը, քանի վոր հեղափոխական պրոլետարիատի հետ չէր դեռ ժողովրդի կայուն մեծա- մասնութեանը): Աջ ուղղակիցիայի կիվիզացիան և

ձախ «ցատկումները» ժամանակին վերացումը, բայ- չեվիկների քաղաքականութեան քաղաքականների պար- զաբանումը լայն մասսաներին և դրան գուզնիթաց՝ մենչեվիկների և եսերների «մատահութեան և համա- ձայնութեան մանր—բուրժուական քաղաքականութեան քննադատութեանը», կուսակցական կազմակերպու- թեանների լայն ճյուղավորված ցանցի ստեղծումը դոր- ծարաններում և զինվորական մասերում, — այդ ամենն ապահովեց մեր կուսակցութեան ազգեցութեան արտա- սովոր աճումը մասսաների մեջ, նրանց համախմբումն ու մորիլիզացիան լենինյան լոգունգներով: Շնորհիվ Լենինի քաղաքականութեան՝ կուսակցութեան ազգե- ցութեանը մասսաների մեջ աճում էր օրեցօր:

Մինչև հուլիսյան օրերը Լենինը շարունակ դրում էր «Պրալդայում», վորպես խմբագրութեան անդամ («Պրալդայում» տպվող նրա այդ շրջանի հոդվածները՝ հեղափոխական պայքարի խնդիրները մասսաների ա- ոաջ լուսաբանելու օրինակներ են) և հաճախ հանդես էր գալիս բանվորների ու զինվորների միախնդներում ու ժողովներում: Նախահուլիսյան շրջանին են վերաբե- բում նաև նրա մեծ ճառերը հոլաքին հարցի, պատերազ- մի և դեպի ժամանակավոր Կառավարութեանը ցույց տրվելիք չեքսերմոնի մասին չյուղացիական պատ- դատմությունների Համառուսական համագումարում հու- նիսի 4—ին (մայիսի 22—ին) և իր մեծամասնութեամբ դեռ մենչեվիկների ու եսերների յետևից ընթացող խորհուրդների I համագումարում՝ հունիսի 17—ին և 22—ին (4 և 9): Այդ շրջանի բոլոր քաղաքական կամ- պանիաները (խորհուրդների ընտրութեաններ, շրջա- նային դումաներ և այլն) և Պետերբուրգի պրոլետա-

րիատի բոլոր մասսայական շարժումներն ընթանում ե-
լին Լենինի անմիջական ղեկավարութեամբ:

Յերբ սկսվեցին հուլիսյան ուրերը, Լենինը, վոր այդ
ժամանակ հիվանդության պատճառով գտնվում էր
Պետրոգրադին մոտիկ մի գյուղում, իսկույն յեկավ
մայրաքաղաք, վորպեսզի Պետրոգրադի պրոլետարիա-
տի տարերայնորեն սկսված շարժմանը առավելագույն
կազմակերպած քնույթ տա և ղեկավարի այդ շար-
ժումը: Թեև այդ մոմենտին բայլչեփիկներ յետեփեց
դնում էր համարյա ամբողջ Պետրոգրադի պրոլետա-
րիատը և Պետրոգրադի կայսրը, այնուամենայնիվ
Լենինը մտադրած էր համարում բայլչեփիկների կող-
մից իշխանությունն իրենց ձեռքը վերցնելը, քանի վոր
դեռ մեր կուսակցության կողմը չէր ամբողջ բանվոր
դասակարգի և ժողովրդի մեծամասնությունը: Պետրո-
գրադի բաժնիկների հուլիսյան յեղույթը, վոր ծափա-
լից իշխանությունը Խորհուրդների ձեռքը վերցնելու
լողունդով, վերջացավ հեղափոխական բանվորների և
գինվորների ժամանակավոր պարտութեամբ, վորովհե-
տե մենչեփիկներն ու եսերները բացահայտորեն և ամ-
բողջովին անցան հակահեղափոխական բուրժուազիայի
կողմը և Պետրոգրադ կանչեցին ռեակցիոն գործերին:
Շարժումը կազմավորվելու և բարոյաբերելու համար
բուրժուազիան գործի յե դնում հետախուզական բաժնի
և Գ. Ալեքսինսկու հնարած կեղտոտ գրպարտիչ «իստ-
տաթուղթն» այն մատին, թե Լենինը, իբր թե, գերմա-
նական լրտես և, կաշառված գերմանական կառավարու-
թյան կողմից և գործում է գերմանական իմպերիալիզ-
մի շահերի համեմատ: Լենինի և բայլչեփիկների դեմ
սկսված հարածանքն այդ շրջանում հասնում է իր դա-
ղաթնակետին: Ժամանակավոր Կառավարությունը հր-

րաման է տալիս Լենինին ձերբակալելու մասին: Կերեն-
սկու յունեկեղների բանդաները վնտրում են հեղափո-
խական բանվորների առաջնորդին, վորպեսզի նրան ըս-
պանեն: Այդ պայմաններում, Լենինը, կուսակցության
կի վորոշմամբ անցնում է անլեզալ վիճակի: Մի քանի
որ նա թաղնվում է Պետրոգրադի շրջակայքում, բան-
վոր Ս. Ալիլուեյսկի բնակարանում, հետո Սետորոբեցկի
մոտերը (Պետրոգրադից վոչ հեռու), բանվոր Ն. Յե-
մելյանովի մոտ, իսկ մի ուրից հետո յեկ այդտեղից հե-
ռանում և ապրում է Ռադլիվ կայարանից մի քանի
վերստ հեռու գտնվող մի վրանում, վորտեղ մնում է
մոտ մեկ ու կես ամիս: Սեպտեմբերի սկզբին (հին տո-
մարով) Վրադկիմի Իլյիչը զաղտնի կերպով անցնում է
Փինյանդական սահմանից (չոգեկառքի վրա՝ վորպես
հնոցպան) և հաստատվում է Հելսինգֆորսում, վորտեղ
անլեզալ ապրում է մտահեշի Փին սոցիալ-դեմոկրատ-
ների մոտ:

Այդտեղից Լենինը կապ է պահպանում կի հետ և
չարունակում է յետնդով աշխատակցել կուսակցու-
թյան ղեկավար որգանում, վորը զանազան անուններով
չարունակում է լույս տեսնել ցրված ու փակված
«Պրավդայի» փոխարեն: Այդ շրջանում գրած մի շարք
դիբեկաիվ հոգվածներում և բրոշյուրներում («Լո-
գունգների առթիվ», «Մահամադրական իլլյուզիաների
մասին», «Հեղափոխության դասերը», «Սպառնացող ա-
դետը, և ինչպես կռվել նրա դեմ», «Ռուսական հեղա-
փոխությունը և քաղաքացիական պատերազմը», «Հեղա-
փոխության խնդիրները», «Ճգնաժամը հասունացել է»,
«Կարահեռ», արգյոք, բայլչեփիկներն իշխանությունը»,
(վերջին հոգվածը տպվեց «Посвещение» ամսագրում)
Լենինը քնութագրում է այն դրությունը, վորն ստեղ-

ծվել եր յերկրում հուլիսյան ուրբից հետո, և մասսա-
ներին ու կուսակցութեանը նախապատրաստում է՝ իշ-
խանութեան համար զինված կռիւ մղելու անխուսափե-
լիութեան ու անհրաժեշտութեան մտքին: Հուլիսյան
կրիզիսից հետո, վոր բեկման մոմենտն եր հեղափոխա-
թեան ընթացքի մեջ, հենց առաջին ուրբում Լենինը
մասնաճնշում է, վոր հեղափոխութեան դարգացման
«խաղաղ» շրջանն ավարտվեց, և վոր այժմ, յերբ հաղ-
թել է հակահեղափոխութեանը, կադետական կուսակ-
ցութեան գլխավորութեամբ, և իշխանութեանն առանց
քաղաքացիական պատերազմի, առանց նոր, «յերկրորդ»
հեղափոխութեան վերջնել չի կարելի: Քայլ առ քայլ,
մերկացնելով մասսաների առաջ մենչելիկները ու եսեր-
ները դավաճանական դերը հեղափոխութեան մեջ, վո-
րոնք բանվոր դասակարգին և գյուղացիութեանը տա-
նում են դեպի կապիտալիստների իշխանութեանը,
հատկապես գյուղացիութեանը ցույց տալով հող ստա-
նալու լիակատար անհուսալիութեանը՝ «քանի դեռ ժո-
ղովրդական վստահութեանից չեն զրկված եսերների ու
մենչելիկները կուսակցութեանները», քանի դեռ իշ-
խանութեանը չի անցնել պրոլետարիատի ձեռքը, — Լե-
նինը միաժամանակ մանրամասնորեն և բաղձալից մա-
նիորեն մշակում է ապագա հեղափոխական կառավա-
րութեան անտեսական ծրագիրը, առաջադրելով հե-
տեվյալ ամենապլանային միջոցները. — բանկերի ազգա-
նացում, բոլոր բանկերի միացումը, սինդիկատները,
այսինքն կապիտալիստների խոշորագույն մոնոպոլիա-
տական միութեանների ազգայնացում (նալթային,
ածխի, մետաղաձուլական, չաքարի և այլ սինդիկատ-
ներ), առևտրական դադարների վերացում, սպառման

կարգավորում և այլն. «Կամ կործանվել, կամ հասնել
և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրնե-
րից» — այսպես եր վորոշում Լենինը բանվոր դասակարգի
խոգիրներն ամբողջ մերձավոր պատմական շրջանի հա-
մար, նորից ու նորից ընդգծելով, վոր XX դարի Ռու-
սաստանում, վոր հեղափոխական ճանապարհով հանրա-
պետութուն և դեմոկրատիզմ և նվաճել, առաջ դնալ
չի կարելի՝ չընթանալով դեպի սոցիալիզմ, քայլեր չա-
նելով դեպի սոցիալիզմ»:

Իր դադարնաբանից ել հենց Լենինը դեկավարում է
այդ ժամանակ Պետրոգրադում կիսալեզալ կերպով
գումարված կուսակցութեան IV համագումարի աշխա-
տանքները և շատ և աշխատում կուսակցական ծրագրի
հարցերի վրա. ծրագրով նա ուժեղ կերպով զբաղվել եր
հակա դեռ հուլիսյան ուրբին նախորդող շրջանում
(«Նյութեր կուսակցական ծրագրի վերաքննութեան մա-
սին», «Կուսակցական ծրագրի վերաքննութեան առ-
թիվ»):

Շեկսինգֆորսում Լենինն ավարտում է իր «Պետու-
թեան և հեղափոխութեան» նշանավոր գիրքը, վորի
մեջ վերականգնում է նոր բարձրութեան վրա յե դնում
մաքքսիզմի ուսմունքը պետութեան մասին, վոր մա-
սամբ մոռացված եր, մասամբ աղճատված ուղորտու-
նիստների, հատկապես Կաուցկու կողմից: Լենինը դեռ
արտասահմանում փետրվարյան հեղափոխութեանից
առաջ եր սկսել աշխատել այդ գրքի վրա, վոր հակա-
յական տեսական հետաքրքրութեան և բացառիկ գործ-
նական-քաղաքական նշանակութեան ունի հանուն իր
գիկտատուրայի պայքարող պրոլետարիատի համար:
Յուրջ տալով, վոր պետութեանը (բուրժուական) ծագում
է, վորպես դասակարգային հակասութեանների ան-

հանդիմանութեան արդյունք, վոր նա, ինչպիսի «գեմու-
կրատական» կամ «պարլամենտական» ձև ել ընդունի,
փաստորեն մի գործիք ե բուրժուազիայի ձեռքին, վորը-
րամասնութեան ձեռքին՝ շահագործվողներին և անխա-
տապվորութեանը ճնշելու համար, Լենինը, հենվելով
հատկապես Փարիզի կոմունայի վորձի վրա, վոր ամ-
փոված ե Մարքսի կողմից, ցույց ե տալիս, վոր բան-
վոր դասակարգի խնդիրն ե «չարդել», «փշրել» բուր-
ժուական, բյուրոկրատական-զինվորական պետական
մեքենան և նրա փոխարեն ստեղծել իր սեփական պրո-
լետարական պետութեանը: «Բուրժուական պետու-
թեանը հնարավոր չի պրոլետարականով փոխարինել ա-
ռանց բռնի հեղափոխութեան»: Վորո՞նք են պրոլետա-
րական պետութեան խնդիրները: «Պրոլետարիատին ան-
հրաժեշտ ե պետական իշխանութեանը, ուժի կենտրո-
նացված կազմակերպութեան, բռնութեան կազմակեր-
պութեան թե՛ շահագործողների դիմադրութեանը ճշն-
շելու թե՛ բնակչութեան հսկայական մասային— գյու-
ղացիութեանը, մանր բուրժուազիային, պրոլետարիա-
տին ղեկավարելու համար՝ սոցիալիստական տնտեսու-
թեանը «կարգել զցելու գործում»: Կազմակերպված և
իշխող դասակարգը, պրոլետարյատը պետք ե «ամբողջ
ժողովուրդը տանի դեպի սոցիալիզմ, ուղղութեան տա
և կազմակերպի նոր հասարակակարգը, բոլոր աշխա-
տավորները և շահագործվողները ուսուցիչը, ղեկա-
վարը, առաջնորդը լինի՝ առանց բուրժուազիայի և
հակառակ բուրժուազիայի իր սեփական հասարակա-
կան կյանքը կառուցելու գործում»: Պրոլետարիատի
դիկտատուրան, վոր անհրաժեշտ ե կապիտալիզմից կո-
մունիզմի անցնելու շրջանում, արդեն պետութեան չի

բառի իսկական իմաստով, վորքան նա ներկայացնում ե
ժողովրդի հսկայական մեծամասնութեան շահերը, աշ-
խատավորութեան շահերը: «Պրոլետարիատի դիկտա-
տուրան ... առաջին անգամ ե դիկտատուրա տալիս
ժողովրդի համար, միաժամանակ անհրաժեշտորեն,
ճնշելով փոքրամասնութեանը, շահագործողներին»:
Հետզհետե, մարդկային հասարակութեան արուարդա-
կան ուժերի զարգացման և դասակարգերի բաժանվե-
լու փերացման համեմատ, պետութեանը մահանում ե,
դառնում ե անպետք, ավելորդ: Հետեվելով կապի-
տալիստական հասարակութեանից կոմունիստական
հասարակութեան առաջացման և զարգացման պրո-
ցեսին և ցույց տալով պետութեան մահացման տնտե-
սական հիմքերը, Լենինը արտակարգ, չափազանց
արժեքավոր անալիզի յե յենթարկում իր գրքում նաև
ապագա կոմունիստական հասարակութեան և նրա յեր-
կու հաջորդական փուլերի (ստորինը— սոցիալիզմ» և
բարձր—«կոմունիզմ») ամենաեյական գծերը:

Հարկադրված լինելով բանվոր դասակարգի անմի-
ջական կռիւի ասպարեղից հետո գտնվելու, Լենինը
միաժամանակ ուշադիր հետեւում ե չարժան ընթաց-
քին, մանրամասնորեն ուսումնասիրելով մասսաների
տրամադրութեանը և վորոպով հեղափոխական ալիքի
նոր բարձրացման նշանները: Կարնիլովի հակահեղա-
փոխական խռովութեանը ճնշելուց հետո, նրանից
հետո, յերբ մեր կուսակցութեանը մեծամասնու-
թեան և ստանում Պետրոգրադի և Մոսկովայի բան-
վորական պատգամավորների խորհրդներում, Լենինը
կուսակցութեան առաջ ե դնում անմիջապես ղեկա-

ապստամբութիւն նախապատրաստելու և կազմա-
կերպելու խնդիրները: «Բայլ չեմ կրնարը պիտք ե իշ-
խանութիւնը վերցնեն»—այսպէս ե կոչվում է ենինի
այն նամակը, վորով նա գլխեց մեր կուսակցութեան
Կենտրոնական, Պետրոգրադի և Մոսկվայի կոմիտե-
ներին սեպտեմբերի 25-27-ին (12-14-ին):

Այդ մոմէնտից ել սկսվում ե Լենինի՝ իր զարմա-
նալի կրքոտութեամբ, անհողողութեամբ և հիմնա-
վորումները բազմակողմանիութեամբ անհախընթաց
«ազդեցիկ» հոգուտ գինձած ապստամբութեան:
Սեպտեմբերի 29-ին (հին տոմարով) Լենինը կատեգո-
րիկ կերպով պահանջում ե անհապաղ «Իշխանութիւնը
վերցնել», «անմիջապէս ապստամբութիւնը բարձրաց-
նել», անողք հարվածելով, ձաղկելով ապստամբու-
թիւնն ու շարժելու կամ հետաձգելու ամեն մի արտ-
մաղբութիւն: «Դանդաղելը—հանցադործութիւն ե»,
գրում ե Լենինը հոկտեմբերի սկզբին. «Յեթե չի կա-
րելի իշխանութիւնը վերցնել առանց ապստամբու-
թեան, պէտք ե ապստամբութեան դիմել իսկույն»:
«Դանդաղելը հավասարազոր ե մահվան», գրում ե
Լենինը հոկտեմբերի 21-ին (8): Դեպքերի կենտրո-
նին, հեղափոխական Պետրոգրադին մոտ լինելու հա-
մար Լենինը գալիս ե Վիբորգ (հին տոմարով՝ սեպտեմ-
բերի վերջին), իսկ հետո, հոկտեմբերի սկզբին ան-
լեզու կերպով հաստատվում ե Պետրոգրադի ծայրա-
մասում: Հոկտեմբերի 23-ին (10-ին) գաղտնի պարս-
ցաներում տեղի յե ունենում կի նիտը, վորտեղ Լե-
նինը հանդէս ե գալիս վորպէս ղեկուցող և բանաձեւ
ե անցկացնում հոգուտ գինձած ապստամբութեան: Կի
տաս անգամը (Լենին, Սվեբդըով, Ստալին, Տրոցկի,

Բուբնով, Սակոյնիկով, Լոմով, Կոլոնտայ, Ջեյ-
ժենսկի, Ուրիցկի) քվարկեցին հոգուտ ապստամ-
բութեան, կի յերկու անգամը (Կամենե, Ջինովյեւ) —
դեմ: Այդ նիստում ել՝ ապստամբութիւնը ղեկավարե-
լու համար ստեղծվում ե քաղաքական բյուրո Լենինի
մասնակցութեամբ: Մի քանի որ հետո, հոկտեմբերի
29-ին (16-ին) տեղի ունեցավ կի յերկրորդ նիտը,
այս անգամ կուսակցութեան մի շարք ամենապատու-
խանաբաւ ընկերների մասնակցութեամբ: Ջինովս
ապստամբութեան մասին ղեկուցեց Լենինը: «Նրա
ճառը, վոր տեղից յերկու ժամից ավելի», — հաղոր-
դում ե իր տպավորութիւնը ժողովի մասնակիցներից
մեկը, լսեց ամենամեծ ուշադրութեամբ. բոլորը լսում
էին, կարծես չունչները պահած. յերբ նա վերջացրեց,
մի քանի րոպե բացարձակ լռութիւն տիրեց. բո-
լորը կարծես հիպնոսի աղբեցութեան տակ էին...
Յես տասներկու տարվա ծանոթ էյի Վլադիմիր Իլյիչի
հետ և այդ ժամանակամիջոցում նրա շատ զեկուցում-
ներն ու ճառերն էյի լսել, — ավելացնում ե այդ նույն
ընկերը, — սակայն այդ բոլորից ամենաշուք այս զե-
կուցումն եր»: Ժողովը հաստատեց կի հոկտեմբերի
23-ի (10-ի) վորոշումը և վորոշեց «կոչ անել բոլոր
կազմակերպութիւններին և բոլոր բանվորներին ու
գինվորներին ամեն կերպ և ամենաուժեղ ձեւով պատ-
րաստվել գինձած ապստամբութեան»: Նորից ու նո-
րից սնդելով ամենատարազ կերպով գինձած ապստամ-
բութիւն նախապատրաստելու անհրաժեշտութիւնը,
Լենինը միաժամանակ անողք քննադատութեան ե
յենթարկում Կամենեի և Ջինովյեւի ոպրոտունիստա-
կան դիրքը և պահանջում ե կուսակցութիւնից վտա-

բիւ նբանց, վորպես, «շտրեյքերիսերն» (կամենեն ու Ձինովյեվը հանդես յեկան վոչ կուսակցական մա-
մուլում ապստամբութեան դեմ, ԿԿ վորոշման դեմ) :
Հոկտեմբերի 24-ին յերեկոյան հեղաշրջման նա-
խորոյցին, Լենինը, վոր շարունակ ամենասերտ կոպ-
եք պահպանում կուսակցութեան ղեկավար աշխա-
տողներին հետ, իր մոտ կանչելով նրանց՝ ապստամ-
բութեան հետ կապված զանազան հարցերը քննելու,
խորհրդակցութեաններին, մայրաքաղաքի գրութեանը
պարզելու և ցուցումներ տալու համար, նորից նա-
մակ և գրում ԿԿ անդամներին, պահանջելով անհապաղ
գինված ապստամբութեան սկսել. «Ամբողջ ուժով
համոզում եմ ընկերներին, վոր այժմ ամեն բան մա-
կից և կախված, վոր այժմ հերթին յեն դրված այնպիսի
հարցեր, վորոնք վոչ թե խորհրդակցութեաններով,
վոչ թե համադրւմարներով են լուծվում, թեկուզ
նույնիսկ խորհուրդներին համապատասխան, այլ բա-
ցառապես ժողովուրդների, մասսայի միջոցով գինված
մասսաների կովով... Սպասել չի կարելի. պետք է,
ինչպես ել լինի, այսօր յերեկոյան, այսօր դիչերը
ձերբակալել կառավարութեանը, գինված անկողով
(հաղթելով, յեթե դիմադրելու լինեն) յունկերներին
և ալին: Սպասել չի կարելի: Կարող ենք ամեն ինչ
կորցնել: Կառավարութեանը տատանվում է, պետք
է նրան հարվածել, ինչպես ել լինի»: Հետո, մի քանի
ժամ անցած, Լենինը դուրս է դալիս իր քաղաքի
ապաստարանից և, չորերը փոխած, անցնում է Սմոլնի
ինստիտուտ, վորպէսզի ալտեղից անմիջապէս
ղեկավարի գինված ապստամբութեանը: Ապստամբու-
թեան գործնական իրականացումը դրված է Ռադմա-

հեղափոխական կոմիտեյի վրա: Վճռական որերին ու
ժամերին, հոկտեմբերի 24-25-ին, ինչպես նաև հետո,
Կերենսկու Պետրոգրադի վրա հարձակվելու շրջա-
նում, Լենինը վոչ միայն քաղաքականապես ղեկա-
վարում էր Ռադմա-հեղափոխական կոմիտեյի գոր-
ծունեութեանը, այլև ամենամոտիկ մասնակցութեան
ունէր նրա ռադմա-ոպերատիվ և դործնական պլան-
ները ու ձեռնարկումների մշակման և իրադրոժման
մեջ:

Հոկտեմբերի 25-ին, հեղաշրջման օրը, յերբ պրո-
լետարական դիկտատուրան հաստատվեց Ռուսաստա-
նում, Լենինն առաջին անգամ՝ հուլիսյան որերից հե-
տո՝ հրապարակով հանդէս է դալիս Պետրոգրադի
բանվորների առաջ իր ճառով Պետրոգրադի խորհը-
րում: Մյուս օրը խորհուրդների II համագումարում,
Լենինի գեկուցման առթիւ ընդունվում են հաշտու-
թեան և հողը գյուղացիներին հանձնելու վերաբերյալ
պատմական ղեկընտնեը: Համագումարն ստեղծում է
բանվորա-գյուղացիական կառավարութեան՝ ժո-
ղովրդական Կոմիտեաների խորհուրդ Լենինի նախա-
դահութեամբ. այդ պաշտոնում Լենինը մնում է
մինչև իր մահը:

Հեղաշրջմանը հաջորդող առաջին օրերը, յերբ
լարված աշխատանք էր կատարվում խորհրդային իշ-
խանութեանը կազմակերպելու ժամանակավոր կա-
ռավարութեան կողմնակիցների հակահեղափոխական
յեղութեանը ճնշելու համար, վտանգավոր ճգնաժամի
ստեղծվեց կուսակցութեան ԿԿ համար. Կամենեք,
Ձինովյեվը և Ռիկովը և մի քանի ուրիշ ընկերներ,
վորոնք պնդում էին, վոր պետք է հրաժարվել դիկ-

տառաւորայից և մենչեվիկներէ ու Լեսերներէ հետ միասին
կողմէն կառավարութիւն կազմել, նոյնամբերի
17-ին (4-ին) դուրս յեկան Կի և Ժողովրդական Կոմի-
սարներէ Սորհրդէի կազմից, վորովհետեւ Լենինի ղե-
կավարութեամբ դործող Կի հրաժարվեց վորեւէ ղեջում
անել իշխանութեան հարցում: Կուսակցութեանը և
բոլոր աշխատավորներին ուղղած կոչում Լենինը նշա-
վակեց այդ ընկերներէ քայլը, վորպէս դասալքու-
թիւն: Կուսակցութիւնը և բանվոր դասակարգը վճռա-
կանապէս պաշտպանեցին Կենտրոնական Կոմիտեյին:

Հակայական նշանակութիւն տալով գյուղացիութե-
ան կողմից պրոլետարիատին պաշտպանելուն, Լե-
նինը շատ և աշխատում հակամարտի միջոցով չըջա-
նում այդ ուղղութեամբ և այդ որերին տեղի ունեցող
գյուղացիական պատգամավորների համադրմամբներում
իր ղեկավարմանը ու ճատերով պարզում, բացատրում
և գյուղացիութեանը մեր կուսակցութեան քաղաքակա-
նութիւնը: Լենինը բացատրում և նրանց, վոր «վար-
ձու բանվորները հիմնական տարածայնութիւններ
չունեն աշխատավոր ու շահագործվող գյուղացիութեան
հետ: Սոցիալիզմը լիովին կարող և բաղաւորել թե
մեկի և թե մյուսի շահերը: Միայն սոցիալիզմը
կարող և բաղաւորել նրանց շահերը: Վորովհետեւ
գյուղացիութեան մի մասն այդ չըջանում ձախ եսերների
յետեմից ևր դնում, ուստի Վլադիմիր Իլյիչը վորո-
շում և անցկացնում, վորի համաձայն ձախ եսերների
մի քանի ներկայացուցիչներ մտնում են կառավարու-
թեան կազմի մեջ: Միաժամանակ Լենինը ղեկավար
մասնակցութիւն և ունենում մի շարք ղեկորտների
հրատարակութեան մեջ, վորոնք վերաբերում էին նոր

խորհրդային կարգի զանազան կողմերին (դասերի
վերացում, բանկերի ազգայնացման ղեկընտը, արտա-
դրութեան վրա բանվորական հսկողութիւն սահմա-
նելու ղեկընտը, վորպէս դործարանները խորհրդային
պետութեան սեփականութիւն դարձնելու առաջին
քայլ, Ֆինլանդիայի, Ուկրաինայի ինքնորոշման վե-
րաբերյալ ղեկընտ և այլն):

ՊԱՅԳԱՐ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՅԵՎ «ԴԱԴԱՐ»

1918 թ. հունվարի սկզբին բացվեց Սահմանադիր
Ժողովը, վոր հրավիրված ևր դեռ հին ցուցակներով
և տվյալ մոմէնտին արդեն մասսաների արամադրու-
թիւնը չէր արտահայտում: Հենց վոր պարզվեց,
վոր իր մեծամասնութեամբ եսերներից ու մենչեվիկ-
ներից կազմված Սահմանադիր Ժողովը հրաժարվում և
Սորհրդային իշխանութիւնը ճանաչել և իրեն հա-
կադրում և սրբոլետարիատի ղեկատարութեան, Լենինի
Նախաձեռնութեամբ 1918 թ. հունվարի 19-ի (6-ի)
ղեկընտով ժողովը ցրվում և, ընդամենը միայն մեկ
որ դոյութիւն ունենալով: Դրանից քիչ առաջ,
հունվարի 14-ին (1-ին) կատարվում և առաջին մահա-
վորձը Լենինի ղեմ. տերբորիստները զնդակոծում են
Լենինի ավտոմոբիլը, սակայն Վլադիմիր Իլյիչն ան-
վնաս և մնում:

1918 թ. առաջին ամիսներում Լենինի ուղադրու-
թիւնը կենտրոնացած ևր գերմանական իմպերալիզմի
հետ հաշտութիւն կնքելու հարցի վրա: Յերբ գերմա-
նացիների հետ վարած բանակցութիւններն ապար-
դիւն անցան, և կուսակցութիւնն ու խորհրդային
իշխանութիւնը կանգնած էին հորցն այս կամ այն

ուղղութիւնով չմտնելու անհրաժեշտութիւնն առաջ,
 Լենինը, վոր ուշադրութեամբ հետեւում էր մեր բա-
 նակի տրամադրութիւններին և համոզվել էր, վոր
 նա պրոքեն մարտունակ չէ, կատեգորիկ կերպով առա-
 ջարկում է անհապաղ ստորագրել ծանր անեկսիտիս-
 տական հաշտութիւնը «հանուն դադարի», վորն ան-
 հրաժեշտ էր «չունչ քաշելու», ուժերը հալաքելու և
 պաշտպանութիւն կադմակերպելու, բուրժուազիայի
 դիմադրութիւնը վերջնականապէս յերկրի ներքում
 լուծարքելու համար՝ քաղաքի և մանր գյուղացիու-
 թյան գյուղական սպառողական ընկերութիւններ
 միջև բնական միջերախոխականութիւն սահմանելով :
 «Այդ վերակառուցումը, — դրում էր Լենինը, — սո-
 ցիալիզմն անհաղթելի կդարձնի Ռուսաստանում ու
 ամբողջ աշխարհում, միաժամանակ սոսուր տնտեսական
 հիմք ստեղծելով հզոր բանվոր-գյուղացիական
 կարմիր բանակի համար» : Լենինի բռնած դիրքը, վորը
 պաշտպանում էին Սաալինը, Զինովյեւը և ուրիշ-
 ները, սկզբում ուժեղ դիմադրութեան հանդիպեց կի
 մեծամասնութեան կողմից, Տրոցկու և Բուխարինի
 դիւսալորութեամբ, վորոնք գտնում էին, վոր դեր-
 մանացիները չեն կարող հարձակվել, և պաշտպանում
 էին «պատերազմ չենք մղում, հաշտութիւն չենք
 կնքում» լողունը : Կի մեծամասնութիւնը ևս դեմ էր
 Լենինի տեսակետին : Հաշտութիւնն ստորագրելուց
 հրաժարվելու և Բրեստ-Լիտովսկում բանակցութիւն-
 ները խզելու հետեւանքով գերմանացիներն սկսեցին
 իրենց հարձակումը և ռուսական բանակը խուճապա-
 յին փախուստի դիմեց ամբողջ ճակատով : Խորհրդային
 հանրապետութեան դրութիւնն անմիջապէս վատթա-

րացաւ, նա կանգնած էր անդունդի ծայրին : Միայն
 դրանից հետո Լենինին հաջողվում է, Կի և Ժողկոմխոր-
 հի կազմից դուրս գալու սպանալիքով, Կի-ում
 անցկացնել հաշտութիւնն ստորագրելու վորոշումը,
 վորը հետո հաստատվեց կուսակցութեան VІІ համա-
 դումարում (1918 թ. մարտին) : այստեղ Լենինը
 դեկուցեց պատերազմի և հաշտութեան հարցի մասին :
 Հաշտութիւն կնքելու հետեւանքով ուղարկւած «դա-
 դարը» փրկեց խորհրդային հանրապետութիւնն ան-
 խուսափելի կործանումից հեղափոխական պատերազմի
 դեպքում :

Հաշտութիւնն ստորագրելու առթիւ ձախ կոմու-
 նիստները Բուխարինի դիւսալորութեամբ պայքար
 սկսեցին Լենինի քաղաքականութեան դեմ, ծանր ճիւղ-
 նաժամ ստեղծելով կուսակցութեան շարքերում : Կու-
 սակցական կադմակերպութիւնները և բանվոր դասա-
 կարգը՝ ընդհանուր առմամբ չուսում սթապիւլեցին հե-
 դափոխական Փրոպի արեւցուցիչ ներգործութիւնից
 և ընդունեցին Լենինյան քաղաքականութեան հաշտու-
 թիւնը : Հաշտութեան ստորագրման առթիւ սկսված
 առանձնապէս սուր պայքարի չըջանին են վերաբերում
 (1918 թ. հունվար-մարտ) Լենինի մի շարք նշանավոր
 ճառերն ու հոդվածները, վորոնցով նա հիմնավորում
 էր հաշտութեան անհրաժեշտութիւնը և մերկացնում
 հեղափոխական պատերազմի կողմնակիցների տեսա-
 կետի կործանարար ու մանր բուրժուական բնույթը
 («Թեղիտներ անհապաղ անձատ և անեկսիտիստական
 հաշտութիւն կնքելու հարցի առթիւ», «Հեղափոխու-
 կան Փրոպի մասին», «Զաման մասին», «Հաշտու-
 թիւն թե պատերազմ», «Ռեբախտ հաշտութիւն»,

«Ծանր, բայց անհրաժեշտ դատ», «Տարորդինակն ու հրե-
շափորը», նաև ԿԿ նիստերում, Կուսակցության
VII-րդ համագումարում և խորհուրդները ՎՍ, արտա-
կարգ համագումարներում արտասահմա՝ ճառերը) :

Հանրապետության արտաքին-քաղաքականության
լարվածությունը 1918 թ. առաջին ամիսներում թույլ
էր տալիս մասամբ միայն զբաղվել տնտեսական շինա-
բարություն հարցերի մշակմամբ: Յերկրի ստացած
դադարը Լենինին հնարավորություն տվեց իր ուշա-
գրությունը կենտրոնացնել յերկրի սոցիալիստական
վերակառուցման խնդիրներին վրա: Այդպիսին Լենինը
գրում է մի մեծ բրոշյուր—«Խորհրդային իշխանու-
թյան հերթական խնդիրները» և այդ թեմայի չուրջն
էլ ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս Համա-
սուս Կենտգործկոմի նիստում: Այդ հոգվածում և ճառի
մեջ Լենինը տվեց սոցիալիզմի տնտեսական շինարա-
րության մի ամբողջ պլան. «կադրակերպել արտա-
գրության ու բաշխման վերահսկողություն, ոգտա-
դործել բուրժուական մասնագետներին, բարձրացնել
աշխատանքային կարգապահությունը և աշխատանքի
արտադրողականությունը, կադրակերպել սոցմրցակ-
ցություն, մտցնել գործավարձի սխտեմ, միանձնյու
զեկավարություն և այլն: Հատկապես մեծ ուշա-
գրություն է նվիրում Լենինը «սկստական կապիտալիզմի»
գաղափարին, վրո՞վ յենթադրվում էր վրո՞ղ պայ-
մաններով և խորհրդային իշխանության հսկողու-
թյամբ կապիտալիստներին մասնակից դարձնել խոչոր
և խոչորագույն արտադրություն կադրակերպելու
դործին, վրո՞ր «մի քայլ առաջ կտանի մեզ մեր հանրա-
պետության մեջ ստեղծված գրության համեմատու-

թյամբ», նպատակով սոցիալիզմի կառուցման համար
անհրաժեշտ նյութական-արտադրական բաղալի ընդ-
լայնմանն ու ամրացմանը: Զուգընթացաբար Լենինը մեր
կացնում էր «ձախ-կոմունիստական» ոպղիցիայի
մանր բուրժուական բնույթը, վրո՞րն նա հետո, մայի-
սին, վերջնական հարված է հասցնում «Ձախ յերկիս-
յություն և մանր բուրժուականության մասին» բրո-
շյուրով:

Լենինի ձեռքով դեռ ապրիլ-մայիս ամիսներում
մշակված և քաղաքացիական պատերազմի պատճառով
հետաձգված ձեռնարկումների պլանը վրո՞ղ չափով
սկիզբն էր հանդիսանում այն քաղաքականության,
վրո՞ն ավելի ուշ, 1921-1922 թ. թ. կերպովեց Նոր տըն-
տեսական քաղաքականության անվան տակ և վրո՞ր վո-
րո՞ղ սահմաններում վերականգնում էր Լենինի 1918 թ.
առաջին կիսի գաղափարները:

ԲԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ «ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄ»:

1918 թ. սկիզբում և «գաղափար» շրջանում Լենինն
ստաջադրում է կարմիր բանակի ստեղծելու իդեան և
չատ ու համառ աշխատանք է կատարում այդ ուղղու-
թյամբ: Դադարին հաջորդեց մի քանի տարի տեղ
(1918-1920 թ. թ.) քաղաքացիական պատերազմի յեր-
կար շրջանը, հանրապետության գրությունը մի քանի
անգամ ոպառնալից դարձավ, նրա կործանումն ան-
խուսափելի յեր թվում: Ամբողջ քաղաքացիական պա-
տերազմի ընթացքում Լենինը զեկավարում է հանրա-
պետության պաշտպանության գործը, վճռական մաս-
նակցություն ունենալով վո՞ղ միայն ոպառ-քաղաքա-

կան, այլ և զուտ դործառնական զերեկոյնների մշակման մեջ, շարունակ սեղեկություններ ու նյութեր պահանջելով բանակի կացութեան մասին, որը-որին հետեւելով ճակատների դրութեանը, զինվորական իշխանութեան ուշադրութեանը դարձնելով առաջիկ վրտանդավոր ճակատամասերի ու կետերի վրա, միջոցներ ձեռք առնելով զանազան ճակատամասերի դրութեանը շտկելու, վերականգնելու համար: Պահպանվել և քաղաքացիական պատերազմի շրջանին վերաբերվող կենդանի ընդարձակ ռազմական գրադրութեանը, վոր ցույց և տալիս նրա բացատրիկ դերը խորհրդային հանրապետութեան պաշտպանութեանը կազմակերպելու գործում: Քաղաքացիական պատերազմի ամբողջ շրջանում և ընդհանրապես խորհրդային իշխանութեան գոյութեան ամբողջ ժամանակամիջոցում կենդանի շարունակ հակադասական ուշադրութեան եր դարձնում միջադատային դրութեան վերլուծութեան, համաշխարհային ուժերի և նրանց հարաբերութեան փոփոխութեանների հաշվառման վրա, մանրամասնորեն ուսումնասիրելով և հետեւելով միջադատային հեղափոխութեան գարդացմանն ու հասունացմանը և շատ մեծ նշանակութեան տալով պոլիտաբիտի կողմից այն հակասութեաններն ոգտադործելու, վորոնք կային կապիտալիստների բանակում: Բրեստ-Լիտվսկի հաշտութեանն ստորագրելուց հետո, չնայելով նրա ամբողջ անկայունութեանը, կենդանի խորհրդային հանրապետութեան կարեւորագույն խնդիրն եր համարում կիրառել հանդամանքների համապատասխան գործելակերպ, «գաղտնի» պահպանելու և յերկարացնելու գործելակերպ՝ ուժեր հավաքելու և կոտակելու համար: Քաղաքացիական պատե-

րազմի շրջանում, յերբ գնալով ծավալվում էին ինտերվենցիան, հակահեղափոխական ապստամբութեանները և խռովութեանները հակահեղափոխական հեղաշրջում Ուկրաինայում, չեխոսլովակների ապստամբութեանը, հյուսիսի գրավումը անգլիացիների ու Ֆրանսիացիների կողմից, մի շարք քաղաքներում ծագած սպիտակ գաղաղիական ապստամբութեանները, Կովկասի խոշոր կենտրոնների գրավումը դաշակիցների կողմից, դաշակիցների գործերի ախ հանումը Ռուսաստանի հարավում և այլն), արտաքին ու ներքին պարագանները փոխվում էին չափազանց արագութեամբ, պահանջելով կուսակցութեանից անհապաղ հաշվի առնել ստեղծված դրութեանը և լավ իրազեկ լինել անցքերին: «Ընթացիկ մոմենտ» իր գնահատականը կենդանի սովորաբար տալիս, պարզում եր խորհուրդների համագումարներում, Համ. Կենտգործկոմի նիստերում, Մոսկվայի խորհրդի պլենումներում, արհեստակցական միութեանների ու գործարկումների և այլ համապատասխան կազմակերպութեանների համագումարներում ու կոնֆերենցիաներում և ուրիշ պտտասխանատու ժողովներում արտառանձ ճառերում, —ավելի սակավ հոգվածներում:

1918 թ. ամառը կենդանի բանվոր դատակարգի ուշադրութեան կենտրոնն և դարձնում կազմակերպված պայքարը տովի դեմ, կոչ անելով բանվորներին մատույն պայքարը գյուղերն անցնել հաց բերելու համար, պահանջելով պարենավորման կոմիտեներ ստեղծել, չբավական կոմիտեներ կազմակերպել և անխնա պատերազմ հայտարարելով գյուղատնտեսական բուրժուազիայի, կուլակների, հացի սպիկուլյացիայով գրադվող, հացի մեռաչնորհր վիժեցնող կուլակների դեմ, վորոնք բան-

վոր դատարարներին սովի յեն մատնում : «Պետք է կազմակերպել,—գրում է Լենինը,—մեծ «խաչակիր արշավանք» հացի սպեկուլյանտներին, այդ ցեղերի, կազմալուծիչների, կաշառակերների դեմ, մեծ «խաչակիր արշավանք» նրանց դեմ, ովքեր խախտում են պետական խառազույն կարգը հաց հավաքելու, փոխադրելու և բաշխելու գործում» : Լենինի ղեկավարութեամբ մտցվում է ամենախիստ պարենային գիկտատուրա : Այդ չրջանին են վերաբերվում Լենինի մի շարք կարևոր ճառերը սովի դեմ պայքարելու հարցի վերաբերմամբ, (հուլիսի 4-ին, 27-ին) և նրա «Նամակը Պիտերի բանվորներին» սովի մասին : Դրանից էլ առաջ, հունիսի 28-ին Լենինն անց է կացնում խոշոր արդյունաբերութեան ազգայնացման վերաբերյալ դեկրետը : «Ամենասերմիտութուն և լիակատար միաձուլում գյուղական չքավորութեան հետ, անխնա ճնշել կուլակներին, այդ արյունարբու վանդիրներին, ժողովրդի կողոպտիչներին, այդ սպեկուլյանտներին ու սովի ջորհիվ հարստութուն դիզողներին»—այսպես է ձևակերպում Լենինը բանվոր դասակարգի խնդիրները : Ամբողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում հանրապետութեան պարենային դրությունը չափազանց ծանր էր ու լարված, և սմեն անդամ, յերբ հացի հարցը սուր բնույթ էր ընդունում, Լենինն անպայման ղեկում էր բանվորական մասսաներին, նրանց նախաձեռնութեանը, տոկունութեանը, խանդավառութեանը, կազմակերպվածութեանը : Հուլիսի 4-10 Լենինը ղեկավարում է խորհուրդների V համագումարի աշխատանքները (745 բայլեպիլե, 352 ձախ եսեռ), վորի ժամանակ տեղի յե ունենում խզում բայլեպիլեների ու ձախ եսեռների միջև,

վորոնք բողոքում էին պարենային ջոկատների և չքավորական կոմիտեների ստեղծելու դեմ : Հուլիսի 5-ին Լենինը համագումարում զեկուցում է ժողովրդի պարծունեյութեան մասին : Հուլիսի 6-ին Մոսկվայում տեղի յե ունենում ձախ եսեռների խռովությունը, վորոնք սպանում են գերմանական ղեկավար Միրբախին՝ Գերմանիայի հետ պատերազմ առաջ բերելու նպատակով և ապստամբությունն են բարձրացնում խորհուրդային իշխանութեան դեմ : Հաջորդ օրերը Լենինը չափազանց մեծ ջանքեր է թափում գերմանական կառավարութեան հետ հաշտությունը պահպանելու համար և միաժամանակ (հուլիսի 15-ին) վճռականորեն մերժում է գերմանական կառավարութեան առաջարկը՝ գերմանութեան պաշտպանութեան համար մի զուգարտակցորք Մոսկվա մտցնելու մասին :

1918 թ. հուլիս, ոգոստոս ամիսներին, յերբ սաստկացավ սովը, և չեխոսլովակների ապստամբությունն ու մի շարք այլ հակահեղափոխական խռովություններ ծագեցին, խորհրդային հանրապետութեան դրությունը չափազանց վտանգավոր դարձավ : Լենինն այդ ժամանակ տենդորեն աշխատում է խորհրդային հանրապետությունը պաշտպանելու և Կարմիր ստեղծելու համար, միաժամանակ մեծ ուշադրություն նվիրելով սովի դեմ մղվող պայքարին : Նա այդ չրջանում հաճախ հանդես է գալիս բանվորական ժողովներում ու միտինդներում (յերբեմն՝ օրական 4 անգամ), խրախուսելով բանվորներին և կոչ անելով կովելու հակահեղափոխութեան դեմ : Հակառակ ընկերների խընդիրքին ու սնդումներին, Լենինը բոլորովին անսարքեր, անուշադիր է վերաբերվում դեպի իր անձնական

անվտանգութիւնը: Մինչդեռ եսեռական տեղորոշումները նրան հետևում ելին քայլ առ քայլ. 1918 թ. ոգոստոսի 30-ին նախկ. Միխեյսոնի գործարանից դուրս գալիս, վորտեղ Լենինը յերևելի եր ունեցել բանվորների ժողովում, նրան ծանր վիրավորում է եսեռուհի Թ. Կստյանը: Նրա կյանքը վտանգի մեջ եր: Լենինի ուժեղ որդանիղմը հաղթահարեց սակայն, այդ հիվանդութիւնը, և արդեն սեպտեմբերի 17-ին վաղըլմիր Լէյքը նախադահում եր ժողկոմխորհի նիստին: Կապլանի զնդակին և բանվորական այլ առաջնորդների սպանութիւնը պրոլետարիատը պատասխանեց մասսայական կարմիր տերրորով:

1918 թ. աշնանը Լենինը ամենամեծ ուշադրութեամբ հետևում է քաղաքական ճգնաժամի զարգացմանը Գերմանիայում և աշխտեղ աճող հեղափոխութիւնը: Հոկտեմբերի 3-ին նա համ. Կիկ և ուրիշ մասսայական բանվորական կադրակերպութիւններին առաջ հարց ե դնում այն մասին, թե պետք է «լարել բոլոր ուժերը գերմանական բանվորներին ոգնելու համար» (հացի պաշարներ ստեղծել, կարմիր բանակի թիվը հասցնել մինչև 3 միլիոնի): «Սկսենք, ուրեմն, պատրաստվել,—գրում է Լենինը.—ապացուցենք, վոր ողջ բանվորը կարող ե ամբի անձնագոհ կերպով կրօվել ու մեռնել, յերբ հարցը վերաբերում է վո՞ւ միայն ողջսական, այլև միջազգային բանվորական հեղափոխութիւնը»: Արձանագրելով, վոր մոտ ե գերմանական հեղափոխութիւնը, Լենինը միաժամանակ ընդդժում է, վոր ավելանում, աճում ե վտանգը խորհրդային հանրապետութեան համար, քանի վոր անդլո-Ֆրանսիական իմպերիալիզմի հաղթանակը Գերմանիայի դեմ արձա-

կում է նրա, այդ իմպերիալիզմի ձեռքերը և հնարավորութիւն կտա նրան ուժեղացնելու իր հարձակումը խորհրդային հանրապետութեան դեմ՝ պրոլետարական զիկտատուրան տապալելու համար: Նոյեմբերի 6-ին և 8-ին Լենինը ղեկուցումով հանդես ե գալիս խորհուրդների ՄԻ համապումարում, մանրամասնորեն մատնանշելով այն փոփոխութիւնները, վորոնք կատարվել են համաշխարհային կացութեան մեջ անդլո-Ֆրանսիական իմպերիալիզմի հաղթութեան և Գերմանիայում ծագած հեղափոխութեան հետևանքով:

1918 թ. հոկտեմբերին և նոյեմբերին Լենինը գրում է իր մի մեծ աշխատութիւնը—«Պրոլետարական զիկտատուրան և ռենեզատ Կաուցկին», վորի մեջ խարազանող քննադատութեան ե յենթարկում բուրժուական դեմոկրատիայի պաշտպանութիւնը մենչեւիզմի միջազգային առաջալի (նաև վանդերվելդիի) կողմից ընդդեմ պրոլետարական զիկտատուրայի և մերկացնում է հեղափոխական մարքսիզմի բոլոր խեղաթյուրումներն ու աղճատումները նրա կողմից՝ զիկտատուրայի ու դեմոկրատիայի հարարերութեան հարցում, միջազգային պրոլետարական հեղափոխութեան այլ մարտական հարցերում: Ամերիկայի և յեվրոպական բանվորներին ուղղած նամակներում Լենինը լուսարանում ե նրանց առաջ բալչելիկների քաղաքականութիւնը, միաժամանակ պալքարելով միջազգային ուղորտունիղմի դեմ և իր անխախտ, անհողողող հալատն արտահայտելով միջազգային պրոլետարական հեղափոխութեան հաղթանակի նկատմամբ:

Լենինի նախաձեռնութեամբ 1918 թ. ստեղծվում են

բայլը և ինքներին համակրողների կազմակերպութիւններ : Այդ նույն տարում և հաջորդ տարւի սկզբում **Լենինը** կուսակցութեան ուղադրութիւնը հրապարակեց և այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է ոգտադրծել : Բուրժուազիայից մնացած կուսակերպութիւնը, անհրաժեշտ է պայքարել բուրժուազիայի դեմ և բարեւթալել արհեստակցական միութիւնների մասնակցութիւնը սոցիալիզմի գործնական կառուցման և արտագրութեան կազմակերպման գործում (արհմիութիւններին II համագումարում 1918 թ. հունվարի 28-ին արտասանած ճառը) : Սկսած 1918 թ. յերկրորդ կիսից Լենինն ուժեղ կերպով մշակում է կուսակցութեան կողմից միջակ գյուղացիութեանը վերաբերվելու հարցը («Պիտիբիւր Սարոկինի արժեքավոր խոստովանութիւնները», նոյ. 27-ի գեկուցումը մանր բուրժուական կուսակցութիւնների մասին, գեկանմբերի 11-ի ճառը հողային բաժիններ, չքավարական կոմիտեների և կոմունիստների համագումարում, «Պատասխան մի գյուղացու հարցումին»), նորից խորանալով Մարքսի և Ենգելսի հայացքների մեջ այդ հարցում : «Կարողանալ համաձայնութեան գալ միջակ գյուղացիութեան հետ, վոչ մի բովե չհրաժարվելով կուսակի դեմ պայքարելուց և ամուր հենվելով միայն չքավորութեան վրա», — ապալես և ձեակերպում կուսակցութեան ինդիւիդուալ այդ առարկիցում Լենինը : կուսակցութեան քաղաքականութիւնը միջակ գյուղացիութեան հանդեպ հստատապէց կուսակցութեան VII համագումարում (1919 թ. մարտին) :

1919 թ. սկզբին Լենինին մի դեպք պատահեց, վորը կարող էր չափազանց խիստ հետեանքներ բանեալ,

և վորը պետք է հիշատակել. հունվարի 19-ին յերեկոյան ավտոմոբիլով Մոսկվայի ծայրամասում Մարիյնիկի տանող ճանապարհով անցնելիս նա յենթարկվեց մի խումբ ղինված բանդիտների հարձակման. բարեբախտաբար, բանդիտները՝ ատրճանակով Լենինին սպառնալով, կրակ բաց չեն անում և սահմանափակվում են միայն ավտոմոբիլը խլելով : Հետագայում ամբողջ ավազակախումբը բռնվեց և զնդակահարվեց :

Լենինի յերկար պայքարը ոպորտունիստների, չովինիստների և ցենտրիստների դեմ միջադգային բանվորական շարժման ասպարիզում, դանազան յերկրների բանվոր դասակարգի իսկապես հեղափոխական տարրերին համախմբելու և կազմակերպելու նրա ջանքերը պատկիւնցին կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրութեամբ 1919 թ. մարտի 2-ին, վորի I կոնգրեսը տեղի ունեցավ Լենինի նախագահութեամբ Մոսկվայում մարտի 2-7 : I կոնգրեսի կարեւորագույն փաստաթղթերն են Լենինի թեզիսները բուրժուական դեմոկրատիայի և սրբոքեւորիստի դեկատուրայի մասին և նրա գեկուցումը նույն այդ թեմայի շուրջը : Հետագայում Լենինը մոտիկ մասնակցութիւն ունեցավ կոմիտեների աշխատանքներում, վորի գործունեյութիւնն ընթանում էր Վլադիմիր Իլյիչի անմիջական ղեկավարութեան տակ : Արեւմտայեւրոպական կոմունիստների և բանվորների համար գրված մի շարք հոդվածներում («Յերրորդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմութեան մեջ», «Վոլջույն հունգարական բանվորներին», «Բեռնի ինտերնացիոնալի Հերոսները», «III Ինտերնացիոնալի ինդիւիդուալի մասին», Վոլջույն խաղական, Փրանսիական և գերմանական կոմունիստներին», «Ինչպես է

բուրժուական ոգտագործում՝ ունեւդատներին»—1919 թ., «Հրապարակախոսի ղեկավարութիւններ»—1920 թ.) և քաղաքական նամակներում՝ ու հրահանգներում՝ Լենինին արձագանգում և Արեւմուտքի հեղափոխական շարժման առաջ ծառայած բոլոր կարեւորագույն հարցերին, վճռական պայքար մղելով սպորտուսուխոսների և ուժիւրմիտների դեմ, պահանջելով, Վոր հեղափոխական կուսակցութիւնները խզեն իրենց բոլոր կապերը նրանց հետ, պահանջելով գիկատուտւան ընդունել վոչ միայն խոսքով, այլև նրա համար իրական պայքար մղելով, քարոզելով ու պարզաբանելով խորհուրդների իդեան, սզնելով իր ցուցումներով հունդարական ու բաւարական հանրապետութիւնների կոմունիստներին, նշելով Արեւմուտքում ծնունդ առնող յերիտասարդ կոմունիստական կուսակցութիւնների կատարած սրխաւները, աշխատելով ստեղծել արեւմտյան յերկրներում իսկապես կոմունիստական, իսկապես հեղափոխական կուսակցութիւններ:

Կոմիւնտերնի I կոնգրեսը վերջանալուց հետո Լենինը մի քանի որով դնաց Պետրոգրադ: Այնտեղ արտասանած նրա ճառերից ամենից աւելի մեծ նշանակութիւն ունի «Խորհրդային իշխանութիւն հաջողութիւններն ու դժվարութիւնները» մեծ ճառը: Մարտի 18-23 Մոսկուայում Լենինի ղեկավարութիւնը տեղի ունեւ կուսակցութիւն VIII համագումարը—ճիշտ աշխտամանակ յերբ մենք ուղմական ծանր անհաջողութիւններ ունեւինք արեւելքում (Կուչակի հարձակումը): Համագումարում Լենինը հանդես յեկաւ իկ դործունեյութիւն հաշիւաւութիւնը, ղեկի միջակ գլուղացիութիւնը ցույց արվելիք վերարեւմուտքի մասին

ղեկուցումով և կուսակցական ծրագրի ու Կարմիր բանակի ղրութիւն վերաբերյալ ղեկուցումով: Համագումարն ընդունեց Լենինի առաջարկած բանաձեւը ղեկի միջակ գլուղացիութիւնը ցույց արվելիք վերաբերմունքի մասին, Վորը կուսակցութիւն կարեւորագույն վաստաւիդիներից մեկն և աշղ սապարիւրում: Կուսակցութիւնը համագումարի կողմից հաստատւած ծրագրերը ևս հիմնականում Լենինի գրածն և: Համագումարում խոշոր տարաձայնութիւններ ծագելին Կարմիր բանակի վերակառուցման հարցի, սաւանձնապես, մանաւղաներին նրա շարքերում ոգտագործելու հարցի շուրջը: Պայքարը չափաւանց սուր բնույթ կրում: յերկար վիճարանութիւններից հետո Լենինին հաջողվեց համագումարում միաձայն անցկացնել հանձնաւորովի մշակած բանաձեւի նախադիւր:

1919 թ. բնթացքում Լենինը ղեկավարում և իջորհրդային հանրապետութիւն լարված կովիւր Կուչակի, Յուդենիչի և Դենիկինի դեմ, Վորը վերջանում և հակահեղափոխական բանակների լիակատար պարտութիւնը և նրանց գրաված մարզերի աղատամբը: Բացի հանրապետութիւն ուղմական պաշտպանութիւն, Կարմիր բանակի մատակարարման ու սպասաղինման նաեւ միջազգային հարցերից (հանրապետութիւն միջազգային դրութիւն վերաբերյալ Լենինի ճառերից հասկապես պետք և նշել աղրիլի 4-ի, հուլիսի 4-ի, նոյեմբերի 8-ի ճառերը), Լենինը աւանաւորը ուղադրութիւնը և վերաբերվում պարենային, վառելիքի դժվարութիւններ և համաճարակների (քձավոր տիֆ) դեմ պայքարելու հարցերին, Վորոնց լուծման վրա յե կենտրոնանում դրլխաւորապես նրա դործնական աշխատանքը: Բացի դը-

րանից, նա շատ և զբաղվում զյուզացիութան փերս-
բերմամբ վարած մեր քաղաքականութան պարզարան-
մամբ և զյուզում կատարելիք աշխատանքի ասպարի-
դում կուսակցութան առաջ ծառայած խնդիրների լու-
սաբանությամբ, մեծ ուշադրություն և նվիրում մաս-
նազետների փերսբերյալ հարցին, ադդալին հարցին
(Ուկրաինայում և Թուրքեստանում), կուլտուրայի, լու-
սավորության հարցերին և այլն: Այդ շրջանում Լենինի
քաղաքական ու տեսական առանձին կարևոր նշանա-
կություն ունեցող աշխատություններից պետք է նշել
հետևյալները. — «Մեծ նախաձեռնություն» (կոմու-
նիստական շարափորյակներին մասին), «Նկատմե՞րկան և
քաղաքականությունը պրոլետարիատի դիկտատուրայի
շրջանում», «Սահմանադիր Ժողովի ընտրությունները
և պրոլետարիատի դիկտատուրան» (բուլժուական
պարլամենտարիզմի և պրոլետարական հեղափոխու-
թյան հաղթանակի պայմանների մասին), «Վարտու-
թյան և հավասարության լուզունդներով ժողովրդին
խարելու մասին» (ճառ): 1919 թ. դեկտեմբերի (6-
7) տեղի ունեցող խորհուրդների VII համագումարը, փոր-
տեղ Լենինը զեկուցեց Ժողկոմխորհի կողմից և գործոն-
մասնակցություն ունեցող համագումարի կազմակերպ-
չական սեկցիայի աշխատանքներում, արտոնհայտելով
այն կարծիքը, վոր պետք է ոգտադրուծել հին մատնա-
դետներին և միաժամանակ ստեղծել նոր կազրեր—
տանվորներից և դյուզացիներից:

Կարմիր բանակի հաղթանակը բոլոր ճակատներում,
կուլչակի, Դենիկինի և Յուզենիչի լիկվիդացիան և բու-
կադայի վերացումը խորհրդային հանրապետության
առաջ բաց արին խաղաղ շինարարության անցնելու հե-

տանկար: 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբին Լենինն
իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում և ար-
դյունաբերության, տրանսպորտի և հողագործության
փերականգնման հարցերի վրա: «Պարենի պետական մեծ
պաշար հավաքել ու տեղափոխել, վերականգնել քայ-
քայլած տրանսպորտը, այդ բոլորը կատարել ռազմա-
կան արագությամբ, ռազմական յետանդով, ռազմական
կարգապահությամբ. դրա հետ միասին և դրա անմի-
ջական կապակցությամբ բանվորականայնել խորհրդ-
ային իշխանության ապարատը, վոնդել աշխտեղի
տարտաման ու բյուրոկրատիզմը, ստեղծել աշխատանքի
առավելադույն արատըրողականություն, լարել յերկրի
բոլոր ուժերը ամենամեծ հափերով՝ նրա անտեսությու-
նը վերականգնելու համար, — այսպես և բոլորում Լե-
նինը կուսակցության և բանվոր դասակարգի խնդիրնե-
րը 1920 թ. փետրվարին:

Տնտեսական խնդիրների լուծմանն անցնելուց հե-
տո կուսակցության ներսը պաշար սկսվեց արդյունա-
բերության կանոնավորման մեթոդների փերսբերյալ
հարցի առթիվ: Լենինը վճռականորեն պնդում է միան-
ձրնյա դեկավարության անհրաժեշտությունը և յետան-
դուն պաշար և մղում կոնքրետ դեկավարության սկզբ-
րունքի կողմնակիցների վրձ (Ռիկով, Տոմսկի, Սապ-
րոնով և ուրիշները): Նա շատ անգամ ու հաճախ և
հանդես գալիս այդ հարցի առթիվ, և մի շարք դեպե-
րում ողպողիցիան աշխատեալ տեղ և լինում, վոր Լենինը
տեսակետը մեծամասնության կողմից պաշտպանու-
թյուն չի գտնում (որինակ, ԱՄ Զիմ ֆրակցիայում
ժողովրդական անտեսության խորհուրդների համա-
գումարում): Հարցը վերջնականապես լուծվում է կու-

տեղյության IX համագումարում, վոր տեղի ունեցավ 1920 թ. մարտի 28-— ապրիլի 5-ը: Լենինը համագումարում հանդես է դալիս ԿԿ հաշվետվությամբ և ճառեր և արտասանում տնտեսական շինարարության ու կոոպերացիայի մասին (Լենինն առարկում էր կոոպերացիայի սկեսայինացման դեմ): Սոյուզիցիան, վոր մասամբ պաշտպանում էր կոլեկտիվ սկզբունքը, մասամբ հարձակվում էր ԿԿ ընդհանուր քաղաքականության վրա, — բոլորովին ջախջախվեց:

Սորհրդային իշխանությունը չկարողացավ իրագործել քաղաքացիական պատերազմից խաղաղ շինարարության անցնելու իր ձգտումը, վերոհետև ապրիլի վերջին Լեհաստանը, հակառակ Սորհրդային իշխանության մի շարք խաղաղ առաջարկություններին, պատերազմ սկսեց Սորհրդային Ռուսաստանի դեմ, իսկ չուտով մեծացավ վտանգը նաև Վրանդելի կողմից: Այդ պատճառով ել մինչև լեհական պատերազմը վերջանալը և մինչև Վրանդելի լիկվիդացիան պաշտպանության հարցերը կրկին ամենալուրջ կերպով դրադեցնում են Լենինին և նրա լարված, կարեվոր հոգսերի առարկան են կազմում:

1920 թ. ապրիլ-մայիսին, Կոմունիստական խոտերնացիոնալի II կոնգրեսի նախապատրաստության չրջանում, վոր բացվեց Արևմուտքի հեղափոխական շարժման ամենամեծ վերելքի մոմենտին, Կոմինտերնի ամենամեծ աղղեցության և Կարմիր բանակի ամենամեծ հաջողությունների մոմենտին լեհական ճակատում, — Լենինը գրում է իր նշանավոր աշխատությունը — «Զախողության» մանկական հիվանդությունը կոմունիստի մեջ: Այդ գրքում, վեր մարքսիստական սպիտակա-

թյան և ապոստոլայի հիմքերի փայլուն շարադրանքն է, Լենինը տալիս է «ձախ» արևմտայեվրոպական կոմունիստների սխալների սարսիչ քննադատությունը, վորոնք ժխտում էին բուրժուական պարլամենտներում մասնակցելու, լեհակցիոնարիզմի թյուններում մասնակցելու անհրաժեշտությունը, վորոնք չէին հասկանում պաշարի լեզալ և անլեզալ մեթոդները գուգակցելու անհրաժեշտությունը, մի շարք խոշոր սխալներ կատարելով կոստակցության և դատակարգի փոխհարաբերության հարցում և այլն: Զարգացման տվյալ չրջանում «ձախ» թեքումն ամենամեծ վտանգն էր հեղափոխության դարգացման համար, ուստի Լենինը նրա դեմ դուրս յեկավ ամենավճռական ձևով:

Կոմինտերնի յերկրորդ կոնգրեսը (հուլիսի 19-— օգոստոսի 6) իր նիստերը գումարում էր սկզբում Պետրոգրադում, հետո՝ Մոսկվայում: Այդ կոնգրեսի աշխատանքներում Լենինն առանձնապես գործոն մասնակցություն ուներ: Կոնգրեսի բոլոր կարևորագույն փաստաթղթերը — նրա բանաձևերն ու թեղիսները Լենինի գրչին են պատկանում՝ հոգային հարցի մասին, Կոմունիստական Խոտերնացիոնալ ընդունվելու պայմանները, վորոնք վճռականապես արգելում են այն խոճրակների ու հոսանքների մուտքը նրա շարքերը, վորոնք մրահայանել են իրենց մեջ՝ ուժիորմիցմի և սոպորոտներիցմի տարրերը: աղգային և գաղութային հարցերի մասին: II կոնգրեսի հիմնական խնդիրների վերաբերյալ թեղիսները: Լենինը զեկավար մասնակցություն է ունեցել նաև «Կոմունիստական կոստակցության դերը պրոլետարական հեղափոխության մեջ» բանաձևեր գրելու մեջ: Կոնգրեսում Լենինը զեկուցեց միջաղգային գրու-

թիւնն և սոցալային-դատութիւն. հարցերի մասին և մի քանի ճառ արտասանեց ուրիշ հարցերի առթիւ, պայքարելով կոնգրեսում ներկա յեզու՝ վերամանական «անկախների» ներկայացուցիչներին դեմ և «ձախերի» դեմ: Լենինի դեկլարութեամբ կոնգրեսն ուղղեց «ձախերի» սխալները և ստեղծեց Կոմինտերնի մեջ մտնող կուսակցութեան ներքի դադարաւարական և կազմակերպչական միաձուլութեան: Կոնգրեսից հետո Լենինը վերամանական և Փրանսիակ. լանկաթիւններին ուղղած նամակում և «Կեդ-ճառեր աղատութեան մասին» հոդվածում (1920 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր) պաշտպանում է Կոմինտերնի «21 պայմանը», պահանջելով բոլորովին խզել կապերը ուձորմիտաների և սոցալատականների հետ:

Վրանդելի լիկվիդացիայից և լեհական պատերազմը վերջանալուց հետո, սկսած 1920 թ. վերջից, Լենինի ուշադրութեան կենտրոնն են կազմում տնտեսական շինարարութեան հարցերը: Իր մի շարք ճառերից, վարոնցից հատկապես պետք է նշել կառավարութեան առնունից արած գեկուցումը խորհուրդների VIII համագումարում (1920 թ. դեկտեմբերին), Լենինը դարգացնում է տնտեսական ձեռնարկումների մի ամբողջ սխտեմ յիշորով պետք եր վերականգնել իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմից քայքայված ժողովրդական պետութիւնը: Պլանի հիմքում դրվում է յերկրի երկտրիֆիկացման խնդիրը («Կոմունիզմը—աչ խորհրդային իշխանութիւնն է ոլլուս ամբողջ յերկրի երկտրիֆիկացումը»): Մեծ նշանակութիւն տալով ոտարերկրյա կապիտալը խորհրդային հանրապետութեան տնտեսութեան վերականգնման գործին մասնակից անելուն, Լենինն առաջադրում է կոնցեսիա-

ների հարցը, լուսարանելով կուսակցութեան կոնցեսիոն քաղաքականութիւնը մի շարք մեծ ճառերում: Միաժամանակ Լենինը մեծ ուշադրութիւն է նվիրում ժողովրդական տնտեսութեան ամրացման ու զարգացման ձեռնարկումներին, ինչպես նաեւ գյուղացիութեանը ցույց տրվելիք ողնութեանը, ընդգծում է խորհրդային ապարատի բարելաւման և բյուրոկրատիզմի դեմ պայքարելու անհրաժեշտութիւնը: Բացի դուտ տնտեսական հարցերից, Լենինը Նոր տնտեսական քաղաքականութեան անցնելու ջրջանում մեծ ուշադրութիւն է նվիրում նաեւ ժողովրդական լուսավորութեան գործին:

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԼԵՆԻՆԻ ՄԱՀՆԸ.

Քաղաքացիական պատերազմից խաղաղ շինարարութեան, Ռադական կոմունիզմից Նոր տնտեսական քաղաքականութեան անցնելուն համընթաց ստեղծվեց կուսակցութեան չափազանց ծանր ճգնաժամ (1920 թ.—1921 թ. սկիզբը), վոր կապված եր նրա մեջ առաջացած մի շարք Փրակցիաների ու Փրակցիոնական պայքարի հետ: Սկզբում (1920 թ. աշնանից—ձմեռվա սկիզբը) ներկուսակցական պայքարն ընթանում եր դիտաւորապես դուտ կուսակցական հարցերի շուրջը («Վերինների» և «ստորինների» հակադրումը): Մոսկվայի կազմակերպութեան մեջ, վորտեղ սոցալդիկիան առանձնապէս ուժեղ եր, պայքարն ընդդէմ սոցալդիկիայի ընթանում եր Լենինի անմիջական դեկլարութեամբ: Ավելի ուշ ներկուսակցական պայքարը կատաղի դիսկուսիայի ձև ընդունեց արհեստակցակ. միութիւններին դերի և ինդիւրներին վերաբերյալ հարցի առթիւ: Յերը դիսկուսիան

Կանխելու և դրանով կուսակցութեան ուժերը խնայելու նպատակով Լենինի կատարած փորձերն իրար անցան, և Տրոցկին սկսեց իր Ֆրակցիոն պայքարը, առաջադրելով արհմիությունների պետականացման լուրջագիտական մի մասը Լենինի գլխավորութեամբ (Ձինովյեւ, Ստալին, և այլն) կարողացաւ յերկարատե պայքարից հետո կուսակցութեան մեծամասնութեանը համախմբել այն պատճառով զոր, վորը ճշտորեն հաշվի չէր առնում, վոր անհրաժեշտ է հրաժարվել արհեստակցական միութեանների նկատմամբ ռազմական կոմունիզմի մեթոդները շարունակելուց, և արհեստակցական միութեանների խնդիրները ձեւակերպում էր խաղաղ տնտեսական շինարարութեան պայմանների համեմատ: Չնայած իր հիմնողութեանը, Լենինը դիտկուսիայի ընթացքում անպակաս ցործունեյութեան և ցուցաբերումնա շատ և զրում և հաճախ դուրս է գալիս Տրոցկի-Բուխարինի պատճառով, բանվորական ուղղութեան, դեմոկրատական կենտրոնի դեմ և այլն («Արհեստակցական միութեանների մասին», «Ընթացիկ մոմենտի մասին և ընկ. Տրոցկու սխալների մասին», «Կուսակցութեան ճշմարտութեամբ», «Դարձյալ ընթացիկ մոմենտի, արհմիութեանների և ընկ. Տրոցկու ու Բուխարինի սխալների մասին»): 1921 թ. մարտին, Կրոնշտադի ապստամբութեան շրջանում կուսակցութեանը X համագումարում Լենինի գեկաւարութեամբ և նրա նախաձեռնութեամբ իրադրութեամբ է նոր տնտեսական քաղաքականութեան անցումը: Լենինն այդ քաղաքականութեան վրէժն ու հեղինակն էր, քաղաքականութեան, վորի նպատակն էր պետական իշխանութեանը պահել պրոլետարիատի ձեռքին և վերականգնել խոշոր արդյու-

նարերութեանը, սոցիալիզմի այդ միակ հիմքը, միջին դարձացիւթեան հետ համաձայնութեան կնքելու պարենաւորութեամբ հարկով փոխարինելու և մասնաւորաբար ազդու շրջանաւորութեան ազատութեան տալու միջոցով: Նոր տնտեսական քաղաքականութեան մտցնելու շնորհիվ վերականգնվեց պրոլետարիատի դաշինքը դարձացիւթեան հետ, և պրոլետարիատի դիկտատուրան հաջողութեամբ դուրս յեկաւ այն ամենաժանր ճշմարտութեան, վոր ստեղծվել էր Խորհրդային իշխանութեան համար Հոկտեմբերից սկսած: Լենինը համագումարում հանդես յեկաւ ԿԿ հաշվեալութեամբ, բնահարկի, կուսակցութեան միասնականութեան և նարխիստական-սինդիկալիստական թեքման վերաբերյալ ճառերով և արհմիութեանների վերաբերյալ ճառերով: Լենինի առաջադրութեամբ համագումարը ընդունեց մի բանաձեւ, վորով կուսակցութեան պատկանելիք անհամատեղելի չէր համարվում անարխիստական-սինդիկալիստական հայացքների պրոպագանդայի հետ, և պահանջվում էր անհապաղ ցրել բոլոր Ֆրակցիաները՝ հակառակ դեպքում կուսակցութեանից փտալու սպառնալիքով: Շնորհիվ Լենինի հաստատականութեան ու անհողողող վերաբերմունքին՝ կուսակցութեան միասնականութեանը վոր լուրջ կերպով վտանգվել էր Ֆրակցիոնական պայքարի շրջանում, պահպանվեց:

Կրոնշտադի ապստամբութեանից և X համագումարը վերջանալուց հետո Լենինն իր ուղղութեանը կենտրոնացնում է նոր տնտեսական քաղաքականութեան բազմակողմանի հիմնավորման ու պարզաբանման վրա և Ժողովրդական տնտեսութեան դանադան ապարեզներում գործնական ձեռնարկումներ մշակելու վրա՝ ի

քաղաքացուհի նոր քաղաքականութեան հիմնական սկզբ-
քունքների: Մեծ նշանակութեան ունենալ են ճառերը
սլարենհարկի մասին Մոսկվայի ակադեմիայի Գ-ի
նիստում և Համառուսական կուսակցական կոնֆերեն-
ցիայի մայիսի 26-27 նիստերում, և հատկապես «Պարեն-
հարկի մասին» բրոշյուրը (Նոր քաղաքականութեան նշա-
նակութեանը և նրա սլաքմանները), ինչպես նաև ԱՊՍ
նախագը:

«Պարենհարկը, — գրում էր Լենինը, — ծայրահեղ
կարիքի, քայքայման ու պատերազմի արդյունք յուրա-
հատուկ «ոսգմական կոմունիզմից» կանոնավոր սոցիա-
լիստական միջերախոսանակման անցնելու ձևվերից մե-
կըն է»:

1921 թ. հունիս-հուլիսին Լենինը ղեկավարում է
Կոմունիստական ինտերնացիոնալի III կոնգրեսը և հան-
դես է գալիս Նոր տնտեսական քաղաքականութեան վե-
րաբերյալ ղեկուցումով: Հատուկ ուշադրութեան է նվի-
րում Լենինը գերմանական կուսակցութեան ճգնաժա-
մին, վոր ստեղծվել էր գերմանական սլրուկտարիատի
պարտութեանից հետո 1921 թ. մարտին, և համադու-
մանից հետո ղիմում է գերմանական կոմունիստներին
մի հատուկ նաժակով, վորի մեջ ընդգծում է կոմկու-
սակցութեան կողմից բանվոր դասակարգի մեջ մեծա-
մասնութեան նվաճելու անհրաժեշտութեանը: Կոնգրե-
սում Լենինը յեռանդով պաշարում է «ձախ» թեքման
դեմ, վոր քարոզում էր «սլերմանենա հեղախոխութեան»
թեորիան:

1921 թ. յերկրորդ կիսի ընթացքում և 1922 թ.
սկզբին Լենինի ուշադրութեան կենտրոնում առաջիա
դես շարունակում են մնալ Նոր տնտեսակ. քաղաքակա-

նութեան հետ կապված հարցերը («Նոր ժամանակներ,
հին սխալներ նոր ձևով», «Հոկտեմբերյան հեղախոխու-
թեան քառամյա տարեդարձի առթիվ», «Վոսիու նշանա-
կութեան մասին ալթմ և սոցիալիզմի լիակատար հաղ-
թանակից հետո» հոգվածները, Քաղլուսվարների Հա-
մառուսական II համադումարում (1921 թ. հոկտեմբե-
րին), Մոսկվայի կուսակցական կոնֆերենցիայում—
նույնպես հոկտեմբերին, Սորհուրդների IX համա-
դումարում—դեկտեմբերին արտասանած ձառերն ու
տված ղեկուցումները): Նորից և նորից վերլուծելով
Նոր տնտեսական քաղաքականութեան ելությունը և նրա
տարբերութեանը ոսգմական կոմունիզմի մեթոդներից,
մատնանշելով ալն դժվարութեաններն ու վտանգները,
վորոնք կապված են առեվտրի ադատութեան, հետեվա-
պես, նաև կալիտալիզմի ղարգացման թուլլուլութեան
հետ վորոշ սահմաններում, Լենինը բաղմակողմանիորեն
ձեվակերպում է ալն խնդիրները, վորոնք կանգնած են
կուսակցութեան առաջ տնտեսական շինարարութեան
գործում (հատկապես «սովորիլ առեվտուր անել» լո-
ղունդը), նշելով միաժամանակ, վոր Նոր տնտեսական
քաղաքականութեանը «մենք կիրառում ենք լուրջ կեր-
պով և յերկար ժամանակով, սակալն իհարկե, վոչ բնդ-
միշտ»: Սոցիալիստական շինարարութեան ձեվերի վո-
վոխութեանը վոփոխեց նաև արհմիութեանների դրու-
թեանը. ուստի Լենինը հատուկ թեղիաներում վորոշում
է արհմիութեաններին նոր խնդիրները, վորոնք բղխում
էլին Նոր տնտեսական քաղաքականութեան սլաքմանե-
րից:

1921 թ. վերջին—1922 թ. սկզբին յերեվան յեկան
Լենինի լուրջ հիւանդութեան նշանները. նա ստիպված

եր ավելի ու ավելի հաճախ ընդհատելու իր աշխատանքը:

1922 թ. մարտին Լենինը մի ճառով հանդես է գալիս մեծազարգործների համագումարի Ֆրակցիայի նիստում. այդ ճառում նա հայտարարում է, վոր կանգ է առել այն նահանջը, վոր կուսակցությանը վորոշել էր իր X համագումարում: Այս շրջանին են վերաբերում Լենինի մեծ հոգւածները—«Մարանչոյ մատերիալիզմի նշանակության մասին» և «Հրապարակախոսի դիտողություններ»: Մարտի 27—ապրիլի 2—ը կես հիվանդությունից չապաքինված Լենինի ղեկավարությամբ տեղի չե ունենում կուսակցության XI համագումարը, վորտեղ Լենինը հանդես է գալիս ԿԿ հաշվետվությամբ: Իր մեծ ճառում, վորով նա ամփոփում է Նոր տնտեսական քաղաքականության արդյունքները, Լենինը մատնանշում է, վոր անհրաժեշտ է մերձեցում ստեղծել գյուղական եկոնոմիկայի հետ, և նորից է ընդդժում, վոր «Նահանջը վերջացած է», և վոր դրա հետեւանքով կուսակցության առաջ նոր խնդիրներ են դրվում: «Տնտեսապէս և քաղաքականապէս,—գրում էր Լենինը, համագումարի նախորդակին,—Նեպոլ լիովին հնրավորություն է տալիս մեզ կառուցելու սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը»: «Ամբողջ մեխն այն է,—ասում է Լենինը Նիստը փակվելիս,—վոր այժմ առաջ շարժվենք անհամեմատ ավելի լայն և հզոր մասսայով, վոչ այլ կերպ, քան յեթե գյուղացիության հետ միասին, ապացուցելով նրան գործով, գործնական աշխատանքով, փորձով, վոր մենք սովորում ենք և կսովորենք նրան ողջել, նրան առաջ տանել»:

Լենինի հիվանդությունը—ուղեղի սկզբնորդ—չարու-

նակում էր զարգանալ: Չնայած իր հիվանդությանը, Լենինը շարունակում է գիրեկտիվներ տալ կուսակցությանն ու կոմինտերնին մի շարք կարեւորագույն հարցերի վերաբերմամբ («Մենք չափազանց թանգ վճարեցինք», «Կրկնակի ստորագատության և որինակաւության մասին»), թեւադրում է «Պրավդայի» համար հոգւածներ, գործնական նամակներ, և շատ է աշխատում ժողկոմխորհի ապարատի կազմակերպման հարցի վրա:

Շուտով, XI համագումարից հետո—այդ վերջին համագումարն էր, վորտեղ Լենինը հանդես յեկավ,—նրա հիվանդության ընթացքը վատանում է, և մայիսի 26—ին տեղի չե ունենում առաջին արշուճահոսությունը ռուսերի մէջ: Ամառվա ընթացքում Լենինը մի փոքր աւողջանում է, և աշնանը (հոկտեմբերի 2—ին) նորից անցնում է ժողկոմխորհի և ԿԿ աշխատանքներին, սակայն արդեն փոշ լիակատար չափով և կարճ ժամանակով: Ժողկոմխորհի հենց առաջին նիստում, վոր տեղի չե ունենում Լենինի նախագահությամբ, Վլադիմիր Իլյիչն անց է կացնում մի վորոշում, վորով մերժվում է Ռերկվարտի կոնցեսիան, վորի պայմաններն անընդունելի յեն համարվում Խորհրդային հանրապետության համար: Հոկտեմբերի 31—ին Լենինը ճառ է արտասանում Համ. Կենտրոնի մի նստաշրջանում, նոյեմբերի 18—ին կոմինտերնի IV կոնգրեսում ղեկուցում է «Ռուսական հեղափոխության հինգ տարին և համաշխարհային հեղափոխության հեռանկարները» թեմայով: Նոյեմբերի 20—ին Լենինն արտասանում է իր նշանավոր ճառը Մոսկվայի խորհրդի պլենումում (այդ նրա վերջին ճառն էր) և տալիս է՝ Նեպական Ռուսաստանը սոցիալիստական Ռուսաստանի վերածելու լողունքը: Լե-

ները մտադիր եր դեկուցմամբ հանդես գալու խորհուրդներին X համագումարում և ուժեղ կերպով պատրաստվում եր դրան, սակայն հիվանդության հետագա դարձացումը ստիպեց Լենինին հրաժարվելու այդ մտադրություններից:

1922 թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ յերկրորդ արյունահոսությունը ուղեղի մեջ, վոր առաջ երբերում աջ ձեռքի ու աջ վոտքի կաթված և Լենինին ըստիպում և յերկար ժամանակով անկողին ընկնել: Չնայած իր չափազանց ծանր վիճակին, Լենինը շարունակում և հոգալ կուսակցության և պետության գործերի մասին: Գրելու հնարավորություններից զրկված՝ նա ողջ տվելով բժիշկների թույլ տված յուրաքանչյուր բուպյից, թեւադրում և մտքի խորությունը ապշեցուցիչ մի շարք հոգվածներ («Մի եջ որագրից», Ինչպես պետք և մենք վերակառուցենք Բանդյուղտեսությունը», «Լավ և քիչ, բայց լավ»), վորոնք պարունակում են կարեվորադույն քաղաքական գլրեկտիվներ կուսակցության հետագա գործունեյության համար: Մատնանշելով, վոր մեղանում կա «այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և ուրավարար... սոցիալիստական հասարակություն կառուցելու համար...», Լենինն այնուհետեվ մշակում և սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի մի ամբողջ ծրագիր, վորը մատնանշում և, թե անհրաժեշտ և դեկավար դերը վերապահել պրոլետարիատին, անհրաժեշտ և դարկ տալ, ծավալել կոոպերացիան, վորպես մանր գյուղացիական անտեսության սոցիալիստական վերակառուցման հիմնական լծակ, անհրաժեշտ և ստեղծել խոշոր մեքենայական արդյունաբերություն, ելեկտրիֆիկացիա, անհաժերչտ և վերանորոգել պետական

ապարատը, պայքարել բյուրոկրատիզմի դեմ, իրագործել կուլտուրական հեղափոխությունը և այլն:

1923 թ. մարտի 9-ին տեղի յե ունենում նոր արյունահոսություն, վորից հետո Լենինը կորցնում և խոսելու ընդունակությունը: Վլադիմիր Իլյիչի դրուժյանն անհուսալի յեր թվում: Ծանր դրուժյան մեջ նրան փոխադրում են Գորկի (Մոսկվայից 30 վերստ հեռու գտնվող Նախիկին կալվածք): Յերկար դերմարդկային տանջանքներից հետո դրուժյունը մի փոքր լավանում և: Առողջանալու հույս և ծագում: 1923 թ. և 1924 թ. խորհրդային հանրապետության մեջ չի յեղել այս կամ այն հարցին նվիրված բանվորական կամ գյուղացիական մի ժողով, վորտեղ տասնյակ հարցեր տրված չլինեյին Լենինի առողջության մասին: Մինչդեռ այդ բարեկամումը միայն յերկուլթական եր. հիվանդությունը շարունակում և քայքայել Լենինի ուղեղը: 1924 թ. հունվարի 21-ին հանկարծ դրուժյունը վատթարացավ, տեղի ունեցավ նոր արյունահոսություն, և յերեկոյան 6 ժ. 50 ր. Լենինը մեռավ:

Լենինի մահը հսկայական տպավորություն գործեց ամբողջ աշխարհում: խորհրդային Միության բանվոր դասակարգը Լենինի մահվանը պատասխանեց նրանով, վոր յերկու հարյուր հազար պրոլետարներ մտան կուսակցության մեջ: Լենինի թաղումը վերածվեց մի ամենամեծ ու վիթխարի ցույցի, վորով միլիոնավոր սրտեր իրենց աճենախորունկ վիշտն արտահայտեցին մեծ առաջնորդի մահվան առթիվ: Լենինը թաղված և Մոսկվայում, Կարմիր Հրապարակում, Կրեմլի պատերի մոտ:

Լենինի ուսմունքը Մարքսի և Ենգելսի ուսմունքի շարունակութիւնն ու զարգացումն է: «Լենինիզմը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխութեան դաշըրջանի մարքսիզմն է» (Ստալին): Հատկապես շատ նոր բան տվեց Լենինը՝ նրա կողմից մանրամասն ու խորը մշակված հետեւյալ բնագավառներում.— բուրժուական-դեմոկրատական հեղափոխութիւն և պրոլետարիատի ու գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական գիկտատուրա, խորհրդային պետութիւնը, վորպէս պրոլետարիատի գիկտատուրայի ձև, գյուղացիական և հողային հարցեր, ազգային հարց, կուսակցութեան ուսմունք, պրոլետարիատի ստրատեգիան և զործերակերպը, իմպերիալիզմ և իմպերիալիստական պատերազմներ, սոցիալիզմի կոոսկրում և այլն: Լենինի ուսմունքի լավագույն շարադրանքը և ամենաճիշտ ու խորունկ մեկնարանումը տվել է Ստալինը («Լենինիզմի հարցեր») — կուսակցութեան առաջնորդը Լենինի մահից հետո: Լենինի յերկերն սկսել են լույս տեսնել դեռ նրա կենդանութեան ժամանակ: Լենինի մահից հետո 27 հատորով լույս տեսավ նրա յերկերի 2-րդ և միաժամանակ 3-րդ հրատարակութիւնը: Լենինի ամբողջ գրական ժառանգութեան լիակատար ժողովածուն կկազմի առնվազն 40 հատոր:


Լենինի կյանքի ամենամեծ գործը այն է, վոր նա ստեղծեց պրոլետարիատի կուսակցութիւնը — բայց ընկնեբրի կուսակցութիւնը և Կոմունիստական Ինտերնացիոնալը, վորոնք Մարքսի և Լենինի գրոչի տակ պայքարում են հանուն սոցիալիզմի հաղթանակի մեր յերկրում և ամբողջ աշխարհում:

Վորպէս մարդ, վորպէս անձնավորութիւն, Լենինը

հմայիչ տպավորութիւն էր գործում իր պարզութեամբ, զգայունութեամբ, իսկական ընկերական վերաբերմունքով դեպի կուսակցութեան անդամները, դեպի բանվորներն ու գյուղացիները: Նա վարակում, համակում երջըրջապատողներին իր անսպառ յեռանդով, աշխուժութեամբ, արիւթեամբ ու կենսուրախութեամբ: Նույնիսկ Լենինի քաղաքական հակառակորդները խոստովանում են, վոր նրա մեջ իսպառ բացակայում էր անձնական անախառնութեան կամ վառասիրութեան վորևէ տարր: Ճմիգբանտի թափառական կյանք վարելիս, թե՛ իշխանութեան դադաթնակետին — վորպէս պետութեան գլուխ — նա համարապէս պարզ ու համեստ կյանք էր վարում, սահմանափակվելով միայն ամենամանհրաժեշտ բաներով: Հանճարեղ միտքը Լենինի մեջ գուզարգվում, ներդաշնակում էր արտակարգ աշխատունակութեան և ճշտապահութեան հետ աշխատանքի մեջ, թրկաթի աննկուն կամքի հետ, վոր չգիտեր՝ ինչ է տառանում: Նա հաստատակամ էր, անդդովելի ինչպէս ժայռ հեղափոխական մարքսիզմը պաշտպանելու և կուսակցութեան գիծը կիրառելու ասպարիգում: Նրա գաղափարական անհաշտութեան շնորհիվ պատվաւոր ատելութիւն էլին տաժում դեպի նա անհամար թվով զանազան ոպորտունիստներ, ունիորմիստներ, անարխիստ-սինդիկալիստներ, «ձախ» և աջ ուլլոնիստներ, զանազան յերանդի հաշտվողականներ, վորոնք զգացել էլին իրենց կաշու վրա լենինյան քննադատութեան ու բանավեճի հարվածների ամբողջ ծանրութիւնը: Մարքսիզմի, կուսակցութեան, հեղափոխութեան, բանվոր դասակարգի հաղթութեան համար մղած այդ պայքարում Լենինն անողոր էր, և դեռևս

Լենին
չարունա
պերիալի
բաշքան
նոր բան
ըն ժշակ
կան-դեմ
ատի ու
կան դի
պես պր
կան և
թյան ու
ծեղակեր
տերադմ
ուսմուն
խորունկ
հարցեր
հետո : Լ
կենդան
տորով Լ
3-րդ հ
ժառանգ
նվազն 4
Լեն
ստեղծե
վիկներ
նացիոն
քարում
կրում Լ
վո

եր մինչև վերջը—մինչև խզում, մինչև «պառակտում»
և պրոլետարիատին թշնամական հայացքներ կիրառող
առանձին անձանց, խմբակների, հոսանքների վտարու-
մը կուսակցութունից : Միաժամանակ նա կարողանում
էր կուսակցության շուրջը և նրա ղեկավարության տակ
միացնել ու համախմբել այն ամենը, ինչ վոր առաջավոր
է ու հեղափոխական բանվոր դասակարգի և սոցիալիս-
տական շարժման մեջ, այն ամենը, ինչ վոր դարգացման
տվյալ շրջանում ընդունակ է առաջ շարժվելու կուսակ-
ցության մատնանշած ուղիով : Պատմությունը չգիտե
ուրիշ վորեւի և այլ մարդու, վորն այնքան հեղինակու-
թյուն, վստահություն, սեր և հարգանք վայելած լինի
ժողովրդական ամենալայն մասսաների կողմից, ինչպես
Իլյինը : Հանձին Լենինի բուրժուազիան իրավացիորեն
տեսնում է իր ամենամեծ թշնամուն : Ունենալով մաս-
սաներին հասկանալու ապկեցուցիչ հոտառություն,
բանվորների ու գյուղացիների տրամադրությունը զար-
մանալիորեն ճիշտ «չոչափելու» և վորոշելու կարողու-
թյուն, Լենինն արագ ու վստահ յեղք էր գտնում ամենա-
բարդ քաղաքական կացությունից, պարզ ու վորոշակի
լուրենդներ տալով բանվոր դասակարգին : Նրա հավատը
գեպի բանվոր դասակարգի ուժերը, մարքսիզմի գրանի-
տե պատվանդանի վրա հիմնված նրա այդ հավատն ան-
սահման էր : Յերբեք, նույնիսկ ոեակցիայի ամենախա-
վար տարիներում, Լենինը չգիտեր՝ ինչ է թեկուզ ամե-
նափոքր տարախուսանքը հեղափոխության անխուսա-
փելիության և պրոլետարիատի հաղթանակի հարցում :
Բանվոր դասակարգի ազատագրման պայքարին էր նվիր-
ված Լենինի ամբողջ կյանքը—նրա ամենավաղ որերից
մինչև վերջին վայրկյանը :



436 40 410. (5 л.)

436



ВЛ. СОРИН

В. И. ЛЕНИН

Госиздат ССР Армении
Эривань—1931

ՀՀ Ազգային գրադարան



NL0185608

